

ሆሊዮስ

ሥራዊት

مارزيج

مجلة رياضية شهرية
تصدرها جمعية الهولمتن بيروت

marzig
SPORTS MAGAZINE

السنة الثانية والاربعون - العدد ٤٢٧ - Vol. XXXXII N° 427 - 42-٢٦- SU٢١ ١٠١٤ 427





ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

14 Նոյեմբեր 2022-ին ՊԷԽՐՈՒՅԻ մէջ գումարեցաւ Հ.Յ.Գ. ուղեկից միութիւններու խորհրդաժողովը: Խորհրդաժողովը հրաւիրող Հ.Յ.Գ. բարձրագոյն մարմինէն բացի, ժողովին կը մասնակցէին՝ Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան, Հայ Օգնութեան Միութեան, Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան Կեդրոնական Վարչութիւնները, ինչպէս նաեւ՝ Հ.Յ.Գ. Բիւրոյի երիտասարդական գրասենեակի ներկայացուցիչը:

Օրակարգային հարցերու քննարկումէն առաջ ուղեկից միութիւններուն կողմէ ներկայացուեցան ընդհանուր զեկոյցներ՝ կատարուած աշխատանքներուն եւ յառաջիկայի գործունէութեան վերաբերեալ:

Խորհրդաժողովի քննարկումներուն առանցքային հարցերէն մէկը դարձաւ երիտասարդութեան թեման: Ներկաները կարելոր նկատեցին երիտասարդութեան ներգրաւումը պատասխանատու աշխատանքներու մէջ՝ իբրեւ կարելոր պայման միութիւններու գործունէութեան նոր աւիշ հաղորդելու, ազգային ապագայի համար գործիչներու նոր սերունդի կայացման համար:

Կարելոր նկատուեցաւ միութիւններու գործունէութեան ձեւերուն եւ մեթոտներուն արդիականացման խընդիրը, ինչ որ կարելիութիւն պիտի տայ ոչ միայն քայլ պահելու եւ լսելի ըլլալու, այլ նաեւ հայրենակիցները հետապնդուած նպատակներու գիտակցութեամբ վարակելու համար:

Հիմնական սեպուեցաւ քարոզչական մեթոտներու եւ աշխատանքներու արդիականացումն ու կատարելագործումը, առանց որոնց, ոչ միայն կարելի չէ հանրութեան պատշաճ կերպով ներկայացնել իրականացուող աշխատանքները, այլ նաեւ՝ զանոնք արդիւնաւետօրէն ծառայեցնել ազգային նպատակներուն:

Խորհրդաժողովը շեշտեց միութիւններու աշխա-

տանքներու համադրման անհրաժեշտութիւնը՝ բազմաթիւ ազգանպաստ նախաձեռնութիւններու ծրագրման եւ իրականացման նպատակով:

Խորհրդաժողովի քննարկումներուն մէջէն կարմիր թելի պէս կ'անցնէր հայոց գոյգ պետութիւններուն ներկայ վիճակէն բխող կատարուելիք աշխատանքներու հարցը: Ժողովականները համոզուած էին, որ այսօրուան տագնապալի իրողութիւնները ոչ թէ կրաւորականութեան պէտք է մատնեն, այլ պէտք է մղեն առաւել եռանդուն գործունէութեան՝ այն գիտակցութեամբ, որ իբրեւ ուրոյն ճակատի զինուորներ՝ Դաշնակցութեան միութիւններն ու միութեանականները ունին կարելոր առաքելութիւն:

Ըստ քննարկումներուն, որդեգրուած նպատակի եւ գործի ուղիով պէտք է հետապնդել ազգային առողջ ուժերու համախմբումը, ինչ որ միայն կրնայ լաւագոյն գրաւականը հանդիսանալ ազգային եւ պետական ճգնաժամերը յաղթահարելու ճամբուն վրայ:

Կարելորութեամբ շեշտուեցաւ, որ ազգային մշակոյթը, կրթութիւնն ու բարեսիրութիւնը, ինչպէս նաեւ ազգային գործի մէջ ներգրաւուած գիտակից ու հայրենասնուէր երիտասարդութեան առկայութիւնը լաւագոյն միջոցներ են, որոնք ամէն տեսակի բաժանարարները վերացնելով՝ կրնան ծառայել ազգի համախմբման եւ ազգային ինքնագիտակցութեան արթնացման գործին:

Անգամ մը եւս արժեւորելով կատարուած աշխատանքը՝ խորհրդաժողովը վերահաստատեց Դաշնակցութեան ուղեկից միութիւններուն ազգանուէր գործունէութիւնը անվարան շարունակելու, հայութեան անժամանցելի տեսլականներուն նոր թափով եւ անսակարկ ծառայելու յանձնառութիւնը:

Հ.Յ.Գ. ՈՒՂԵԿԻՑ

ՄԵՌՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ



ՄԱՐԶԻԿ

ՀԱՍՏՄԱՆ

42րդ Տարի, Թի 427, 80 Էջ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԱՆ յԱԶՆՈՒԹ՝ ՅՈՒՆԻՈՒՄ 2023-ԻՆ:

ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ի՞նչ կ'ընենք...

2

Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Միջ-դիւանական 10-րդ խորհրդաժողովի բացման պաշտօնական հանդիսութիւնը Պատգամ

4

8

Միջ-դիւանական 10-րդ խորհրդաժողովը շեշտեց միութենական բնականոն կեանքի վերադարձի հրամայականը

9

Նախորդ խորհրդաժողովները

15

Միջ-դիւանական 10-րդ խորհրդաժողովի աւարտին

16

Միջ-դիւանական 10-րդ խորհրդաժողովի երեկոները

20

Լիբանանի տեսարժան վայրեր

21

եւ ազգ. կառոյցներ այցելութիւն

22

Հաղորդագրութիւն

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական

Վարչութիւնը կը պատուէ Աստուծո

22

եւ Սեյլա Թճնուկեանները



Սկառուտական Երկաստղ, Ա. կարգ եւ Բ. կարգ գիրքերու վերամշակուած օրինակները՝ պատրաստ

23

ԱՆԳՐԱԳԱՐՉ

Հ.Յ.Գ.ի ուղեկից միութիւններու միօրեայ խորհրդաժողովը

24

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումի ծրագրաւորումի ժողովը

25



ՅՈՒՇԵՐ

Վկայութիւններ Հ.Մ.Ը.Մ.ի ֆութպոլի փառաւոր անցեալէն

26

ՄԱՄՆԱԳԻՒԷ ՄԱՄՆԱԳԻՒՂ 30

ՄԵՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ 74



Marzig sports magazine is published by Homenetmen Central Committee-Sevan Building, Rue 77, Sector 4, Bourj Hammoud, Beirut, Lebanon. Tel: 961 1 248043, 961 1 260117, E-mail: marzig@Homenetmen.org, P.O.Box: 80486 Bourj Hammoud, Lebanon, www. Homenetmen.org



Խմբագիր: Վիգեն Աւագեան (vicken.avakian@homenetmen.org)

Խմբագրական կազմ: Գրիգորիս Պողոսեան, Սեւան Նազարեան, Յոլեր Փանոսեան, Բաֆֆի Սիւլահեան, Սիւզի Օհանեան, Շանթ Ժամկոչեան եւ Սիրվա Ալավերսեան:

Վարչական կազմ: Աբօ Մոսիկեան, Սիրվա Սաղրեան, Վարդուկ Ծրոնզլեան, Վարդան Քասնիկեան, Տիրան Շահինեան եւ Եղիա Քիչկեան:

Էջադրում եւ ընդհանուր ձեւաւորում: Աբօ Պալեան, Կողբի պատրաստութիւն: Y Concept International, Գրաշարութիւն: Շողիկ Պոյանեան, Տպագրութեան պատրաստութիւն: Photogravure Paklayan, Տպագրութիւն: Համազգայինի «Վանե Սեթեան» սպարան, Պէյրուք, Լիբանան:

Բաժանորդագրութիւն: «Մարզիկ» կը հասնի աշխարհի 25 երկիրներու բաժանորդներու: Տարեկան բաժանորդագրութեան սակ ներդրած է Լիբանան 40.000 Լ.Ն. Միջին Արեւելեան եւ Եւրոպական երկիրներ 65 \$, Մ. Նահանգներ եւ Աւստրալիա 75 \$: Լիբանանի մէջ թերթին հաստատման սակն է 5000 Լ.Ն.: Յրում: «Մարզիկ»ի ցրուումը Լիբանանի մէջ կը կատարուի յատուկ ցրուիչով (նեռ. 71/239209): Թերթը կարելի է ստանալ նաեւ «Համազգային»ի գրաստանութիւն: Լիբանանէն դուրս թերթը կը ստացուի «Liban post»ի միջոցով:

«Մարզիկ» կը հրատարակուի Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ - Հասցէ: «Սեւան» շէնք, թիւ 77 փողոց, թիւ 4 հաստաւ, Պուրճ Համուտ, Պէյրուք, Լիբանան 9611248043, 9611260117 marzig@Homenetmen.org Homenetmen - Հ.Մ.Ը.Մ. www.Homenetmen.org





Խմբագրական

Ի՞ՆՉ Կ'ԸՆԵՆՔ...

(ԻՐԱՊԵՍ ՅԱՂԹԵԼՈՒ ՀԱՄԱՐ)

«Յաղթելու ենք»ը նշանաբան ընտրեցինք 2020-ին, Արցախեան 44-օրեայ պատերազմին համար:

«Յաղթելու ենք» գոչեցինք եւ գարուն տարիքի հազարաւոր զինուորականներ ու կամաւորներ պատերազմի դաշտ առաջնորդեցինք՝ արիաբար դէմ դնելու համար ազերի, թուրք ու վարձկան զինեալ ուժերու:



«Յաղթելու ենք» յայտարարեցինք աշխարհով մէկ եւ ամբողջական զօրաշարժի ենթարկեցինք համայն հայութիւնը՝ քարոզչական, տեղեկատուական, քաղաքական, դիւանագիտական եւ նիւթական աջակցութիւն ապահովելու համար հերոսական մեր բանակին եւ անոր կողքին մարտնչող մեր ժողովուրդին:

«Յաղթելու ենք»ը դարձաւ առաջնորդող նպատակը մեր խօսքին, մտածումին եւ գործին, մինչեւ որ 9 Նոյեմբեր 2020-ի նուաստացուցիչ օրը, ազգովին մենք մեզ գտանք բոլորովին տխուր իրականութեան մը դէմ յանդիման՝ զինուորապէս պարտուած, քաղաքականապէս անձնատուր եղած եւ բարոյապէս վարկաբեկուած:

Թշնամին հասաւ Սիւնիքի եւ Գեղարգունիքի դռները: 10 հազարէ աւելի ընտանիքներ դարձան անօթեւան, մինչ հազարաւոր ուրիշներ գաղթական դարձան իրենց իսկ հայրենիքին մէջ՝ Շուշիէն, Հատրութէն եւ բռնագրաւեալ այլ շրջաններէն տեղափոխուելով Ստեփանակերտ, Երեւան թէ այլուր:

Խոցուեցաւ հայ ժողովուրդին արժանապատուութիւնը, փճացաւ 30 տարուան պայքարին արդիւնքը: Ունեցանք հայաթափուող Արցախ, արտագաղթող Հայաստան: Հասանք հոն, ուր կը կարծէինք երբեք չէինք կրնար հասնիլ՝ նուաստացումի եւ տկարութեան գագաթնակէտը: Հասանք հոն, ուր Երեւանի իշխանութիւնները ճանչցան Ազրայէյճանի հողային ամբողջականութիւնը, անտեսելով Արցախի ինքնորոշման իրաւունքը եւ այդ իրաւունքին ձեռք բերման համար 30 տարի ի գործ դրուած համահայկական ճիգն ու ներդրումը:

9 Նոյեմբեր 2020-ի խայտառակ պարտութիւնը հայութիւնը առաջնորդեց յաջորդական նոր պարտութիւններու՝ քաղաքական, դիւանագիտական եւ ռազմական ճակատներու վրայ: Իբրեւ արդիւնք, Բերձորն ու Աղանօսն յանձնուեցան թշնամիին, Սիւնիքի սահմանային բարձունքները գրաւուեցան ազրայէյճանական ուժերու կողմէ: Թշնամին Սեպտեմբեր 2022-ին ներխուժեց հայրենի հող, պահանջեց

«Չանգեզուրի միջանցքը»՝ փակելով Արցախը Հայաստանին կապող Լաչինի անցքը:

Երբ կը յիշենք այս բոլորը եւ կը փորձենք դասեր քաղել անցնող տարիներու տխուր փորձառութենէն, պատճառ չունինք չկրկնելու 44-օրեայ պատերազմին նշանաբանը՝ «Յաղթելու ենք»ը, սակայն այս անգամ առանց սուտի եւ կեղծիքի:

Այո՛, «Յաղթելու ենք» ազերի-թուրքին եւ հայութեան բոլոր թշնամիներուն, բայց անոնցմէ առաջ՝ «Յաղթելու ենք» մենք մեզի՛, մեր յուսահատութեան, պարտուողականութեան եւ նահանջականութեան: «Յաղթելու ենք» անձնատուութեան եւ պարտուածի հոգեբանութեան: «Յաղթելու ենք» մեր ցաւին ու դառնութեան, մեր յուսախաբութեան եւ յոռետեսութեան:

Մենք չյաղթեցինք Արցախեան 44-օրեայ պատերազմը: Իսկ յաջորդող պատերազմները եւս չպարտուելու համար ի՞նչ ըրինք 9 Նոյեմբեր 2020-էն ետք: Պատասխանը կրնայ տալ 13 Սեպտեմբեր 2022-ի ներխուժումը, ուր դարձեալ կորսնցուցինք հող ու զինուոր: Ունեցանք գերիներ եւ անյայտ կորսուածներ:

Իսկ ի՞նչպէս կը պատրաստուինք յաջորդ պատերազմին: Արդե՞օք կը պատրաստուինք...: Իսկ եթէ պատերազմի չենք պատրաստուիր, ի՞նչպէս կ'ապրինք մեր առօրեան, որ ինքնին պատերազմ է՝ քաղաքականութեամբ եւ դիւանագիտութեամբ, զիտութեամբ եւ արդիւնաբերութեամբ:

9 Նոյեմբեր 2020-էն առդին ի՞նչ կ'ընենք անցեալի մեր թերութիւնները սրբագրելու համար: Ի՞նչ կ'ընենք ազգային մեր միաբանութիւնն ու արժանապատուու-





թինը վերականգնելու համար: Ի՞նչ կ'ընենք բանակաշինության եւ զինուորական ճարտարարուեստի զարգացման համար: Ի՞նչ կ'ընենք Արցախի հզորացման եւ վերաբնակեցման համար: Ի՞նչ կ'ընենք Հայաստան-Արցախ ռազմավարական կապերու ամրապնդման եւ Հայաստան-Արցախ-Սփիւռք եռամիասնութեան վերահաստատման համար: Կարճ. ի՞նչ կ'ընենք իրապէս յաղթելու համար:

Արդար է նման հարցումներ ուղղել միութեան մը կողմէ, որ Արցախեան առաջին եւ երկրորդ պատերազմներուն 12 նահատակներ տուաւ իր շարքերէն: Միութիւն մը, որուն Կեդրոնական Վարչութեան անդամը 1991-ին արհիւնը միախառնեց հայրենի Սուրբ հողին:

Հայկական բանակի դրօշին տակ, բազմաթիւ Հ.Մ.Բ.Մ.ականներ խիզախօրէն մասնակցեցան Արցախեան պատերազմներուն: Շատերը հերոսացան, ուրիշներ վիրաւորուեցան, իսկ շատերն ալ հրաշքով փրկուած ըլլալու սուկումը ապրեցան:

Իսկ ինչ խօսք 30 տարի Հ.Մ.Բ.Մ.ի համահայկական ընտանիքին Արցախի ի նպաստ նախաձեռնութիւններուն եւ նիւթական լայն օժանդակութիւններուն մասին, մասնաճիւղ ստեղծելու եւ պահելու հսկայական ճիգերուն մասին:

Այս բոլորէն ետք, այս բոլորին համար, իսկապէս «Յաղթելու ենք», որպէսզի արժանի դառնանք մեր նահատակներուն, որոնք չապրեցան, որպէսզի մենք ապրինք:

«Յաղթելու ենք», վերատիրանալու համար այն հողին ու հայրենիքին, որուն զաւակներն ենք եւ որուն համար ապրելու եւ եթէ հարկ ըլլայ... մեռնելու պատրաստ են շատերը:

«Յաղթելու ենք», մեր հին ու նոր թշնամիներուն պարտադրելու համար մեր խաղաղութիւնը, մեր ազգային տեսլականներուն առաջնորդող քաղաքական մեր կամքն ու վարքագիծը:

«Յաղթելու ենք» նաեւ ու մանաւանդ, որպէսզի ունենանք վերականգնող Արցախ, հզօր Հայաստան եւ ամուր Սփիւռք՝ համահայկական մեր մեծ տեսլականներուն հասնելու կամքով ու հաւատքով:

Որպէսզի ունենանք անձնատուական նոր համաձայնութիւններ մերժող հայութիւն, արժանապատիւ իշխանութիւն եւ իսկապէս խաղաղ հայրենիք:

Ու որպէսզի չունենանք նոր պարտութիւններ, նոր կորուստներ եւ նոր զիջումներ, այլ՝ համազգային վերականգնումի մեր ճիգով, ամէն ընկրկումէ ետք մեր մէջ ուժ եւ կարողութիւն գտնելու մեր ջանքով, կարենանք մեր ճակատագիրին անհիւը շրջել այնպէս մը, որ ազգովին երաշխաւորենք Արցախի ժողովուրդին անվրտանգութիւնն ու ինքնորոշման իրաւունքը, կանխենք Հայաստանի թրքացումն ու տկարացումը, ինքնիշխան, ամուր պետականութեամբ հզօր հայրենիք եւ անպարտելի ժողովուրդ ունենալու արդար սկընկալութեամբ:





Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՄԻՋ-ԴԻՒԱՆԱԿԱՆ 10-ՐԴ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ ԲԱՑՄԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ

ՀՄԸՄ-ի Կեդրոնական վարչութեան կազմակերպութեամբ, Հինգշաբթի, 10 Նոյեմբեր 2022-ի երեկոյեան 7.30-ին, Պէյրութի արուարձաններէն Զալքայի «Ուորուիք Սթոն 55» պանդոկի սրահին մէջ տեղի ունեցաւ ՀՄԸՄ-ի միջ-դիւանական 10-րդ խորհրդաժողովին պաշտօնական բացումը՝ ներկայութեամբ հոգեւոր առաջնորդներու, պաշտօնական հիւրերու, ՀՄԸՄ-ի Կեդրոնական վարչութեան ներկայ եւ անցեալի անդամներու, ՀՄԸՄ-ի Լիբանանի Շրջանային վարչութեան անդամներու, Լիբանանի մասնաճիւղերու վարչական եւ խմբապետական կազմերու, ինչպէս նաեւ խորհրդաժողովին մասնակից 22 շրջաններու ներկայացուցիչներու:

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԻՒՐԵՐԸ

Հանդիսութեան իրենց ներկայութեամբ ՀՄԸՄ-ի մեծ ընտանիքը պատուեցին Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսի ներկայացուցիչ՝ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Շահէ Արք. Փանոսեան, Հայ Կաթողիկէ Պատրիարքութեան Պէյրութի Թեմի Օգնական Եպիսկոպոս Գէորգ Եպս. Ասատուրեան, Միջին Արեւելքի Աւետարանական Եկեղեցիներու Միութեան նախագահ վերապատուելի Փօլ Հայտոսթեան, Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Մկրտիչ Մկրտիչեան, Հայկական Երեսփոխանական Պլոքի եւ Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ՝ երեսփոխան Յակոբ Բագրատունի, երեսփոխան Յակոբ Թերզեան, նախարար Ճորճ Պուչիբեան, նախկին նախարարներ Աւետիս Կիտանեան եւ Վարդինէ Օհանեան-Գէ-



որգեան, Պուրճ Համուտի եւ Այնճարի քաղաքապետներ Մարտիկ Պօղոսեան եւ Վարդգէս Խօջեան, Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի անդամներ՝ Պարոյր Տէր Ղուկասեան, Ալպէր Պալպանեան եւ Յակոբ Հաւաթեան, Համագ-գայինի Կեդրոնական վարչութեան ատենապետ Զաքար Քէշիշեան, ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան անդամ Նելլի Վէթիլեան, ՀՄԸՄ-ի Կեդրոնական վարչութեան ատենապետ Միսաք Նաճարեան եւ «Ազդակ» օրաթերթի խմբագիր Շահան Գանտաճարեան:

ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ ԲԱՑՈՒՄԸ ԵՒ ԲԱՑՄԱՆ ԽՕՍՔԸ

Հանդիսութեան բացումը կատարուեցաւ Լիբանանի եւ Հայաստանի քայլերգներով:

Բացման խօսքով հանդէս եկաւ քոյր Ծովակ Թագեան-Թիւթէլեան: Ան ըսաւ, որ միջ-դիւանական խորհրդաժողովները ընթացք առած են 1985-ին եւ այնուհետեւ չորս տարուան յաջորդականութեամբ տեղի ունեցած են ՀՄԸՄ-ի Կեդրոնական վարչութիւններու քառամեայ գործունէութեան կիսուն, արժե-





ւորելու համար առաջին երկու տարւան աշխատանքները եւ հունաւորելու համար յաջորդ երկու տարուան ծրագիրները:

Քոյրը նշեց, որ միջ-դիւանական 10-րդ խորհրդաժողովը սկզբունքով տեղի պիտի ունենար երկու տարի առաջ՝ 2020-ին, որովհետեւ նախորդը կատարւած էր 2016-ին, Կիպրոս: Սակայն, քորոնայի համաճարակին ծանօթ պատճառներով յետաձգուեցաւ այս թուականին: «Ի դէպ, Լիբանանի շրջանը երկրորդ անգամն է, որ կը հիւրընկալէ միջ-դիւանական խորհրդաժողով: 21 տարի առաջ, 2001-ին, համա-Հ.Մ.Ը.Մ.ական 6-րդ մարզախաղերու օրերուն, ան հիւրընկալած է միջ-դիւանական 5-րդ խորհրդաժողովը», ըսաւ ան:

Շարունակելով, քոյրը նկատել տրւաւ, որ «2001-էն 2022 շատ բան փոխւած է Հ.Մ.Ը.Մ.ի, Լիբանանի եւ աշխարհի պատմութեան մէջ: Հ.Մ.Ը.Մ.ը մեծցած է թիւով ու որակով: Լիբանանի շրջանը կրած է Մայրիներու երկրին ահաւոր ցնցումները, իսկ մեր հայրենիքն ու աշխարհը անցած են ծանր փորձութիւններու ընդմէջէն: Հետեւաբար,

այս խորհրդաժողովին գումարումը Լիբանան, այսօր, այս պայմաններուն մէջ, յատուկ նշանակութիւն եւ կարեւորութիւն ունին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան համար, որուն նստավայրը եւ դիւանը կը գտնուին այստեղ»:

ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՍԲԸ

Յաջորդ խօսքը արտասանեց խորհրդաժողովի հիւրընկալ շրջանի՝ Հ.Մ.

Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Հայկ Թապազեան: Ան բարի գալուստ մաղթեց աշխարհի չորս ծագերէն Լիբանան ժամանած Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցիչներուն եւ յայտնեց, որ «Մարզական աշխարհէն ներս երբ սկսած են տիրել նիւթականն ու արհեստավարժութիւնը, երբ կազմակերպական աշխատանքները կը պահանջեն աւելի մեծ զոհողութիւններ, պարտաւոր ենք ծրագրել նոր միջոցներ ու





Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ



կարելիություններ, շարունակելու համար Հ.Մ.Ը.Մ.ի երթը՝ նորօրեայ ջահակիրներով ու նուիրեալներով, վահան դառնալու համար սփիւռքեան պայմաններու մէջ ապրող հայութեան դիմադրաւած ձերմակ ջարդին»:

Եղբ. Թապաղեան շեշտեց, որ ժամանակն ու պայմանները տկարներուն չեն խնայեր: Ան ըսաւ, որ Լիբանանի մէջ գործող Հ.Մ.Ը.Մ.ը, իր 10 մասնաճիւղներով, իր անդամակցած Ողիմպիական Կոմիտէով եւ 11 ֆեատրասիոններով, կը շարունակէ գործել՝ հակառակ բազում դժուարութիւններու, երբեմն անկարելին կարելի դարձնելով, Լիբանանը հարուածող տնտեսական ամենավատ կացութեան մէջ: «Տարիներու վրայ երկարող քաղաքական վերիվայրումները, քորոնան, Պէյրութի նաւահանգիստին պայթումն ու տնտեսական տագնապները ապրեցանք ու կ'ապրինք, սակայն իրերայաջորդ պատասխանատուներու թափած ճիգերով, որոնք անսակարկօրէն տուին իրենց ժամանակէն, մտքէն, հոգիէն ու սրտէն, բարձր մնաց ու կը մնայ Հ.Մ.Ը.Մ.ի դրօշը: Ոտքի՛ եմք, ու ոտքի պիտի մնանք», եզրափակեց ան:

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏՆԵԱՊԵՏԻՆ ՊԱՏԳԱՄԸ

Հանդիսութեան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան պատգամը փոխանցեց ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեան: Իր պատգամին սկիզբը, եղբայրը նկատել տուաւ, որ անցնող երկու տարիներուն, քորոնայի համաճարակին

ստեղծած անշարժութիւնը եւ Միջին Արեւելքի ընկերա-քաղաքական ծանր պայմանները իրենց լուրջ հետեւանքները ունեցան մեր ազգային կեանքին եւ կառոյցներու գործունէութեան վրայ: Բոլորս ապրեցանք դժուարին պահեր, սակայն երբեք չկորսնցուցինք մեր կամքն ու հաւատքը՝ կառչած մնալու մեր արժէքներուն եւ անխափան շարունակելու մարդակերտման ու հայակերտման մեր աշխատանքները:

Եղբ. Նաճարեան յայտնեց, որ «Իբրեւ հաւաքական կեանքի կարեւոր դերակատար ու մասնակից, Հ.Մ.Ը.Մ. եւս ապրեցաւ դժուարին պահեր, ունեցաւ կորուստներ եւ դժուարութիւններ, բայց 104-ամեայ իր փորձառութեամբ ան շարունակեց իր առաքելութեան ջահը բարձր պահել: Առանց յանձնուելու կացութեան, Հ.Մ.Ը.Մ. յանձնառու մնաց իր հիմնադիրներու տեսլականին գործադրութեան, անսակարկ կերպով նուիրելով պատանի ու երիտասարդ սերունդի դաստիարակութեան վեհ գործին, ամէնուրեք պատրաստելով տիպար քաղաքացիներ եւ հայեր: Հ.Մ.Ը.Մ. եղաւ աշխարհի հինգ ցամաքամասերուն մէջ եւ իր բոլոր կարողութիւններով լծուեցաւ հայ կեանքի կազմակերպման գործին»:

Ընթացք առնող միջ-դիւանական խորհրդաժողովին մասին խօսելով, եղբ. Նաճարեան նշեց, որ խորհրդաժողովը կոչուած է քննելու միութեան ներկայ իրավիճակը, լսելու շրջաններու դժուարութիւնները, անցնող երեք տարիներուն միութեան աշխատանքները եւ

իրագործումները եւ յառաջիկայի գործունէութիւններու մանրամասնութիւնները, մասնաւորաբար արժեւորելու համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերը, որոնք տեղի ունեցան Յուլիսին, երիտասարդական համագումարը եւ շատ սպասուած համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումը, 2023-ի ամրան:

Իսկ թէ ինչո՞ւ խորհրդաժողովի կազմակերպման համար նկատի առնուած է Լիբանանը, եղբ. Նաճարեան հաստատեց. «Կեդրոնական Վարչութիւնը համա-Հ.Մ.Ը.Մ.ական այս ձեռնարկը Լիբանանի մէջ կազմակերպելով կ'ուզէ շեշտել հայրենիքի կողքին Սփիւռքի եւ յատկապէս Միջին Արեւելեան գաղութներու եւ այս պարագային՝ Լիբանանի առանձնայատուկ դերը համահայկական մեր ծրագրիներուն մէջ: Միջին





Արեւելեան գաղութները, մանաւանդ Լիբանանը, Հ.Մ.Ը.Մ-ի համար եղած են ու կը մնան կազմակերպական եւ գաղափարական ուժի անսպառ աղբիւրներ, որոնց պէտք է գուրգուրալ ամէն գնով, կարելի բոլոր միջոցներով», ընդգծեց ան (Խօսքին ամբողջութիւնը տեսնել էջ 8):

ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԽՕՍՔԸ

Հանդիսութեան փակման խօսքով հանդէս եկաւ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Շահէ Արք. Փանոսեան: Ան ուրախութեամբ ողջունեց Հ.Մ.Ը.Մ-ի համահայկական ընտանիքին անդամները եւ մաղթեց, որ նուիրեալ աշխատանքով աւելի եւս ծաղկի Հ.Մ.Ը.Մ-ը, որպէսզի մեր ժողովուրդի կարիքներէն



ՄԱՐՁԻԿ, 42ԴԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 427



բխած տեսակաւոր աշխատանքներն ու հեռանկարները իրողապէս հասնին իրենց պսակումին:

Առաջնորդ Սրբազանը յայտնեց, որ ինք պարտականութիւնը ունի Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին Հայրական օրհնութիւնը եւ սրտագին ողջոյնները փոխանցելու խորհրդատու դրոշմ մասնակիցներուն: «Բոլորդ ալ գիտէք, որ Վեհափառ Հայրապետը այս տարի մեր ուշադրութիւնը սեւեռած է Սփիւռքի վրայ, որպէսզի հաւաքական ճիգով առաջը առնենք մեր կեանքէն ներս յառաջացած ակներեւ շեղումներուն: Անցնող անկումային քանի մը տարիներուն, եւ Արցախեան ու Հայաստանեան տխուր իրադարձութիւններու հետեւանքով, շատ բան խախտեցաւ մեր առօրեային մէջ: Արդարեւ, ընդհանուր նահանջի հոգեբանութիւն մը սկսաւ բոյն դնել բոլորին սրտերուն մէջ», յայտնեց Առաջնորդը եւ շարունակեց. «Սփիւռքի տարուան առիթով Վեհափառ Հայրապետը բոլորիս կը թելադրէ նոր հոգածութեան արժանացնել մեր համահայկական վիճակը եւ վերագասաւորել մեր աշխատանքները, որպէսզի մեր զաւակներուն կեանքը դարձեալ ուղղուի դէպի վերելք»:

Շահէ Արք. նաեւ շեշտեց, որ մեր ժողովուրդը հաւաքելու փորձ պէտք է կատարենք: Գլխաւորաբար հայ երիտասարդութիւնը շարժումի մէջ պահենք, որպէսզի սփիւռքահայ մեր կեանքը դարձեալ ոգեւորուի: «Բարեբախտաբար նոր սերունդը լաւ կը ճանչնայ Հ.Մ.՝

Ը.Մ-ը,- ընդգծեց Սրբազանը,- կը լսէ անոր ձայնը, կը հետեւի անոր կանչին: Ուստի, հանրանուէր ու բեղուն ծառայութիւն կը սպասէ Հ.Մ.Ը.Մ-էն: Ի սրտէ կը մաղթենք, որ ան շարունակէ ըլլալ մեր երիտասարդութեան ժամադրաւայրը եւ Հ.Մ.Ը.Մ-ը, իր կարգին, իբրեւ համահայկական կառույց, շարունակէ իր նպաստը եւ մասնակցութիւնը բերել հայ աշխարհի ինքնութիւնը պահող ու պաշտպանող համահայկական մեր ճիգերուն», ըսաւ ան:

ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐԸ ԵՒ 104-ԱՄԵԱԿԻ ՏԵՍԱՆԻՒԹԸ

Այս առիթով կիրարկուեցաւ գեղարւեստական պատշաճ յայտագիր. քոյր Կասիա Էճիտեան նուազեց տուտուկով, իսկ եղբ. Գօգօ Առնելեան՝ սաքսօֆոնով: Ցուցադրուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի 104-ամեայ երթը ներկայացնող տեսերիզ մը, որ Կեդրոնական Վարչութեան քարոզչական յանձնախումբին կողմէ պատրաստուած էր այս խորհրդատու դրոշմի համար:

Դիմատետրի էջով աշխարհին ուղղակի սփռուող փակման հանդիսութիւնը իր աւարտին հասաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:

Հանդիսութեան յաջորդեց պաշտօնական հիւրասիրութիւն:

(Լուսանկարները Մեակ Սաղապարեանի)





ՊԱՏՊԱՄ

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԵՒ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՈՒԺԻ ՄԵՐ ԱՂԲԻՒՐՆԵՐՈՒՆ ՊԵՏՔ Է ԳՈՒՐԳՈՒՐԱԼ ԱՄԷՆ ԳՆՈՎ, ԿԱՐԵԼԻ ԲՈԼՈՐ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ՎԱԶԷՆԱՃԱՐԵԱՆԻ ՊԱՏԳԱՄԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ ՄԻՋ-ԴԻՒԱՆԱԿԱՆ 10-ՐԴ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ)

Անցնող երկու տարիներուն, քորոնայի համաճարակին ըստեղծած անշարժութիւնը եւ Միջին Արեւելքի ընկերա-քաղաքական ծանր պայմանները իրենց լուրջ հետեւանքները ունեցան մեր ազգային կեանքին եւ կառուցներու գործունէութեան վրայ: Բոլորս ապրեցանք դժուարին պահեր, սակայն երբեք չկորսնցուցինք մեր կամքն ու հաւատքը՝ կառուած մնալու մեր արժէքներուն եւ անխափան շարունակելու մարդակերտման ու հայակերտման մեր աշխատանքները:



ղի ունեցան Յուլիսին, երիտասարդական համագումարը եւ շատ սպասուած համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումը, 2023-ի ամրան:

Այս խորհրդաժողովը կը յատկանշուի իր մասնակից շրջաններու եւ ներկայացուցիչներու թիւով, նաեւ այն իրողութեամբ, որ առաջին անգամ ըլլալով նման խորհրդաժողովի մը կը մասնակցին Շուէտի նորաստեղծ Օրէպրուի եւ Արցախի ու Թիֆլիսի մասնաճիւղերը:

Իբրեւ հաւաքական կեանքի կարեւոր դերակատար ու մասնակից, Հ.Մ.Ը.Մ. եւս ապրեցաւ դժուարին պահեր, ունեցաւ կորուստներ եւ դժուարութիւններ, բայց 104-ամեայ իր փորձառութեամբ շարունակեց իր առաքելութեան ջանքերը պահել: Առանց յանձնուելու կացութեան, Հ.Մ.Ը.Մ. յանձնառու մնաց իր հիմնադիրներու տեսլականին գործադրութեան, անսակարկ կերպով նուիրուելով պատանի ու երիտասարդ սերունդի դաստիարակութեան վեհ գործին, ամէնուրեք պատրաստելով տրպար քաղաքացիներ եւ հայեր: Հ.Մ.Ը.Մ. եղաւ աշխարհի հինգ ցամաքամասերուն մէջ եւ իր բոլոր կարողութիւններով լծուեցաւ հայ կեանքի կազմակերպման գործին:

Կեդրոնական վարչութիւնը համա-Հ.Մ.Ը.Մ.ական այս ձեռնարկը Լիբանանի մէջ կազմակերպելով կ'ուզէ շեշտել հայրենիքի կողքին Սփիւռքի եւ յատկապէս Միջին Արեւելեան գաղութներու եւ այս պարագային՝ Լիբանանի առանձնայատուկ դերը համահայկական մեր ծրագիրներուն մէջ: Միջին Արեւելեան գաղութները, մանաւանդ Լիբանանը, Հ.Մ.Ը.Մ.ի համար եղած են ու կը մնան կազմակերպական եւ գաղափարական ուժի անսպառ աղբիւրներ, որոնց պէտք է գուրգուրալ ամէն գնով, կարելի բոլոր միջոցներով:

Կազմակերպումը, սակայն, կը պահանջէ ծրագրում, հետեւողական աշխատանք եւ կատարուած գործի մնայուն արժեւորում, որուն համար, ահաւասիկ, Հ.Մ.Ը.Մ. կը կատարէ միջ-դիւանական 10-րդ խորհրդաժողովը, մասնակցութեամբ աշխարհասփիւռ իր կառուցի 26 շրջաններէն 22-ին ներկայացուցիչներուն:

Հ.Մ.Ը.Մ. նման խորհրդաժողովներ կազմակերպելով կը վերահաստատէ նաեւ, որ Հ.Մ.Ը.Մ.ը միայն սկառուտութիւն չէ, միայն մարզական խումբերու հաւաքականութիւն չէ, այլ կազմակերպական տարածուն ցանցով կառուց է: Այս խորհրդաժողովը, ինչպէս նախկինները, պիտի ամրապնդեն Հ.Մ.Ը.Մ.ի համահայկական կառուցի շրջաններուն փոխադարձ յարաբերութիւնները, պիտի սերտացնեն կապերը շրջաններու միջեւ եւ պիտի կատարեն փորձառութիւններու փոխանակում, միաժամանակ ստեղծելով եղբայրական յատուկ կապ մասնակիցներու միջեւ, ինչ որ կը հանդիսանայ Հ.Մ.Ը.Մ.ի աշխատանքներու յաջողութեան գաղտնիքներէն մէկը:

Այսօր, պաշտօնական այս հանդիսութեամբ ընթացք առնող միջ-դիւանական 10-րդ խորհրդաժողովը կոչուած է քննելու միութեան ներկայ իրավիճակը, լսելու շրջաններու դժուարութիւնները, անցնող երեք տարիներուն միութեան աշխատանքները եւ իրագործումները եւ յառաջիկայի գործունէութիւններու մանրամասնութիւնները, մասնաւորաբար արժեւորելու համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերը, որոնք տե-

Հ.Մ.Ը.Մ.ը եղաւ Եռագոյնի պահապանը, որ իր պատմութեան առաջին հարիւրամեակին Սփիւռքը կապեց հայրենիքին:

Հ.Մ.Ը.Մ.ը պիտի մնայ Եռագոյն դրօշին պահապանը յաջորդ հարիւրամեակին, տարածելու զայն համայն աշխարհին: Կեցցէ՛ Հ.Մ.Ը.Մ.ը եւ կեցցէ՛ Հ.Մ.Ը.Մ.ը ծնող ու պահող հայրութիւնը:





Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

**ՔՈՐՈՆԱՅԻ ՀԱՄԱՃԱՐԱԿԻ
ԵՐԵՔ ՏԱՐՈՒԱՆ
ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԷՆ ԵՏՔ՝**



ՄԻԶ-ԴԻԲԱՆԱԿԱՆ 10-ՐԴ ԽՈՐՀՐԴ-ԱԺՈՂՈՎԸ ՇԵՇՏԵՑ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԲՆԱԿԱՆՈՆ ԿԵԱՆՔԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ

Աշխարհը երեք տարի ապրեցավ անբնական պայմաններում մէջ: Քորոնայի համաճարակը մահեր խլեց, երկիրներ անդամալուծեց, մարդիկը տուններում մէջ «քանտարակեց» եւ հաւաքական կեանքի վարժութիւններէն հեռացուց:

Բոլորին նման, Հ.Մ.Ը.Մ. եւս կրեց քորոնայի համաճարակին ծանր հետեւանքները.- միութիւնը սիրելի անդամներ կորսնցուց, ակումբները փակուեցան, սիտուրական եւ մարզական կեանքը կանգ առաւ:

Առցանց գործունէութիւնը չկարողացաւ փրկել կացութիւնը: Պակսեցաւ մթնոլորտը, միութենական հարստագործութիւնը եւ քով-քովի ըլլալու Հ.Մ.Ը.Մ.ական ջերմութիւնը:

2022-ի գարնան, բարեբախտաբար, կացութիւնը սկսաւ վերադարձնալ բնականոն հուն: Երեք տարւան մէջ առաջին անգամ ըլլալով միութիւնը կազմակերպեց Ֆիզիքական ներկայութեամբ համա-Հ.Մ.Ը.Մ.ական ձեռնարկ: Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 11-րդ մարզախաղերը Հայաստանի մէջ համախմբեցին 850 մարզիկ-մարզիկուհիներ եւ «Հրաշք» խաղերու մասնակիցներ:

Այս բոլորէն ետք եւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական 12-րդ բանակումէն առաջ, բնական է, որ միութեան կազմակերպական կառոյցը «ինքզինք հաւաքէր», վերակազմակերպուէր, նոր պայմաններում ընդառաջ նոր առաջնահերթութիւններ ճշդէր եւ մինչեւ Պարզամաւորական յաջորդ ժողով (Հոկտեմբեր 2023) միութեան գործունէութեան ուղին գծէր:

Իսկ այս բոլորը կատարելու համար անհրաժեշտ էր ոչ այլ բան՝ քան... միջ-դիւանական ժողով, որ սկզբունքով պէտք է գումարուէր տարի մը առաջ, երկու Պարզամաւորական ժողովներու միջեւ ինկած ժամանակաշրջանի կիսուն:

Մէկ տարուան ուշացումով, միջ-դիւանական խորհրդածողովը, 10-րդը միութեան պատմութեան մէջ, գումարուեցաւ 11-13 Նոյեմբեր 2022-ին, Պէյրութի մէջ, Լիբանան:





Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ



ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԲԱՑՈՒՄԸ

Դիւանական խորհրդաժողովներու պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով, 10-րդ խորհրդաժողովը ունեցաւ բացման պաշտօնական հանդիսութիւն, որուն մասնակցեցան հոգեւոր առաջնորդներ, ազգային, կուսակցական եւ միութեանական պատասխանատու ղեկավարներ:

Հանդիսութիւնը տեղի ունեցաւ Պէյ-րուսի արուարձաններէն Զալքայի «Ուորուիք Սթոն 55» պանդոկի սրահին մէջ, Հինգշաբթի, 10 Նոյեմբեր 2022-ի երեկոյեան ժամը 7.30-ին եւ ուղղակիօրէն սրբուրբեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի դիմատետրի էջով:

(Բացման պաշտօնական հանդիսութեան մասին տեսնել առանձին, էջ 4-7):

ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ ԱՌԱՋԻՆ ՕՐՈՒԱՆ ՆԻՍՏԵՐԸ

Բացման պաշտօնական հանդիսութեան օր մը ետք, Ուրբաթ, 11 Նոյեմբեր 2022-ի առաւօտեան ժամը 10-ին, խորհրդաժողովին նիստերը ընթացք առին պանդոկի ժողովարահին մէջ, ներկայութեամբ միութեան 8 Շրջանային եւ 14 Մեկուսի շրջաններէն ժամանած 31 ներկայացուցիչներու, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամներու եւ հիւրընկալ երկրի՝ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի

Շրջանային Վարչութեան անդամներու (անկախ՝ խորհրդաժողովի մասնակից դիւանի անդամներէն):

Խորհրդաժողովին բացումը կատարեց եւ ներկաներուն բարի գալուստ մաղթեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեան: Ան ուրախութիւն յայտնեց, որ փորձառու ղեկավարներու կողքին նոր ղեկավարներ եւս կը մասնակցին խորհրդաժողովին: Եղբ. Նաճարեան ըսաւ, որ խորհրդաժողովին մասնակից շրջաններուն թիւը նախորդէն երեք շրջան աւելի է: Առաջին

անգամ ըլլալով նման խորհրդաժողովի մը կը մասնակցին Հ.Մ.Ը.Մ.ի Արցախի, Թիֆլիսի, Առնհեմի (Հոլանտա) եւ Օրէպրուի (Շուէտ) շրջանները, մինչ գլխաւոր բացականները կը հանդիսանան Յունաստանը, Վիեննան, Վալանսը, Ալբանիան, Արժանապատիւներ, Մոսկուան եւ Միւնիխը:

Այնուհետեւ, օրակարգի յաջորդ կէտով, շրջաններու ներկայացուցիչ քոյրերն ու եղբայրները փառաբան-փոխանակութիւններու շրջաններու անդամական թիւերը (մարզիկ, սկաուտ,






անդամներ), մասնաճիւղերու թիւերը եւ իրավիճակը, Պատգամաւորական վերջին ժողովէն՝ Հոկտեմբեր 2019-էն մինչեւ օրս կատարուած գլխաւոր իրագործումները, դիմագրաւած դժուարութիւնները եւ ապագայի ծրագիրները: Անոնք զեկուցեցին նաեւ քարոզչական, տեղեկատուական արհեստագիտութեան, երիտասարդական եւ տնտեսական մարզերու մէջ իրենց կատարած աշխատանքներուն մասին: Իւրաքանչիւր զեկուցումին յաջորդեց հարցում-պատասխանի բաժին:

Չեկուցումներէն պարզուեցաւ, որ Հ.Մ.Ը.Մ.ի շրջաններուն մեծամասնութիւնը կը դիմագրաւէ ընդհանրական դժուարութիւններ.՝ նիւթականի եւ մարդուժի տագնապ, հայերէն լեզուի հարց, քորոնայի համաճարակէն ետք բնականոն կեանքի վերադարձի դժուարութիւն, նորաստեղծ մասնաճիւղերու պարագային ակումբներու չգոյութիւն եւ, ամէնէն շեշտուածը, Արցախեան վերջին իրադարձութիւններէն ետք՝ ընդհանուր յուսալքութեան, հիասթափութեան եւ յուսահատութեան միջնորոտի տիրապետում քիչ մը ամէն տեղ:

Յիշեալ դժուարութիւններու առընթեր, խորհրդաժողովը գնահատանքով արձանագրեց, որ հակառակ տագնապալի հանգրուան մը բոլորած ըլլալուն, Հ.Մ.Ը.Մ.ի շրջանները իրենց գործունէութիւնը երբեք չեն դադրեցուցած: Որդեգրած են առցանց գործունէութեան եղանակ եւ անդամական շարքերու հետ իրենց կապերը կարողացած են պահել կարելիութեան սահմաններու մէջ: Առցանց գործունէութիւնը նոր հորիզոններ բացած է միութենական գործունէութեան դիմաց՝ հեռաւորութիւնները մօտեցնելով եւ ճամբորդութեան ու ժամանակի զգալի խնայողութիւն կատարելով:

Դժուարին պայմաններու մէջ նոյն-





Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ



խակ կատարուած են կարգ մը իրագործումներ: Այժմեւ յոր կեդրոնի բացում, Հ.Մ.Ը.Մ-ի Գահիրէի եւ Պէյրութի ակումբներու, ինչպէս նաեւ Հալէպի պասքեթպոլի եւ Ֆութպոլի դաշտերու վերանորոգում եւ, ամէնէն յատկանշականը, Փարիզի մէջ Հ.Մ.Ը.Մ-ի համաերոպական մարզահամալիրի կառուցման աշխատանքներու մեկնարկ:

Կազմակերպական գետնի վրայ, վերականգնած են Հ.Մ.Ը.Մ-ի Արցախի եւ Վեսթերոսի մասնաճիւղերը, վերաշխուժացած են Հ.Մ.Ը.Մ-ի Ամմանի, Երուսաղէմի, Հայֆայի եւ Եաֆայի մասնաճիւղերը, յոր մասնաճիւղ մը հիմնուած է Շուէտի Օրէպրու քաղաքին մէջ եւ սկառուտական կորիզ մը ստեղծուած է Տէրիքի մէջ, Սուրիա:



ԵՐԿՐՈՐԴ ՕՐՈՒԱՆ ՆԻՍՏԵՐԸ ԵՒ ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԸ

Խորհրդաժողովին երկրորդ օրուան նիստերը, Շաբաթ, 12 Նոյեմբերին, յատկացուեցան Կեդրոնական Վարչութեան անցնող երեք տարիներու աշխատանքներու զեկուցման եւ ապագայի ծրագիրներու ներկայացման:

Առաւօտեան առաջին նիստին, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեան խօսեցաւ կազմակերպական մտահոգութիւններու մասին եւ կատարեց վարչական-գիւղական շարք մը փոխանցումներ:

Կեդրոնական Վարչութեան անդամ եւ սկառուտականի ներկայացուցիչ քոյր Թային Օրտոլլեան խօսեցաւ Կեդրոնական Վարչութեան կազմակերպած «Արարատեան» կարգի դասընթացքին, Եւրոպայի եւ Միջին Արեւելքի «Վկայեալ» կարգերուն, համա-Հ.Մ.Ը.Մ-ական 12-րդ բանակումին եւ սկառուտական գիրքերու մասին:

Մարզական գործունէութեան մասին (համա-Հ.Մ.Ը.Մ-ական 11-րդ մարզախաղեր, առցանց խաղեր եւ «Հայ մարզիկի օր»-ուան հոգակում) հանդէս եկաւ Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Արմանտ Քիլիճեան:

Նորաստեղծ երիտասարդական բաժանմունքին աշխատեւածեւր ներկայացուց եւ երիտասարդական երկրորդ համագումարին մասին զեկուցեց Կեդրո-





նական Վարչութեան անդամ եղբ. Օշին Փիրումեան, մինչ Կեղրոնական Վարչութեան քարտուղար եղբ. Վիգէն Աւագեան խօսեցաւ «Մարզիկ» պաշտօնաթերթին եւ անցնող երեք տարիներուն նորութիւնը հանդիսացող, քարոզչական յանձնախումբի աշխատանքներուն մասին:

Շրջաններու նիւթական պարտաւորութիւններու մասին արտայայտուեցաւ Կեղրոնական Վարչութեան դանձապահ քոյր Թալին Օրտողեան, իսկ տնտեսական ծրագիրներու եւ տեղեկատուական արհեստագիտութեան յանձնախումբի աշխատանքներուն մասին՝ Կեղրոնական Վարչութեան անդամ եղբ. Վահէ Թանաշեան:

Խորհրդաժողովը անդրադարձաւ նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի ֆոնտերու («Եկամտաբեր հիմնադրամ», «Գառնիկ Մկրտիչեան ֆոնտ», «Միհրան Շիմշիրեան ֆոնտ», «Ժիրայր Սարգիսեան ֆոնտ») յանձնաձումբի եղանակին, համահայկական ամառնային (2023) եւ ձմեռնային (2024) մարզախաղերուն:

Աւարտին, խորհրդաժողովին մասնակիցները շեշտեցին միութեան դիմազրաւած դժուարութիւնները յարատեւ եւ միասնական ճիգով յաղթահարելու անհրաժեշտութիւնը, 2023-ին համար ճշդուած համա-Հ.Մ.Ը.Մ.ական նախաձեռնութիւնները (երիտասարդական Բ. համագումար, «Արարատեան» եւ «Վկայեալ» կարգերու դասընթացներու ամբողջացում, համա-Հ.Մ.Ը.Մ.ական 12-րդ բանակում, Պատգամաւորական 13-րդ ընդհանուր ժողով...) յաջողութեամբ պսակելու եւ միութիւնը նոր վերելքի առաջնորդելու համար, ետին ձգած քորոնան եւ իր տիրուր հեւեանքները, ուսանելի դասեր քաղած առցանց գործունէութեան կարելիութիւններէն եւ գործնական դիւրութիւններէն:

Յայտնենք, որ միջ-դիւանական 10-րդ խորհրդաժողովը աւարտեցաւ վեց նիստերու երկարատեւ քննարկումներէ ետք: Փակումը կատարուեցաւ Շաբաթ, 12 Նոյեմբեր 2022-ի երեկոյեան ժամը 5-ին, Հ.Մ.Ը.Մ.ի «Յառաջ նահատակ» քայլերգի խմբերգով:







**Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԻՋ-ԴԻԻԱՆԱԿԱՆ
ՆԱԽՈՐԴԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՆԵՐԸ**

Հ.Մ.Ը.Մ.Ի միջ-դիւանական խորհրդատուները ընթացք առած են 1985-ին: Այնուհետեւ, չորս տարուան յաջորդականութեամբ, գումար-լած են տասը խորհրդատուներ՝ հետեւեալ ձևով.-

- Ա. Խորհրդատու, 5-7 Ապրիլ 1985, Միլանո, Իտալիա:
- Բ. Խորհրդատու, 24-27 Մարտ 1989, Լոնտոն, Անգլիա:
- Գ. Խորհրդատու, 13-16 Յուլիս 1993, Լաւալ, Գանատա:
- Դ. Խորհրդատու, 26-28 Մարտ 1997, Փարիզ, Ֆրանսա:
- Ե. Խորհրդատու, 13-15 Օգոստոս 2001, Պէյրուի, Լիբանան:
- Զ. Խորհրդատու, 1-3 Օգոստոս 2005, Աթէնք, Յունաստան:
- Է. Խորհրդատու, 9-11 Ապրիլ 2009, Փարիզ, Ֆրանսա:
- Ը. Խորհրդատու, 29-31 Մարտ 2013, Նիկոսիա, Կիպրոս:
- Թ. Խորհրդատու, 27-29 Հոկտեմբեր 2016, Նիկոսիա, Կիպրոս:





Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ



ՄԻՋ-ԴԻՒԱՆԱԿԱՆ 10-ՐԴ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ ԱԻԱՐՏԻՆ՝

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ՅԱԷՏ ԲԱԺՆՈՒԱԾ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ, ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌԻՆ ՀԵՏ, ՅԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ ԾԱՂԿԵՊՄԱԿՆԵՐՈՒ ԶԵՏԵՂՈՒՄՈՎ

Միջ-դիւանական 10-րդ խորհրդաժողովի աւարտին, Կիրակի, 13 Նոյեմբեր 2022-ի առաւօտեան, խորհրդաժողովի մասնակիցները այցելեցին Անթիլիասի Մայրավանք եւ ներկայ գտնուեցան ննջեցեայ եւ նահատակուած Հ.Մ.Ը.Մ.ականներու յիշատակին Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ մատուցուած հոգեհանգստեան պաշտօնին՝ հանդիսապետութեամբ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին:

Հ.Մ.Ը.Մ.ականներու պատուիրակութիւնը, Կեդրոնական Վարչութեան կազմին առաջնորդութեամբ, ծաղկեպըսակի գետեղումով յարգանքի իր տուր-

քը մատուցեց Մայրավանքի շրջափակին մէջ գտնուող, Հայոց Յեղասպանութեան յուշարձան-մատրան: Կեդրոնական Վարչութեան անդամ-

**ՅԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝
ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
ՅՈՒՇԱՐՁԱՆ-ՄԱՏՐԱՆ...**
Հոգեհանգստեան պաշտօնէն ետք, աշխարհի 22 երկիրներէն ժամանած





ները եւ խորհրդատուների մասնակցությամբ ողջունեցին Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի շրջանին խումբ մը սկաուտներ, որոնք երկշարք կանգնած եւ «Պատուի ա՛ռ» դիրքով յատուկ շուք տուին յարգանքի արարողութեան: Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի շեփորախումբը արարողութեան ազ-



դանշանը տուաւ «Մահերգ»ով, ապա նուազեց Հայաստանի, Լիբանանի, Հ.Մ.Ը.Մ-ի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան քայլերգները:

ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Այնուհետեւ, պատուիրակութեան անդամները այցելեցին վեհարան եւ ստացան Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Վեհափառին Հայրապետական օրհնութիւնները եւ խրատական խօսքերը:

Հ.Մ.Ը.Մ-ի բազմամղամ պատուիրակութիւնը ողջունելով, Արամ Ա. Վեհափառ

ըսաւ, թէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը իր համահայկական առաքելութեամբ ո՛չ միայն հոգեւոր տունը դարձած է ողջ հայութեան, այլ նաեւ ազգային տունը՝ մեր ժողովուրդի բոլոր գաւազներուն, առանց խտրութեան: «Անթիլիասին խօսքը իր գործն է: Այս յանձնառութեամբ իր առաքելութիւնը կը կատարէ հայրապետական այս Ս. Աթոռը: Անոր առաքելութիւնը միայն կրօնական պարունակի մէջ պէտք չէ դիտել, այլ՝ համաժողովրդային ու համահայկական: Այս առաքելութեան մշակներն են, հայ հոգեւորականին կողքին, ազգանուէր գործունէութիւն ծաւալող մեր միութիւնները ու կազմակերպութիւնները, որոնցմէ մէկն է Հ.Մ.Ը.Մ-ը», յայտնեց ան:

Ապա, Հ.Մ.Ը.Մ-ի դերը գնահատե-





Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

լով, Արամ Ա. Վեհափառ շեշտեց, որ հայրենիքին ու ազգին գերազոյն իտէպլներուն իրականացման նկատմամբ մեր ունեցած հաւաքական առաքելութեան մէջ կարեւոր տեղ գրաւած է Հ.Մ.Ը.Մ.ը: «Անիկա սոսկ մարմնակրթական կազմակերպութիւն մը ըլլալէ անդին, մեր ժողովուրդի հոգեւոր, բարոյական, ազգային, մշակութային ու պահանջատիրական արժէքները իր մէջ բովանդակող միութիւն մը եղած է», ըսաւ Վեհափառը:

Այցելութեան ընթացքին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեան Արամ Ա. Վեհափառին յանձնեց միութեան կողմէ պատրաստուած յուշանուէր մը, որուն վրայ քանդակուած էր անոր հետեւեալ խօսքը. «Հ.Մ.Ը.Մ.ը սովորական իմաստով մարմնամարզական կազմակերպութիւն մը չէ, այլ առաքելութիւն է՝ իր էութեամբ ու նպատակով»:

ՄԱՄՆԱԿՑՈՒԹԻՒՆ Հ.Յ.Դ.Ի ՆՆՁԵՑԵԱԼՆԵՐՈՒ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏԻՆ

Ապա, խորհրդաժողովի մասնակիցները մեկնեցան Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատուն՝ Հ.Յ.Դաշնակցութեան 132-ամեակին առիթով ներկայ գտնուելու կուսակցութեան նահատակ եւ ննջեցեալ անդամներու յիշատակին մատուցուած հոգեհանգստեան պաշտօնին, հանդիսապետութեամբ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Շահէ Արք. Փանոսեանի:



Գերեզմատան մէջ, Հ.Յ.Դաշնակցութեան պանթէոնին առջեւ տեղի ունեցաւ ծաղկեմատոյց եւ Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին կողմէ ծաղկեպսակի զետեղում՝ ձեռամբ Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեանի:

Հ.Մ.Ը.Մ.ի պատուիրակութիւնը այցելեց նաեւ միութեան երկարամեայ ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանի շիրիմը եւ «Յառաջ նահատակ» քայլերգի խմբերգումով յիշեց ու գնահատեց միութեան մեծ երախտաւորին անմոռանալի վաստակը:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՊԻՔՖԱՅԱՅԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՎԱՆՔ

Խորհրդաժողովի մասնակիցներուն վերջին կանգաւոր եղաւ Պիքֆայայի Ս. Աստուածածին վանքը, ուր Հ.Մ.Ը.Մ.ի պատուիրակութեան անդամները ծանօ-

թացան տեղւոյն մատրան, բացօթեայ խորանին, Հայոց Յեղասպանութեան յուշակոթող առաջնորդող որմնաքանդակներուն եւ 1915-ի եղեռնագործութեան խոցը ներկայացնող յուշարձանին:

Յուշակոթողին առջեւ, Հ.Մ.Ը.Մ.ի պատուիրակութիւնը դիմաւորեց Դըպրեվանքի տեսչական կազմը, գլխաւորութեամբ տեսուչ Պարոյր Վրդ. Շէրնէզեանի: Տեղի ունեցաւ աղօթք, ծաղկեպսակի զետեղում, ապա՝ Պարոյր Վրդ. կարճ խօսքով մը ներկայացուց Հայոց Յեղասպանութեան յուշարձանին իմաստն ու թելադրականութիւնը, իբրեւ երկինք խոյացող կոթող, որ կը մարմնաւորէ հայ ժողովուրդի կամքն ու պայքարի ոգին: Պարոյր Վրդ. ծանօթացուց նաեւ վանքին մէջ գործող Դըպրեվանքը՝ իր 92-ամեայ առաքելութեամբ եւ մեր ժողովուրդին ծառայութեան համար եկեղեցական թէ՛ աշխարհական մշակներ պատրաստող հոգեմըտաւոր կեդրոն:

Իր խօսքին աւարտին, տեսուչ Պարոյր Վրդ. Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը պատուեց յուշանուէրով մը:

Հ.Մ.Ը.Մ.ականներ Ս. Աստուածածին վանքին հրաժեշտ տուին խմբանկարով մը:

Յայտնենք, որ թէ՛ Անթիլիասի եւ թէ՛ Պիքֆայայի մէջ կատարուած արարողութիւնները ուղղակիօրէն սփռուեցան միութեան դիմատետրի էջով:



Photo by Markar





ՄԱՐԶԻԿ, 42Ը-Դ ՏԱՐԻ, ԹԻՒ 427





Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՄԻՋ-ԴԻՒԱՆԱԿԱՆ 10-ՐԴ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՄԱՆ ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

ԸՆԿԵՐԱՅԻՆ ՄՏԵՐՄԻԿ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՒ 104-ԱՄԵԱԿԻ ՃԱՇԿԵՐՈՅԹ

Միջ-դեկանական 10-րդ խորհրդաժողովը ունեցավ ընկերային երկու երեկոյ, առաջինը՝ մտերմիկ, իսկ երկրորդը՝ պաշտօնական: Արդարեւ, Ուրբաթ, 11 Նոյեմբեր 2022-ի երեկոյեան, խորհրդաժողովի մասնակիցները «Աղբալեան-Հ.Մ.Ը.Մ.» մարզահամալիրի «Արա Պապիկեան» սրահին մէջ հիւրընկալուեցան Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան կողմէ:

Երեկոյի նախօրեակին, ժամը 7-ին մարզահամալիր հասնելով, խորհրդաժողովի մասնակիցները ծանօթացան այնտեղ կատարուող աշխատանքներուն: Այցելեցին պասքեթպոլի դաշտ, ֆութպոլի փակ մարզադաշտ, ժողովասրահներ, յարկեր, որոնք ինչպէս միշտ, այդ օր կը վիտային Հ.Մ.Ը.Մ-ական մարզիկ-մարզիկուհիներով եւ սկաուտներով: Տեղ մը ճատրակի փորձ, այլ տեղ՝ փինկ-փոնկ, մէկ այլ տեղ՝ պասքեթպոլ, այլուր՝ թեքուանտօ եւ այլն: Բոլորը մեծ գոհունակութեամբ հետեւեցան նուիրեալ պատասխանատուներու կողմէ կատարուող հսկայա-



կան աշխատանքին: Մարզահամալիրի բոլոր բաժինները շրջագայելէ ետք, երեկոն սկսաւ լաւ տպաւորութիւններով: Յաջորդեցին խօսք, գեղարուեստական պատշաճ յայտագիր, Լիբանանի շրջանը ծանօթացրնող տեսերիզի ցուցադրութիւն եւ հիւրընկալ շրջանին կողմէ յուշանուէրներու փոխանցում: Այս առիթով ողջոյնի խօսք արտա-



սանց Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Հայկ Թապագեան: Երեկոյին ներկայ էին Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի մասնաճիւղերու վարչութիւնները եւ սկաուտական խմբապետական կազմերը: 104-ԱՄԵԱԿԻ ՃԱՇԿԵՐՈՅԹԸ Օր մը ետք, Շաբաթ, 12 Նոյեմբեր





2022-ի երեկոյեան, Ազգային Առաջնորդարանի «Երջօ Սամուէլեան-Եռագոյն» սրահին մէջ տեղի ունեցաւ միութեան 104-ամեակի ճաշկերոյթը, կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան, ներկայութեամբ նախարար Ճորճ Պուշիբեանի, երեսփոխան Յակոբ Թերզեանի, նախկին նախարար Վարդինէ Օհանեան-Գէորգեանի, կեդրոնական դրամատան փոխ կառավարիչ Ալէք Մուրատեանի, Պուրճ Համուտի քաղաքապետ Մարտիկ Պօղոսեանի, Հ.Մ.Ը.Մ-ի եւ կեդրոնական Վարչութեան ներկայ եւ նախկին անդամներու, Համազգայինի կեդրոնական Վարչութեան կազմին, Հ.Յ.Դ. Լիբանանի կեդրոնական Կոմիտէի անդամներու, հիւրերու, միջդիւանական խորհրդաժողովի մասնակիցներու եւ Հ.Մ.Ը.Մ-ականներու:

Երեկոյին հանդիսավարութիւնը կատարեց եղբ. Բաֆֆի Կէօօլլանեան: Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անունով խօսք առաւ քոյր Սոնա Պօղոսեան: Երեկոն խանդավառեցին Շաքէ Պաղտասարեան եւ Յովիկ ձիւնիոր՝ ընկերակցութեամբ Սեդօ Պաղտասարեանի նուագախումբին: Տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի շրջանը ներկայացնող տեսերիզի ցուցադրութիւն: Մթնոլորտէն խանդավառուած՝ Լիբանանի շրջանին կատարուեցան նուիրատուութիւններ:

Երգով ու պարով երեկոն շարունակեցաւ մինչեւ ուշ ժամեր՝ անմոռանալի յիշատակներ պարգեւելով բոլորին:



ԼԻԲԱՆԱՆԻ ՏԵՍԱՐԺԱՆ ՎԱՅՐԵՐ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՅՑՆԵՐ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Միջդիւանական 10-րդ խորհրդաժողովի մասնակիցները Լիբանան իրենց կեցութեան ընթացքին առիթը ունեցան ծանօթանալու երկրի տեսարժան վայրերուն եւ ազգային կառույցներուն:

Խորհրդաժողովի աշխատանքներէն առաջ եւ ետք, աշխարհի գանազան երկիրներէն Պէյրութ ժամանած Հ.Մ.Ը.Մ-ական ներկայացուցիչներ, Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի շրջանի պատասխանատու քոյրերու եւ եղբայրներու ընկերակցութեամբ, այցելեցին Հարիսա, Ժըհիթա, Ժիպէյլ, Այնճար, Պապլպէք եւ այլուր: Օր մը անոնք շրջեցան Պուրճ Համուտի մէջ եւ այցելեցին Ազգային Առաջնորդարան, «Ազգակ», «Վանայ Ձայն» եւ Հայկական Երեսփոխանական Պլոքի գրասենեակ:





Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչության 2019-2023 քառամեակի երրորդ լիազու- մարին նիստերը տեղի ունեցան 9 եւ 10 Նոյեմբեր 2022-ին, ՊԷլյուրթի մէջ, օրակարգի վրայ ունենալով միութեան կազմակերպչական, սկսու- րական, մարզական, երիտասարդական, քարոզ- չական, «Մարզիկ» պաշտօնաթերթի, տեղեկար- ւական արհեստագիտութեան եւ րնտեսական գործունէութեան այլազան բնագաւառները:

Կեդրոնական Վարչութիւնը գոհունակու- թեամբ անդրադարձաւ Արցախի մէջ սկսուրա- կան շարժումի վերակազմակերպման աշխա- րանքներուն, որոնց համար յարուկ գործիչ մը գործուղած էր շրջան՝ վեցամսեայ առաքելու- թեամբ: Սկսուրական գործունէութեան առն- թեր, Կեդրոնական Վարչութիւնը որոշեց իր ներդրումը ունենալ Արցախի մէջ ֆուլթայոյի դաշ- րի մը գնման ծրագիրին: Դաշրը պիտի կոչուի ի յիշարակ Հ.Մ.Ը.Մ.ի Արցախի մասնահիւղի վար- չական, 44-օրեայ պարերազմի նահարակ՝ Հ.Մ.- Ը.Մ.ական եղբ. Արարի Իշխանեանի: Արծարծուե- ցաւ նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Արցախի մասնահիւղին յա- րուկ կեդրոնի մը ապահովման կարելիութիւնը:

Կեդրոնական Վարչութիւնը որոշունեց վերջերս զգալի աշխուժացում ապրող Հ.Մ.Ը.Մ.ի Թիֆլիսի, Ամմանի, Երուսաղէմի, Հայֆայի, Եաֆայի եւ Շուէ- րի մասնահիւղերուն ի գործ դրած ջանքերը, յար- կապէս՝ Շուէրի Օրէպրու քաղաքին մէջ նոր մաս- նահիւղի մը սրեղծումով: Կեդրոնական Վարչու- թիւնը կարեւորութեամբ ընդգծեց Ալմէյոյի (Նե- րրըրլէնդներ) եւ Արմաւիրի (Հայաստան) մէջ Հ.Մ.Ը.Մ.ի նոր կեդրոններու բացումը, Հ.Մ.Ը.Մ.ի Գահիրէի եւ ՊԷլյուրթի ակումբներուն վերանորո- զումը, Հայէպի մէջ ֆուլթայոյի եւ պասքէթպոյի

նոր դաշրերու կառուցումը եւ Հ.Մ.Ը.Մ.ի համա- եւրոպական մարզաւանի շինարարական աշխա- րանքներուն մեկնարկը Փարիզի արուարձաննե- րէն Իսի ԼԷ Մուլիոյի մէջ:

Սկսուրական մարզի պարագային, Կեդրոնա- կան Վարչութիւնը ճշդեց համա-Հ.Մ.Ը.Մ.ական 12-րդ բանակումին թուականը (21-30 Յուլիս 2023) եւ իւնքապերական գործադիր կազմը: Կեդրոնա- կան Վարչութիւնը ծանօթացաւ սկսուրական «Արարարեան» եւ «Վկայեայ կարգ»ի Եւրոպայի եւ Միջին Արեւելքի դասնթացքներու կազմա- կերպման ընթացքին եւ որոշունեց սկսուրական երեք նոր գիրքերու («Երկասարդ», «Բ. կարգ», «Ա. կարգ») վերանշակումը արարերակներուն պար- րասարութիւնը եւ անոնց ելեկրրոնային արարե- րակներուն ներկայացումը միութեան կայքէջով:

Կեդրոնական Վարչութիւնը ընդհանուր ար- ժեւորումը կարարեց անցնող ամառ Հայաստանի մէջ կազմակերպումը համա-Հ.Մ.Ը.Մ.ական 11-րդ մարզախաղերուն եւ Հ.Մ.Ը.Մ.ի շրջաններուն մե- ծարթի մասնակցութեան, իբրեւ քորոնայի համա- ճարակէն ետք համա-Հ.Մ.Ը.Մ.ական առաջին նա- իսանեւնութիւն: Իբրեւ նորութիւն, գնահարելի նկարուեցաւ յարուկ ինամքի կարօր «Հրաշք» մարզախաղերու կազմակերպումը՝ յառաջիկային այդ մարզախաղերը կրկնելու եւ աւելի լայն շրջա- նակներու եւս հասնելու մարադրութեամբ: Նաեւ քննարկման նիւթ դարձաւ առցանց մարզախաղե- րու դրական փորձառութիւնը եւ որոշուեցաւ յա- ռաջիկայ արարի կրկնել այդ մարզախաղերը:

Լիազումար նիստերը համապարասխան զե- կուցումներ լսելէ ետք՝ արծարծեցին Հ.Մ.Ը.Մ.ա- կան երիտասարդութեան (18-35 րարեկան միու- թենականներու) համար աշխարանքային նոր

Հ.Մ.Ը.Մ.ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՊԱՏՈՒԷ ԱՏՈՄ ԵՒ ՍԵԼԼԱ ԹՆՃՈՒԿԵԱՆՆԵՐԸ

Երկուշաբթի, 12 Դեկտեմբեր 2022-ին, «Ատոմ եւ Սելլա ԹՆՃՈՒԿԵԱՆ» պասքէթ- պոլի դաշտին վրայ, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի տղոց պասքէթպոլի մրցումէն ետք, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը յատուկ յուշանուէրով պատուեց Համա- Հ.Մ.Ը.Մ.ական վերջին մարզախաղերուն նիւթական իր աջակցութիւնը ցուցաբերած, միութեան երկար տարիներու բարե- րար, Ատոմ եւ Սելլա ԹՆՃՈՒԿԵԱՆ ամուլը:

Այս առիթով եղբ. Ատոմ եւ քոյր Սելլա ԹՆՃՈՒԿԵԱՆներուն յանձնուեցաւ մարզախաղերուն նշանակը կրող եւ մատանիի տեսքով յուշանուէր մը՝ պատրաստուած խաղերուն առիթով:





գործադարաշարեր արեղծելու կարելիությունները: Որոշուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի երիտասարդական երկրորդ համագումարը կայարարել Ապրիլ 2023-ին, Կիպրոսի մէջ:

Կեդրոնական Վարչութեան երրորդ լիագումարի նիստերը կանգ առին նաեւ միութեան «Մարզիկ» պաշտօնաթերթի, երկկեզու կայքէջի, ընկերային ցանցերու եւ, առհասարակ, քարոզչական լայնածաւալ աշխատանքներուն վրայ: Այս իմաստով գնահատելի նկատուեցան նորարարութեան հետ քայլ պահելու եւ երիտասարդութեան առաւելագոյն չափով հասանելի դառնալու միութեան ճիգերը՝ բազմալեզու տեսանիւթերու պարտասարութեամբ, համացանցային նոր հարթակներու մէջ ներկայութեամբ եւ այլն: Այս իմաստով դրական նկատուեցաւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական քարոզչական առցանց առաջին խորհրդաժողովին կազմակերպումը եւ անկէ բխած առաջարկներուն իրականացումը (քարոզչական ուղեցոյցի, քօնացոյցի եւ քարոզչական լրատուամիջոցներու քարտէսի պատրաստութիւն):

Յարուկ օրակարգով քննարկումի նիւթ դարձան միութեան տեղեկատրուական արհեստագիտութեան եւ տեղեկութիւններու շրջանարանի

(Data base) հարստացման աշխատանքները՝ միութեան բոլոր շրջաններու պատրաստանարուններու միացեալ ճիգերով:

Տնտեսական օրակարգը իր լայն տեղը ունեցաւ Կեդրոնական Վարչութեան նիստերուն ընթացքին. զեկուցումներ ներկայացուեցան Հ.Մ.Ը.Մ.ի «Գառնիկ Մկրտիչեան», «Միհրան Շիւշիբեան» եւ «Ժիրայր Մարգիսեան» ֆոնդներուն մասին: Քրննուեցան նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Եկամտաբեր ֆոնդին (Endowment fund) յանձնաձումին կապուած հարցեր:

Վերջապէս, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը քննեց Միջին Արեւելքի տազնապահար գաղութներու իր միաւորներուն օժանդակութեան ծրագիրները եւ որոշեց ամէն գնով թել ու թիկունք կանգնիլ միութեան պարմական շրջաններու անխափան գործունէութեան:



Աւարտին, քննարկումի նիւթ դարձան լիագումար նիստերէն անմիջապէս ետք տեղի ունենալիք Հ.Մ.Ը.Մ.ի միջ-դիւանական 10-րդ խորհրդաժողովին եւ Հ.Յ.Դ.ի ուղեկից միութիւններու խորհրդաժողովին օրակարգերը:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԵՐԿԱՍՏՂ, Ա. ԿԱՐԳ ԵՒ Բ. ԿԱՐԳ ԳԻՐՔԵՐՈՒՎ ԿԵՐԱՄՇՇԱԿՈՒԱԾ ՕՐԻՆԱԿՆԵՐԸ՝ ՊԱՏՐԱՍ

Տարիներու աշխատանքէ ետք, պատրաստ են սկառտական Երկաստղ, Ա. կարգ եւ Բ. կարգ գիրքերու վերամշակուած, նոր օրինակները, որոնք PDF օրինակով տեղ գտած են Հ.Մ.Ը.Մ.ի կայքէջի հրատարակութիւններու բաժինին մէջ (<https://www.homenetmen.org/hy/library>):

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախաձեռնութեամբ եւ Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբ. Կարպիս Գապասագալեանի խմբագրութեամբ, սկառտական այս գիրքերը առաջին անգամ հրատարակուած են 1999-ին:



Շար.ը էջ 80





ԱՆԴՐԱԴԱՐՁ

Հ.Յ.Դ.Ի ՈՒՂԵԿԻՑ ՄԻՈՒԹԻԻՆՆԵՐՈՒ ՄԻՕՐԵԱՅ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ



կողմէ, որ ողջունեց ներկաները, անդրադարձաւ նման խորհրդաժողովի մը կազմակերպման նպատակներուն եւ առաջադրանքներուն:

Խորհրդաժողովին նպատակն էր Սփիւռքի, Հայաստանի եւ Արցախի մէջ գործող երեք միութիւններու գործունէութիւններու ռազմավարութեան եւ աշխատանքային ուղղութիւններու քննարկում եւ համադրում: Խորհրդաժողովը կ'առաջադրէր նաեւ համահայկական եւ համազգային աշխատանքներու համակարգում կատարել, համադրածակցութեան զարգացման յաւելեալ



Երկուշաբթի, 14 Նոյեմբեր 2022-ին, «Ազդակ»ի «Փիւնիկ» սրահին մէջ տեղի ունեցաւ Հ.Յ.Դ.Ի ուղեկից միութիւններու՝ ՀՕՄ-ի, Հ.Մ.Ը.Մ-ի եւ Համազգայինի Կեդրոնական Վարչութիւններու եւ Բիւրոյի երիտասարդական գրասենեակի պատասխանատուներուն միօրեայ խորհրդաժողովը:

Հ.Յ.Դ. Բիւրոյի կազմակերպութեամբ հրաւիրուած խորհրդաժողովին բացումը կատարուեցաւ առաւօտեան ժամը 9-ին՝ Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեանի





Թափ հաղորդել, ճշդել երեք ուղեկից միութիւններու միացեալ աշխատանքի կարելիութիւնը եւ որդեգրուելիք չափանիշները:

Իւրաքանչիւր միութիւն ներկայացուց ամփոփ գեկուցում՝ իր ներկայ եւ յառաջիկայ աշխատանքներուն, ծրագիրներուն մասին, անդրադարձ կատարուեցաւ նոր շրջաններու մէջ ուղեկից միութիւններու ներկայութեան: Յատուկ կերպով շեշտը դրուեցաւ երիտասարդութեան ներգրաւման կարեւորութեան եւ անոր համապատասխան միջոցներու ձեռնարկման վրայ՝ նկատի ունենալով մերօրեայ պայմաններն ու երիտասարդութեան հետաքրքրութիւններուն ծիրը: Լուսարձակի տակ առնուեցան նաեւ ուղեկից միութիւններու քարոզչական ծրագիրներու համակարգումը, յատկապէս՝ համահայկական հարցերու առնչութեամբ:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը խորհրդաժողովին մասնակցեցաւ 11 հոգինոց կազմով մը, որուն անդամները օրակարգի գանազան բաժիններով հանդէս եկան համապատասխան գեկուցումներով:

Յայտնենք, որ միօրեայ խորհրդաժողովին յաջորդեց, նոյն օրը երեկոյեան, Պուրճ Համուտի «Յակոբ Տէր Մեղքոնեան» թատերասրահին մէջ կազմակերպուած ժողովրդային հաւաք մը, ուր գեկուցումներով հանդէս եկան եւ ներկաներու հարցումներուն պատասխանեցին ուղեկից միութիւններու Կեդրոնական Վարչութիւններու ատենապետները եւ երիտասարդական գրասենեակի ներկայացուցիչը:



ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԻ ԾՐԱԳՐԱԲՈՐՈՒՄԻ ԺՈՂՈՎԸ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան երրորդ լիազուգումարի եւ միջդիւանական 10-րդ խորհրդաժողովի նախօրեակին, Կիրակի, 6 Նոյեմբեր 2022-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան Պէյրութի նստավայրին մէջ տեղի ունեցաւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական 12-րդ բանակումի ծրագրաւորումի ժողովը, որուն իրենց մասնակցութիւնը բերին Կեդրոնական Վարչութեան դիւանի անդամները, Կեդրոնական Վարչութեան սկառտական աշխատանքներու ներկայացուցիչներ՝ քոյր Թալին Օրտոլլեան (Լիբանան), եղբայր Ֆէտի իսթակ Գազանճեան (Շուէտ), Օշին Փիրումեան (Հայաստան), բանակումի խմբապետական կազմի անդամներ՝ ընդհանուր խմբապետ եղբ. Պօղոս Մահպուտեան (Փարիզ), փոխ խմբապետ եղբ. Գէորգ Օհանեան (Հայաստան) եւ գործադիր խմբապետական կազմի անդամ քոյր Թամար Քէչիչեան (Լիբանան):

Ժողովը ծրագրաւորումը կատարեց 2023-ի ամրան տեղի ունենալիք համա-Հ.Մ.Ը.Մ.ական 12-րդ բանակումի աշխատանքներուն: Բանակումի թուական հաստատուեցաւ 21-30 Յունիս 2023-ը, վայր՝ Բիւրականի «Եղբ. Գառնիկ Մկրտիչեան սկառտական բանակավայր»: Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի որոշումով եւ գործնական նկատառումներով, բանակումի մասնակիցներու թիւ ճշդուեցաւ 650-700 սկառտ:

Բանակումը, ինչպէս նախորդները, պիտի ունենայ իր քայլերգը, կարգախօսը եւ խորհրդապատկերը (լոկոն): Կարգախօս ճշդուեցաւ «Խրոխտ, խիզախ, մի՛շտ պատրաստ»: Քայլերգի եւ խորհրդապատկերի պատրաստութեան համար յայտարարուեցաւ մրցանք: Ներկայացուած օրինակներէն լաւագոյն քայլերգը եւ խորհրդապատկերը պիտի որդեգրուին Կեդրոնական Վարչութեան կողմէ եւ հեղինակները պիտի գնահատուին յատուկ մրցանակներով:

Բանակումը իր եռանդամ խմբապետական կազմին աւընթեր պիտի ունենայ եթանդամ գործադիր խմբապետական կազմ մը, որուն մաս պիտի կազմեն հետեւեալ քոյր-եղբայրները՝ Թամար Քէչիչեան (Լիբանան), Մենար Պոյաճեան (Միւնիխ), Յովիկ Փամփալեան (Սուրիա), Արամ Գայսէրեան (Արեւելեան Մ.Ն.), Աւագ Կարապետեան (Քուէյթ), Գրիգոր Տուրքարեան (Հայաստան) եւ Ակոսթին Անայեան (Հարաւային Ամերիկա):





ՅՈՒՇԵՐ

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ Հ.Մ.Ը.Մ.Ի ՖՈՒԹՊՈՒԻ ՓԱՌՄԻՈՐ ԱՆՑԵԱԼԷՆ

«Մարզիկ»ի այս թիւին սկսեալ կը սկսինք յոյս ընծայել Հ.Մ.Ը.Մ.Ի Հալէպի եւ Պէյրութի ֆութպոլի անցեալի «աստղ»երէն, մարզիչ, վարչական, վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. Ճորճիկ Ռասարկէլէնեանի յուշերը, որոնք իբրեւ հում արտադր եւ արժանահասարակ աղբիւր կրնան մեծապէս օգտակար ըլլալ միութեան մարզական պարմութիւնը գրելու կոչուած ապագայ պարմագիրին:

Յուշերը, մաս առ մաս, 19 բաժնիով, առաջին անգամ հրատարակուած են Հալէպի «Գանձասար» շաբաթաթերթին մէջ: «Մարզիկ» զանոնք կը վերահրատարակէ միացեալ շարքով (երեք-չորս մաս միասնաբար) եւ համապարաստան պարզանկերով:



«Մ.»

Հանդէս կու գանք Հ.Մ.Ը.Մ.Ի Հալէպի եւ Պէյրութի գոյգ խումբերուն փառաւոր անցեալին մասին յօդուածներով եւ կարեւոր տեղեկութիւններով, ներկայացնելով այս մեծ միութեան՝ Հ.Մ.Ը.Մ.Ի անցեալի պատմութեան անմոռանալի նուաճումներէն եւ սիրագործութիւններէն օրինակներ, որոնք իրականացան բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականներու ջանքերուն, անսակարկ նուիրումին, թափած քրտինքին եւ անվերապահ գործակցութեան շնորհիւ, անխտիր: Այս յօդուածաշարքը կը հրատարակենք հիմնական երեք նպատակով:-

Առաջին- յատուկ շնորհակալութիւն, յարգանք եւ գնահատանք յայտնելու բոլոր անոնց, ի մասնաւորի ֆութպոլի եղբայրներուն, որոնք Հ.Մ.Ը.Մ.ականի ազնիւ գիտակցութեամբ, բժախնդիր կարգապահութեամբ, հաւատարմութեամբ, անսակարկ նուիրումով եւ մանաւանդ Հ.Մ.Ը.Մ.Ի «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանին հաւատք ցուցաբերելով նպաստեցին անոր գոյատեւման, վերելքին եւ յաջողութիւններուն: Անոնք ոսկեայ տառերով արձանագրեցին փառաւոր անցեալի գեղեցիկ եւ անմոռանալի էջեր:

Բի՛ւր յարգանք ու երախտագիտութիւն բոլորին: Կը խնդրենք Աստուծմէ, որ մեզմէ յաւատարմութեամբ Հ.Մ.Ը.Մ.ականները երկինքի արքայութեան արժանացնէ, եւ անոնք դրախտային անդաստանին մէջ հանգիստ, խաղաղ եւ ապահով ննջեն:

Առողջութիւն, եռանդ, կորով եւ յաջո-

ղութիւն կը մաղթենք բոլոր անոնց, որոնք տակաւին կը շարունակեն ծառայել այս մեծ միութեան՝ Հ.Մ.Ը.Մ.Ին, նորանոր յաջողութիւններ ապահովելու յոյսով եւ առաջադրանքով:

Երկրորդ- Հ.Մ.Ը.Մ.Ի նորահաս սերունդը իրագեղ դարձրելու այս մեծ միութեան փառաւոր անցեալի որոշ փուլերուն, ծանօթացնելու զիրենք իրագործուած նուաճումներուն, որպէսզի աւելի խրախուսուին, ոգեւորուին, գօտեպընդըւին, քաջալերուին եւ իրենց հոգիներն ու սրտերը ողողուին արդար հպարտութեամբ: Թող անոնք եռանդով շարունակեն այս սրբազան պարտականութիւնը՝ բարձր ու վառ պահելու իրենց վստահուած Հ.Մ.Ը.Մ.Ի լուսատու ջահը, առաւելագոյն չափով ծառայելու աւելի քան հարիւրամեայ կեանք ունեցող այս միութեան, նպաստելու անոր բարեբեր ու յաջող երթին, միշտ հաւատարիմ մնալով այս դարբնոցին, մարզակերտումի եւ հայակերտումի սրբազան դպրոցին՝ Հ.Մ.Ը.Մ.Ին:

Սիրելի՛ Հ.Մ.Ը.Մ.ականներ, ինքնավստահ, հաստատ քայլերով, հաւատքով ու տեսիլքով քալեցէք յառա՛ջ, անսասան, անվեհեր, բացառիկ յաղթանակներ, փայլուն յաջողութիւններ եւ յիշատակելի նուաճումներ արձանագրելու առաջադրանքով:

Թող ձեր շքեղ, բարի երթը յաջողութեամբ պսակուի:

Երրորդ- Ժամանակէ մը ի վեր ականատես ու ականջալուր կ'ըլլանք անախորժ





արարքներու, որոնց հերոսները, դժբախտաբար, կարգ մը մարզիկներ են, իրենց հետ ունենալով օտարականներ: Անոնք կը փորձեն Հ.Մ.Ը.Մ-ի գեղեցիկ անցեալի անմոռանալի նուաճումներն ու յաղթանակներու շքեղ պատկերը խեղաթիւրել, պղծել, այլափոխել, անհիմն, անճիշտ տեղեկութիւններ փոխանցելով, հեքիաթներ յօրինելով եւ իրենց խաղընկերներուն արդարօրէն ձեռքբերած արդիւնքները իւրացնելու փորձեր կատարելով, իրենց անձին վերագրելով, պարզապէս իրենց եասիրութեան եւ փառամոլութեան յագուրդ տալու համար: Անոնք իրենց անհատական շահերը աւելի վեր կը դասեն միութեան շահերէն ու սկզբունքներէն եւ կը դիմեն այնպիսի արարքներու, որոնք խոտոր կը համեմատին միութեան շահերուն եւ նպատակներուն հետ:

Ի տես այս բոլորին, միութենականի մեր խիղճը եւ Հ.Մ.Ը.Մ-ի դպրոցին մէջ ստացած մեր դաստիարակութիւնը երբեք չեն արտօներ մեզի, որ անտարբեր մնանք նորահաս սերունդին Հ.Մ.Ը.Մ-ի փառաւոր անցեալի պատկերէն բաժին մը խեղաթիւրուած, պղծուած փոխանցելու երեւոյթին դիմաց:

Հետեւաբար, անալոլ եւ ընդառաջելով մեր խիղճի ձայնին, հաւատարմութեամբ եւ ճշգրտութեամբ, հիմնուելով վաւերական տուեալներու եւ արխիւներու վրայ, դիմեցինք այս քայլին՝ սրբագրելու, ճշգրտելու եւ Հ.Մ.Ը.Մ-ի հարուստ պատմութեան այս փուլը իր հարազատ, պայծառ պատկերով ներկայացնելու համար:

Փառք ու պատիւ Հ.Մ.Ը.Մ-ին եւ իր անցեալի աննախընթաց, բարեբեր ու պատուաբեր ձեռքբերումներուն:

Նախ պիտի ներկայացնենք Հ.Մ.Ը.Մ-ի Հայկալի Ֆուլթայոլի խումբին պատուաբեր այն իրադրոժումը, որ արձանագրուեցաւ 1964-1965-ի եղանակին, երբ Հ.Մ.Ը.Մ-ի աննման եղբայրներու հետ, հակառակ բազմատեսակ խոչընդոտներու, յաջողեցանք անկարելին կարելի դարձնել եւ Հ.Մ.Ը.Մ-ի վայել գիտակցութեամբ, մեր ժողովուրդին արժանապատուութիւնը բարձր պահելու նախանձախնդրութեամբ, բազմիւր Սուրբոյ Ֆուլթայոլի առաջին խոյանութեան գահին, պատուաբեր յաղթանակ ապահովելէ ետք Սուրբոյ բանակի «Ալ ԺէՅՅ» խումբին դէմ:

Հ.Մ.Ը.Մ-ի ՀԱԼԷՊԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԽՈՒՄԲԻ ՓԱՌԱՒՈՐ ԱՆՅԵԱԼԷՆ (1962-1966)

1962-1966 տարիներուն, Հ.Մ.Ը.Մ-ի Հայկալի Ֆուլթայոլի կեանքին մէջ արձանագրուեցան պատմական յիշատակելի իրադրոժումներ եւ խոյանութիւններ:

1962-ին, Հ.Մ.Ը.Մ-ի Հայկալի եւ Դամասկոսի Ահլի խումբերուն միջեւ Սուրբոյ նախագահի բաժակին առաջին աւարտական մրցումը տեղի ունեցաւ Սուրբոյ նախագահ տղքի. Նագեմ Ալ Քուտսիի ներկայութեամբ:

Հ.Մ.Ը.Մ-ի աննման տղաքը գեղեցիկ, ներդաշնակ խաղարկութեամբ մեծ տպաւորութիւն ձգեցին Սուրբոյ հօրապաշտան կազմին Դամասկոսի Ահլիին վրայ, ոգի ի բռին պայքարելով անոր դէմ: Անոնք արժանավայել խաղարկութեամբ տիրացան 1962-ի նախագահական առաջին բաժակին, անսահման



Հ.Մ.Ը.Մ-ի բաժակակիր խումբը:

ուրախութիւն պատճառելով բոլորին եւ արդար հպարտութեամբ ողողելով բոլորին սրտերն ու հոգիները:

Հ.Մ.Ը.Մ-ի այս գեղեցիկ յաղթանակը Դամասկոսի խումբին դէմ յաղթանակ մըն էր Հ.Մ.Ը.Մ-ի համայն ընտանիքին, հայրութեան եւ մասնաւորաբար Հ.Մ.Ը.Մ-ի Հայկալի ընտանիքին համար՝ 1961-ի դէպքերէն ետք:

Այս փառաւոր յաղթանակը եկաւ մեր ժողովուրդին տրամադրութիւնը բարձրացնելու, անոր յոյս, լաւատեսութիւն եւ ինքնավստահութիւն ներշնչելու, որպէսզի արդար հպարտութեամբ, հաստատ հաւատքով, կուռ ինքնավստահութեամբ եւ յուսատու քայլերով իր կեանքի բնականոն, յաջող երթը շարունակէ:

Այդ օրը, երեկոյան ժամը 5-ին, դաշտ ժամանեց Սուրբոյ նախագահ տղքի. Նագեմ Ալ Քուտսին, ընկերակցութեամբ փոխ վարչապետ Ռաշատ Պարմատայի, խումբ մը նախարարներու եւ Սուրբոյ ոստիկանութեան ընդհանուր տնօրէն, գընդապետ Տապպալի:

Շեփորախումբը հնչեցուց սուրիական քայլերգը, ապա երկու խումբերը դաշտ ներկայացան իրաւարարներու առաջնորդութեամբ: Օրուան իրաւարարներն էին՝ միջազգային իրաւարար Ֆաուզի Թալլօ, կողմերու իրաւարարներ՝ Ատհամ Մաշնուք եւ Թալալի Մաշնուք:

Իրաւարարի ազդանշանին վրայ խաղը սկսաւ Ահլիի յարձակումով, սակայն Հ.Մ.Ը.Մ-ի բերդապահը եւ յետսպահ գիծը կասեցուցին Ահլիի բոլոր գրոհները: Առաջին կիսախաղը, հակառակ Ահլիի ճնշումին եւ կոշտ խաղարկութեան, հաւասարութեամբ վերջ պիտի գտնէր, եթէ իրաւարարը 43-րդ վայրկեանին չչնորհէր փենալթի մը, որուն հետեւանքով Ահլիի միջազգային խաղացող Իպրահիմ Մադրալի յաջողեցաւ կոլ նշանակել: Առաջին կիսախաղը աւարտին հասաւ 1-0 արդիւնքով, ի նպաստ Ահլիի:

Բ. կիսախաղին, Հ.Մ.Ը.Մ-ի տղաքը կազմակերպ յարձակումներու սկսան, գլխաւորութեամբ կեդրոնի հմուտ յաւաքապահ Գօգօ Քրիլճեանի: Ան յաջողեցաւ գեղեցիկ փոխանցումով գնդակը հասցնել Սարգիս Քոզաքեանին (Աբօշ): Վեր-



ՅՈՒՇԵՐ



ւարտին: Մրցումին արդիւնքն էր 3-2, ի նպաստ Հ.Մ.Ը.Մ.ի:

Մրցումէն ետք, երկու խումբերը իրաւարարներու գլխաւորութեամբ դէպի ԹՐԻԱԿԻՆ առաջնորդուեցան եւ Հ.Մ.Ը.Մ.ի խմբապետ եղբ. Անդրանիկ Սիւլիւքեան յաղթանակի բաժակը ստացաւ նախագահ տոքթ. Նազեմ Ալ Քուտսիի ձեռամբ, իսկ Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր մարզիկները ստացան յիշատակի ոսկեզօծ մետալներ՝ ֆուլթայոլի ֆետերասիոնի ատենապետին ձեռամբ:

Այսպիսով, Հ.Մ.Ը.Մ.ի Հայկալի ֆուլթայոլի խումբը արդարօրէն տիրացաւ Սուրիոյ հանրապետութեան նախագահի ֆուլթայոլի ախոյեանութեան առաջին տիտղոսին ու բաժակին՝ 1961-1962 եղանակին:

Փա՛ռք ու պատի՛ւ Հ.Մ.Ը.Մ.ին:

Յարգա՛նք, գնահատանք եւ երախտագիտութիւն բոլոր անոնց, ի մասնաւորի ախոյեան խումբի տղոց, որոնք կերտեցին պատմական աննախընթաց եւ հրաշալի այս նուաճումը, յաղթանակը:

Ստորեւ կը ներկայացնենք ախոյեան խումբի եղբայրներուն անունները.- Անդրանիկ Սիւլիւքեան (խմբապետ) Սարգիս Ահարոնեան, Սահակ Եղոյեան, Գաբրիէլ Պէրպէրեան, Սուրէն Երէցեան, Սարգիս Քէօշկերեան (Նեկրօ), Կիրակոս Քիլէճեան, Սարգիս Քոզաքեան (Աբօշ), Գրիգոր Քիլէճեան, Գրիգոր Սեւտալեան եւ Գէորգ Աւրնեան:

Հ.Մ.Ը.Մ.ի նախորդ խաղերուն նպաստած էին.- Գառնիկ Հաժժար, Կարպիս Պետիրեան, Յարութիւն Քահաբէճեան եւ Սարհատ Մերտխանեան: Խումբին մարզիչն էր եղբ. Արսէն Դանիէլեան:

Աւարտական մրցումին մեծագոյն աստղերը եղան Հ.Մ.Ը.Մ.էն եղբայրներ Անդրանիկ Սիւլիւքեան, Սահակ Եղոյեան, Սուրէն Երէցեան, Սարգիս Քէօշկերեան (Նեկրօ), Գրիգոր Քիլէճեան եւ Գէորգ Աւրնեան: Ահլիէն մարզիկներ՝ Իպրահիմ Մաղրիպի, Թըրքի Ալ Հալապի, Ֆիլիպ Ալ Շայէպ:

Մրցումին ընթացքին Հ.Մ.Ը.Մ. ունեցաւ 7 թորճըր, Ահլիէն՝ 13: Հ.Մ.Ը.Մ.ի հաշուոյն 13 ֆաուլ արձանագրուեցաւ, Ահլիէն՝ 3: Մրցումին ներկայ էին բազմաթիւ օտար լրագրողներ, յատկապէս՝ Լիբանանէն:

Հ.Մ.Ը.Մ.ի նշանակած երրորդ կոլէն ետք, խումբին մար-

ջինս գլխու ճկուն հարուածով յաջողեցաւ նշանակել հաւասարութեան կողմ: Այս կէտէն ետք, Ահլիէն դիմեց պաշտպանութեան եւ կարծր ու կոշտ խաղարկութեան: Այնուամենայնիւ, նոյնինքն Աբօշ 62-րդ վայրկեանին անսպասելի զօրաւոր հարուածով մը նշանակեց Հ.Մ.Ը.Մ.ի երկրորդ կէտը՝ խանդավառութիւն յառաջացնելով մարզադաշտի ԹՐԻԱԿԻՆներուն վրայ համախմբուած Հ.Մ.Ը.Մ.ի համակիրներուն ու բարեկամներուն մօտ:

Խաղին 72-րդ վայրկեանին, Ահլիի լաւագոյն մարզիկներէն Իպրահիմ Մաղրիպին, խաղի բերելէ ետք բերդապահ Անդրանիկը, յաջողեցաւ նշանակել գեղեցիկ կոլ մը՝ հաւասարեցնելով իր խումբին արդիւնքը: Այսպիսով աւարտին հասան խաղին 90 վայրկեանները՝ 2-2 հաւասար արդիւնքով:

Ըստ խաղի կանոններուն, մրցումը կէս ժամով երկարաձգուեցաւ, որպէսզի որոշուի ախոյեան խումբը:

Ահլիի կոշտ խաղարկութիւնը աւելի սաստկացաւ իրաւարարներու օգնութեամբ:

Հ.Մ.Ը.Մ.ի տղաքը երբեք չյուսահատեցան: Անոնք բազմապատկեցին իրենց կազմակերպուած յարձակումները եւ «հրաշքը» չուշացաւ: Խումբին ձախ ծայր Գէորգ Աւրնեան կայծակնային արագութեամբ սուրաց դէպի հակառակորդին բերդը եւ ուժգնօրէն հարուածեց գնդակը՝ ցնցելով Ահլիի բերդապահն ու բերդին ձողերը եւ նշանակելով Հ.Մ.Ը.Մ.ի յաղթանակի կոլը: Խաղին արդիւնքը եղաւ 3-2, ի նպաստ Հ.Մ.Ը.Մ.ին:

Այնուհետեւ, Հ.Մ.Ը.Մ.ի բերդապահ Անդրանիկը եւ յետսպահ ու միջնապահ գիծերը սքանչելի դիմադրութիւն ցոյց տուին մինչեւ խաղին վերջին վայրկեանը, երբ իրաւարարին սուլիչը լսուեցաւ՝ իբրեւ ազդանշան մրցումի ա-





զիկները ողջագուրուելով, իրենց ուրախութենէն գինովցած՝ եզակի բուրգ մը կազմեցին երրորդ եւ յաղթանակի կողմ նշանակող եղբ. Գէորգ Աւընեանին վրայ յենելով: Անմոռանալի էր պատկերը:

Ատնան Պոգո մրցումը կը մեկնաբանէր Սուրիոյ եւ Լիբանանի պատկերասփիւռի գոյգ կայաններէն, իսկ Ատնան Նաշէֆ խօսնակն էր Դամասկոսի ձայնասփիւռին:

ՖՈՒԹՊՈՒԼԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԱՆՆԱԽՆԸՆԹԱՅ ԵՐԵՒՈՅԹ

Ֆուտպոլի ֆետերասիոնի պատիժին պատճառով երկրորդ դասակարգի վերջին դիրքին վրայ գտնուող Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի ֆուտպոլի խումբը 1964-1965-ի եղանակի ախոյեանութեան, արդարօրէն, արժանավայել կերպով փառաւոր յաղթանակ մը արձանագրեց՝ տիրանալով Սուրիոյ ֆուտպոլի «Մումթագ» դասակարգի առաջին ախոյեանութեան տիտղոսին եւ բաժակին: Ապա, խումբը աստիճան առ աստիճան բարձրացաւ ախոյեանութեան գահին եւ հոն բազմեցաւ դժուար, սպառիչ մարաթոնեան մաքառումէ ետք:

1963-ի ամրան, բամպակի բաժակի մրցաշարքի աւարտական մրցումին, Հ.Մ.Ը.Մ. 3-2 արդիւնքով յաղթելէ ետք Հալէպի Ահլին, տիրացաւ մրցաշարքի բաժակին, շնորհիւ եղբայրներ Գրիգոր Սետալեանի (2) եւ Գօգո Քիլէճեանի (1) նշանակած կոլերուն:

Այս մրցումին, իրաւարարներու աններելի, բացայայտ կողմնակալութեան եւ անարդարօրէն հնչող սուլիչներուն ականատեսը ըլլալով, Հ.Մ.Ը.Մ.ի համակիրները թէեւ մրցումի ընթացքին կարողացան իրենց ջիղերուն տէրը ըլլալ, սակայն անոնց համբերութեան բաժակը ի վերջոյ յորդեցաւ, երբ իրաւարարներու անարդարութիւնը հասաւ իր գագաթնակէտին եւ պատճառ դարձաւ խլրտումներու եւ ընդվզումի:

Այս կացութեան իբրեւ հետեւանք մրցումը որոշ ժամանակ կանգ առաւ: Ոստիկանութիւնը միջամտեց եւ անդորրութեան հաստատումէն ետք մրցումը շարունակուեցաւ:

Հ.Մ.Ը.Մ.ի անգուգական եղբայրներուս հետ միասին յաջողեցանք խաղի վերջին 10 վայրկեանին մրցումին պատկերը՝ 2-1-ը բարեփոխել 3-2-ի, ի նպաստ Հ.Մ.Ը.Մ.ին:

Ի վերջոյ, Հ.Մ.Ը.Մ. յաջողեցաւ տիրանալ մրցաշարքի ախոյեանութեան տիտղոսին եւ բաժակին, հակառակ իրաւարարներու թափած ապաշնորհ ջանքերուն, բացայայտ անարդարութեան եւ բացարձակ կողմնակալութիւն արտայայտող սուլիչներուն:

Յաջորդ օրը Հալէպի ֆետերասիոնը իր արտակարգ նիստով տուաւ հետեւեալ անարդար որոշումները:-

1. Հ.Մ.Ը.Մ.ի խումբը 6 ամիս կախակայել եւ այս միջոցին անոր մարզական գործունէութիւնը սառեցնել:

2. Երկու խաղացողներ՝ եղբ. Սահակ Եղոյեան մէկ տարիով, իսկ եղբ. Սարգիս Քէօշկերեան (Նեկրօ) վեց ամիսով կախակայել:



Այս միջոցին Սուրիոյ ֆետերասիոնը «Մումթագ» դասակարգի նոր դրութիւն մը հաստատեց եւ այսպէս ունեցանք «Մումթագ», առաջին եւ երկրորդ դասակարգեր: Ապա, ֆետերասիոնը թելադրեց բոլոր ֆետերասիոններուն, որպէսզի իւրաքանչիւրը այս նոր դրութեամբ իր նահանգին մէջ գտումի մրցումներ կազմակերպէ:

Դժբախտաբար, Հ.Մ.Ը.Մ.ի խումբը դուրս մնաց գտումի այս մրցաշարքէն՝ ստացած անարդար պատիժին հետեւանքով եւ ինքնաբերաբար դատապարտուեցաւ երկրորդ դասակարգի վերջին դիրքին վրայ մնալու:

Սուրիոյ ֆետերասիոնին յաջորդ քայլը եղաւ կազմակերպել մրցումներ՝ իւրաքանչիւր դասակարգի ախոյեանը ճշդելու համար: Հ.Մ.Ը.Մ.ի խումբը իրաւունք ունեցաւ այս խաղերուն մասնակցելու:

Այսպէս, Հ.Մ.Ը.Մ.ի խումբը, քայլ առ քայլ, հաստատ հաւատքով, աննկուն կամքով, գործակցութեան ջանքերով յաջողեցաւ իր արժանավայել տեղը գրաւել «Մումթագ» խումբերու շարքին, եւ մասնակցիլ 1964-1965 եղանակի ախոյեանութեան մրցաշարքին՝ 5-0 բացառիկ արդիւնքով յաղթելէ ետք Վասպուրականի կազմին, որ հարկադրուած իր տեղը զիջեցաւ Հ.Մ.Ը.Մ.ին:

Այսպիսով, Հ.Մ.Ը.Մ. «Մումթագ» դասակարգին մէջ, Հալէպի Ահլիի կողքին, իր արդար դիրքը ապահովեց:

(Շար.1)





Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐՑԱԽԻ ՄԱՄՆԱԾԻԲՂԸ ՊԱՏՐԱՍՏ՝ ՄԿԱՈՒՏԱԿԱՆ ԻՐ ՇԱՐՔԵՐԸ ԽՏԱՑՆԵԼՈՒ

**Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՊԱԳԱՅ 17 ԽՄԲԱՊԵՏՆԵՐ ՏՈՒԻՆ
ԻՐԵՆՑ ՄԿԱՈՒՏԱԿԱՆ ԵՐԴՈՒՄԸ**

Թղթակից ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ



ինգլաբերթի, 20 Հոկտեմբերի 2022-ը յիշատակելի օր մը եղաւ արցախահայրենի համար: Երեկոյեան ժամը 6.30-ին,

Ստեփնակերտի Շարլ Ազնաւուրի անան սրահը բերնէ բերան լեցուն էր մեծ թիւով Հ.Մ.Ը.Մ.ական եւ Հ.Մ.Ը.Մ.ասէր հայորդիներով, որոնք համախումբաբար էին ներկայ գտնուելու Հ.Մ.Ը.Մ.ի Արցախի Մեկուսի մասնաճիւղի ապագայ խմբապետներու սկաուտական երգման արարողութեան:

Սրահ փութացած էին Անդրէաս Քհնյ. Թաւատեան, Հ.Յ.Դ. Բիւրոյի Անդամ Դաւիթ Իշխանեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Դաւիթ Յակոբեան, Արցախի կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարմնամարզի փոխ նախարար Լեւնիկ

Յովհաննիսեան, Արցախի Ազգային Ժողովի անդամ եւ Հ.Յ.Դ. Արցախի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Արթիւր Մոսիսեան, Արցախի Ազգային Ժողովի անդամ Վահրամ Բալայեան, Հ.Յ.Դ. Արցախի Կեդրոնական Կոմիտէի անդամներ՝ Ալիոնա Դաւիթեան, Արա Պուլլուզեան եւ Ժիրայր Շահիճանեան,

ՀՕՄ-ի Արցախի միաւորի ատենապետ Լիլիթ Մարտիրոսեան, մեծ թիւով ծնողներ եւ հիւրեր:

Յայտագիրը սկիզբ առաւ մասնաճիւղի արի-արեւոյճներու խորհրդաւոր մուտքով: Արցախի եւ Հ.Մ.Ը.Մ.ի դրօշներու առաջնորդութեամբ, անոնք սրահի երկու կողմէն հաստատակամ քայլե-





ՄԱՍՆԱԾԻՂԷ ՄԱՍՆԱԾԻՂ

րով բարձրացան բեմ եւ ոգեւորութեամբ խմբերգեցին Արցախի եւ Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգները: Ապա, ներկաները հրաւիրուեցան վայրկեան մը յոտնկայս յարգելու յիշատակը մեր հին ու նոր բոլոր նահատակներուն, որոնք իրենց կեանքը տուին Արցախի եւ արցախահայրենիքի պաշտպանութեան մարտերուն:

ՔՈՅՐ ՄԱՐՈ ՔԷՇԻՇԵԱՆԻ ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍՏԻ ԽՕՍՔԸ

Ներկաներուն բարի գալուստի խօսքերով ողջունեց քոյր Մարո Քէշիշեան, որ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ գործողուած էր Արցախ, վերակազմաւորելու վերաւոր Արցախի Հ.Մ.Ը.Մ.ի Մեկուսի մասնաճիւղը:

«Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն՝ Հ.Մ.Ը.Մ.,

«Բարձրացի՛ր-բարձրացու՛ր» իմաստալից նշանաբան,

«Առողջ միտք՝ առողջ մարմնի մէջ» կարգախօս,

«Մի՛շտ պատրաստ» սկառտական կարգախօս,

«Տիպար քաղաքացի, ազգանուէր հայ,

«Հաւատացեալ քրիստոնեայ,

«Ազգի ու հայրենիքի նուիրեալ ծառայ,

«Հայակերտման դարբնոց,

«Բարոյական իմաստ ունեցող գաղափարախօսութիւն եւ նպատակներ,

«Ահա ա՛յս է Հ.Մ.Ը.Մ.ը եւ այս ալ պիտի շարունակէ մնալ»: Այս հաստատումներով քոյր Մարո Քէշիշեան ներկայացուց Հ.Մ.Ը.Մ.ը եւ վստահութիւն յայտնեց, որ Արցախի Հանրապետութեան մէջ իր արմատները ամրապնդած Հ.Մ.Ը.Մ.ի Արցախի Մեկուսի մասնաճիւղի երդուեալ խմբապետական կազմը ո՛չ միայն մեր պատանիները պիտի դաստիարակէ, այլեւ՝ նուիրումով եւ յարատեւ աշխատանքով պիտի պատրաստէ մեր սիրելի Արցախի ապագայ նուիրեալ ղեկավարները:

Ապա, հպանցիկ ակնարկ մը նետելով Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներուն, պատմական անցած ուղիին, Սփիւռքի եւ հայրենիքի մէջ ծաւալած իր աշխատանքներուն, համագաղութային եւ այնուհետեւ



տեւ համահայկական դիմադիմ ստացած հսկայ այս կազմակերպութեան նուաճումներուն, ան հաստատեց, որ Հ.Մ.Ը.Մ.ը յաջողած է իր առաքելութեան մէջ, որովհետեւ իր գաղափարախօսութեան եւ նպատակներուն մէջ դրած է բարոյական իմաստ:

«Եւ այսօր, Հ.Մ.Ը.Մ.ականի յատուկ հպարտանքով կը յայտարարեմ, որ համահայկական կառուցի վերածուած Հ.Մ.Ը.Մ.ը իր արմատները կ'ամրապնդէ նաեւ Արցախի Հանրապետութեան մէջ եւ դուք քիչ ետք ականատես պիտի ըլլաք այդ արմատները հզօրացնող սկառտական խմբապետական կազմի հրապարակային երդման արարողութեան: Ես կ'ասեմ չունիմ, որ այս կազմը նուիրումով պիտի գործէ եւ պիտի կարենայ իր շուրջ համախմբել խտացած

սկառտական շարքեր, որոնք ազգային ոգիով լեցուած, նուիրումով պիտի գործեն Արցախի Հանրապետութիւնը հզօրացնելու տնտեսական, քաղաքական, կրթական, գիտական, մշակութային եւ մարմնամարզի մարզերէն ներս: Պիտի դառնան իսկական բանակ, պիտի շարունակեն մեր անմահ նահատակ հերոսներու կիսատ ձգած գործունէութիւնը, մինչեւ որ Արցախը ազատագրուի, Հաղթութիւն, լուսաշող Շուշին եւ մեր ապրօհի գրաւուած հողը վերադարձնեն իրենց իսկական տէրերուն, քաջարի արցախցիներուն եւ հպարտօրէն շարունակեն երգել «Յառա՛ջ, նահատակ ցեղի անմահներ»: Արցախը մերն է: Արցախը պիտի մնայ ազատ, անկախ ու ամբողջական», եզրակացուց քոյր Մարո Քէշիշեան:





Հ.Մ.Ը.Մ. ԱՐՑԱԽ



Քոյր Քէշիշեանի պատգամէն ետք, ապագայ խմբապետներէն քոյր Անուշիկ Ղուկասեան մենեղեց «Իմ Ղարաբաղ»ը, կիթառի ընկերակցութեամբ՝ Աննա Գաբրիէլեանի, մեծապէս տպաւորելով հանդիսատեսը:

ԱՐՑԱԽԻ ՄԱՄՆԱՃԻՒՂԻ ԱՏԵՆԱՊԵՏԻՆ ԽՕՍԲԸ

Հ.Մ.Ը.Մ-ի Արցախի Մեկուսի մասնաճիւղին պատգամը փոխանցեց ատենապետ եղբ. Դաւիթ Գրիգորեան, որ ըսաւ.- «Այսօր, Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան ընտանիքում մեծ տօն է: Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքը համալրուում է գաղափարակից եւ խանդավառ երիտասարդներով»:

Ապա, արցախահայ երիտասարդի դաստիարակութեան մէջ Հ.Մ.Ը.Մ-ի առաքելութեան կարեւորութիւնը ընդգծելով, եղբ. Գրիգորեան շարունակեց ըսելով՝ «Ցաւօք սրտի, այսօր Արցախում սեւ ամպեր են կուտակուել եւ միայն համախմբումով կարող ենք մենք հասնել մեր յաղթանակին: Այս ամպիտնից կ'ուզեմ շնորհակալութիւնս յայտնել մեր շատ սիրելի քոյր Մարո Քէշիշեանին, որ այս ծանր ժամանակաշրջանում, այս հինգ ամիսներում եղաւ Արցախում եւ ամենակարեւորը արցախցու կողքին»:

Եղբայրը շնորհակարան երգուեալ քոյր-եղբայրները եւ անոնց ուշադրութեան յանձնեց, թէ «Այս օրը շատ տպաւորիչ եւ միեւնոյն ժամանակ պարտաւորեցնող է բոլորիս համար, կը ցանկանամ, որ այսուհետեւ Արցախում լինի

միայն խաղաղութիւն»:

Գեղեցիկ այս պատգամէն ետք, քոյր Մէրի Առաքելեան ապրումով արտասանեց Պարոյր Սեւակի «Անլուրի գանգակատուն»էն հատուածներ եւ արժանացաւ ներկաներու քաջալերական ծափողջոյններուն:

Հ.Յ.Դ. ԱՐՑԱԽԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՒՆ ԽՕՍԲԸ

Իր սրտի խօսքը փոխանցեց Հ.Յ.Դ. Արցախի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Արթուր Մոսիսեան, որ անդրադառնալով երեք տարի առաջ Արցախի մէջ հիմնուած Հ.Մ.Ը.Մ-ի 111-րդ մասնաճիւղին եւ անոր ստեղծած մեծ ոգեւորութեան ըսաւ. «Ցաւօք, դրանից յետոյ սկսուած պատերազմը աղէտալի եւ պատերազմեան շրջանը որոշակի խընդիրներ առաջացրեցին եւ երկու-երեք տարի, ինչպէս մնացած բոլոր այլ կառույցները, այնպէս էլ Հ.Մ.Ը.Մ-ական կեանքը անհրաժեշտ արագութեամբ ու աշխուժութեամբ աչքի չընկաւ: Ասկէ հինգ ամիս առաջ Արցախ հրաւիրուած



քոյր Մարո Քէշիշեանի եւ Հ.Մ.Ը.Մ-ի վարչութեան ջանքերով կարողացան աշխուժացնել այդ աշխատանքը եւ այսօր մենք ունենք Հ.Մ.Ը.Մ-ի արդէն աշխատող կառույց, արդէն վարիչների մեծ խումբ եւ յուսամ արագ կ'ընդլայնուի բաց թողածը կ'ընկնի իր տեղը»:

Մոսիսեան նաեւ յստակացուց հետեւեալը, նշելով, թէ «Կարծիք կայ, որ Հ.Մ.Ը.Մ-ը Դաշնակցութեան կառույց է, սակայն ան ինքնակազմակերպուող, ինքնակառավարուող մարմին է եւ ուղղահայեաց ենթակայութիւն չունի: Կրկնակի թիւրիմացութիւն է այն, որ Դաշնակցութիւնը ընդհանրապէս կապ չունի Հ.Մ.Ը.Մ-ի հետ, որովհետեւ Դաշնակցութիւնը չի կրնար կապ չունենալ հայաստանացուութիւն, հայեցի դաստիարակութիւն, առողջ սերունդ դաստիարակող այսպիսի կազմակերպութեան հետ: Հ.Յ.Դ-ի կողմէ Հ.Մ.Ը.Մ-ը գուրգուրանքի առարկայ է»:

Մոսիսեան շնորհակալութիւն յայտնեց քոյր Մարո Քէշիշեանին իր նուիրեալ աշխատանքին համար, շնորհակարան եւ բարի երթ մղած եղբայրներուն եւ համոզուած յայտնեց, որ Հ.Մ.Ը.Մ-ը իր կապը կը շարունակէ ազգային, թեմական բոլոր կառույցներուն հետ եւ կ'արժանանայ անոնց գուրգուրանքին:

Ղարաբաղեան մարտին նուիրուած գեղեցիկ երգով ներկաները խանդավառեցին քոյրեր Աննա Խալատովա եւ Աննա Մատրեան, արժանանալով անոնց բարձր գնահատանքին:

17 ՔՈՅՐ-ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

Յայտագիրի վերջին բաժինով տեղի ունեցաւ օրուան գլխաւոր առանցքը հանդիսացող սկսուողական երդման արարողութիւնը: Երկու շարքով բեմ ներկայացան 17 քոյր-եղբայրներ: Բեմ հրաւիրուեցան նաեւ երգուեալ խմբապետներու նուիրական աշխատանքը երաշխաւորող կնքահայրները, յանձինս Դաւիթ Յակոբեանի, Արթուր Մոսիսեանի, Արամ Ֆրէնկեանի, Վահրամ Բալայեանի, Արամ Ֆրէնկեանի, Ժիրայր Շահիճեանեանի, որոնք գեղեցիկ կոճղի վրայ





ՄԱՍՆԱԾԻՂԷ ՄԱՍՆԱԾԻՂ



տեղադրուած սկաուտական դաւանանքին 12 կէտերը արտացոլող մոմերը վառեցին, իսկ անոնց կեդրոնը տեղադրուած սկաուտական երգման երեք կէտերը խորհրդանշող Եռագոյն մոմերը վառեցին Անդրէաս Քհնյ. Թաւատեանն ու Դաւիթ Իշխանեանը:

Այնուհետեւ, 17 քոյր-եղբայրներ, քոյր Աննա Խալատովայի գլխաւորութեամբ, Հ.Մ.Ը.Մ.ի Ծրագիր-Կանոնագիրին, Ս. Գիրքին եւ Նարեկացիի աղօթագիրքին վրայ, հրապարակաւ երգուեցին ըլլալ հաւատարիմ Աստուծոյ, ծառայել իրենց հայրենիքին ու ազգին, միշտ օգնել ուրիշին եւ հնազանդիլ հայ սկաուտի դաւանանքին: Տպաւորիչ այս արարողութենէն ետք, ներկաները յոտնկայս եւ երկարաշունչ ծափողոյններով ողջունեցին երգուեալ քոյր եղբայրները, որոնք կնքահայրներու ձեռամբ ստացան իրենց փողկապները, պաշտօնապէս դառնալով Հ.Մ.Ը.Մ.ի Արցախի մասնաճիւղի արի-արեւոյշներ:

Հ.Մ.Ը.Մ.ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՍՔԸ

Ի տես գեղեցիկ այս երեւոյթին, իր սրտի խօսքը արտասանեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Դաւիթ Յակոբեան, որ շնորհաւորելով երգուեալ քոյր-եղբայրներու մոտքը Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիք ըսաւ. «Մենք մեծ աշխատանք ունենք Արցախում եւ յոյսով եմ, որ Արցախի երիտասարդութիւնը նման գեղեցիկ տարագաւոր շարքերով պէտք է համալրի մեր Հ.Մ.Ը.Մ.ական շարքերը եւ Արցախում



ազգային դաստիարակութիւն, ազգային ոգին, շունչը մեր ներկայութեամբ պէտք է բերենք, որովհետեւ մենք ամէն տեղ որ կանք, մեր հիմնական առաքելութիւնը պիտի ըլլայ հայ երիտասարդը, հայ պատանին ազգային բարձր գաղափարներով դաստիարակել, առողջ մարմնով օժտել, որպէսզի կարողանանք մեր դաւաւանքին եւ խոստմանը հաւատարիմ գործունէութիւն առաջ տանել»: Եղբ. Յակոբեան յոյս յայտնեց նաեւ, որ յաջորդ հանդիպման Արցախի մէջ արդէն հարիւրաւոր սկաուտներ, 2019 թուականի յաղթական տողանցքին նման, դարձեալ Արցախի մէջ հպարտօրէն կը տողանցեն եւ մեզ բոլորիս կը հաղորդեն, թէ՛ «Արցախը անպարտ է եւ Արցախի երիտասարդութիւնը ազգային բարձր ոգով, միշտ տողանցքով, կարգապահ կերտելու է մեծ ու գեղեցիկ հայրենիք»:



ՁԵՌՆԱՐԿԻՆ ՓԱԿՈՒՄԸ

Գեղեցիկ երեւոյթ էր, որ ձեռնարկի աւարտին, երգուեալ արի-արեւոյշները, առ ի երախտագիտութիւն քոյր Մարօ Քէշիշեանին, անոր նուիրեցին ծաղկեփունջ մը եւ իրենց խմբանկարը՝ «Ամենալաւ խմբապետուհու» մակագրութեամբ:

Տպաւորիչ ու պատմական սկաուտական այս երգման արարողութիւնը վերջ գտաւ «Ով հայ արի» սկաուտական քայլերգով: Այնուհետեւ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, ուր եւս հնչեցին խրախուսական եւ շնորհաւորական պատգամներ: Արարողութեան մասնակիցները եւ յատկապէս երգուեալ Հ.Մ.Ը.Մ.ականները ուշ երեկոյեան տուն մեկնեցան իրենց հետ տանելով Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութիւնն ու ոգին երիտասարդութեան մէջ դրոշմելու հաստատակամութիւնը:





Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԿԱՌԻՏ ԽՄԲԱՊԵՏՆԵՐՈՒ ԱՇԽԱՏԱՆՔ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՄԷՋ

Թղթակից ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

Շաբաթ, 1 Հոկտեմբեր 2022-ի կէսօրուան ժամը 1-ին, Ստեփանակերտի թիւ 2 դպրոցի մուտքին զետեղւած ազգային հերոս Բեկորի կրտսեղըրին դիմաց, «Յառաջ նահատակ» քայլերգով սկիզբ առաւ Հ.Մ.Ը.Մ-ի Արցախի Մեկուսի մասնաճիւղին սկսուող խմբապետներուն աշխատանքը: Արդէն բաւական փորձառութիւն ձեռք բերած Հ.Մ.Ը.Մ-ի ապագայ խմբապետները աւելի ինքնավստահ ու հաւատքով սկսան իրենց աշխատանքը, զոր լաւապէս դեկավարեցին քոյրեր Ալինա Ասրեան եւ Անի Իսրայէլեան: Օրուան աշխատանքներուն հետեւեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի Արցախի Մեկուսի

մասնաճիւղի ատենապետ եղբ. Դաւիթ Գրիգորեան:

Մարզանքի կատարումէն ետք խումբը անցաւ դասարան, ուր քոյր Աննա Գաբրիէլեան խօսեցաւ նահատակ ազատամարտիկ Ջիւան Աբրահամեանի մասին: Ապա, քոյր Անի Իսրայէլեան ներկայացուց կենսագրութիւնը Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադիրներէն Յովհաննէս Հինդլեանին, իսկ քոյր Ալինա Ասրեան՝ Շաւարշ Քրիսեանին: Օրուան գլխաւոր նիւթը «Ազգ եւ հայրենիք»ն էր, որոնց մասին լայն բացատրութիւններ տուաւ քոյր Մարո Քէշիշեան:

Այնուհետեւ, մասնակիցները բաժնուեցան երկու խումբի եւ վարժարանին շրջակայքը մեծ ոգեւորութեամբ հետախուզական նշաններով յաջող արշաւ մը կատարեցին: Ապա, հաւաքուեցան դպրոցին մարզադաշտը եւ սկսուողական խաղերով հաճելի ժամանց մը ունեցան:

Անոնք յատկապէս յիշեցին Ուաշինկթընէն Ստեփանակերտ այցելած քոյր Կալին եւ խաղացին անոր սորվեցուցած գաւազաններով խաղը: Օրուան սկսուողական աշխատանքը վերջ գտաւ յետմիջօրէի ժամը 3.30-ին: Արի-արեւոյշները տուն մեկնեցան, յաջորդ օրը դարձեալ հանդիպելու խոստումով:





ՄԱՍՆԱԾԻՂԷ ՄԱՍՆԱԾԻՂ



Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐՑԱԽԻ ՄԵԿՈՒՄԻ ՇՐՋԱՆԻ ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ԱՇԽՈՅԺ ՇԱԲԱԹ-ԱՎԵՐՋԸ

Մարտ Բեռլինի Մեծ Փառանկալի

17-18 Սեպտեմբեր 2022-ի շաբաթավերջը բազմաթիվ հետաքրքրական անցավ Հ.Մ.Ը.Մ.Ի Արցախի Մեկուսի շրջանի ապագայ սկսողական խմբապետական կազմին համար: Արդեն բազմաթիվ թեկնածուները սկսած են իրենք ղեկավարել խումբի աշխատանքները, ծրագիր կազմել եւ գործնականացնել զայն:

Կիրակի, 17 Սեպտեմբերին, աշխատանքը ղեկավարեցին քոյր Վիկա Մկրտչեանն ու Գեղամ Բեգլարեանը: Աշխատանքին բացումը կատարուեցաւ նահատակ Բեկորի՝ Աշոտ Ղուրեանի կիսանդրին առջեւ Հ.Մ.Ը.Մ.Ի քայլերգին խմբերգով: Կիսանդրին երկու շաբաթ առաջ զետեղուած էր թիւ 2 դպրոցին բակը, ուր յաճախած էր ան: Ապա, օրուան աշխատանքը շարունակուեցաւ մարզանքով, որուն յաջորդեց Հայաստանի եւ Արցախի դրօշներուն, ինչպէս նաեւ՝ Հայաստանի զինանշանին իմաստները բացատրող դասախօսութիւնը: Այնուհետեւ խաղի ժամն էր: Խումբը ծանօթացաւ Գիմի խաղին եւ բոլորն ալ բացառիկ յիշողութեամբ կատարեցին զայն, ապա երկու խումբի բաժնուած՝ քոյր-եղբայրները մեծ հաճոյքով ունեցան պատրաստուի մրցում մը, որուն յաջորդեցին սկսողական շարքային աշխատանքներ եւ պատուոյ հարթակի հիւրերը բարեկերու ձեւի ուսուցում: Օրուան ծրագիրը եզրափակուեցաւ ցարդ սորված գիտելիքներու վերաքաղով:

Կիրակի, 18 Սեպտեմբերին, պատասխանատուն քոյր Տաթև Մարտիրոսեանն էր: Բացման արարողութենէն, մարզանքէն, սկսողական նոր երգեր ու խաղեր սորվելէ ետք, քոյր Տաթևը քանի մը հաճելի հանելուկներ ներկայացուց եւ դասախօսեց «Լիզպոն հինգ»-ի մասին: Օրուան երկրորդ դասախօսութեան նիւթն էր՝ սկսողական բանակումները եւ անոնց վայրերու ընտրութիւնը, անհրաժեշտ իրերու ապահովումը եւ անոնց ընթացքին աշխատանքներու ծրագրումը: Յաջորդ շաբթուան համար, իւրաքանչիւր մասնակցի պարտականութիւն տրուեցաւ ազգային հերոս մը ընտրելու, գրաւոր տեղեկութիւններ հաւաքելու անոր մասին եւ աշխատանքային յաջորդ ծրագիրին ներկայացնելու զայն: Պարտականութիւնը մեծ ոգեւորութեամբ ընկալուեցաւ: Օրուան աշխատանքը եզրափակուեցաւ «Ո՛վ հայ արի» սկսողական քայլերգով: Այնուհետեւ, խումբը հրաւիրուեցաւ միասնական ճաշի:

Յայտնենք, որ սկսողական այս խմբակը ինքնաբերաբար մասնակցեցաւ Արցախի անկախութիւնն ու արցախահայութեան ապահովութիւնը պահանջող Ստեփանակերտի հրապարակի հաւաքներուն:





Հ.Մ.Ը.Մ. ԿԼԱԿԻՆ



**Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐՑԱԽԻ
ՄԵԿՈՒՄԻ ՇՐՋԱՆԻ
ՄԿԱՌԻՏԱԿԱՆ
ԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ
ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ
Ա. ԲԱՆԱԿՈՒՄԸ**

Մարտ Բնակչության ՄԵՓԱՆԱԿԵՐՏ

11 -15 Օգոստոս 2022-ին, Forest Club բանակավայրին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Արցախի Մեկուսի շրջանի սկաուտական խմբապետական առաջին դաստիարակչական բանակումը, մասնակցութեամբ 20 խոստմնալից արիարենոյճներու:

Այսպէս, բանակումին առաջին օրը, Հինգշաբթի, 11 Օգոստոս 2022-ի կէսօրէ առաջ ժամը 11-ին հաւաքուեցանք Ստեփանակերտի հրապարակ, «Արմենիա» պանդոկին դիմաց, ուրկէ ճամբայ ելանք դէպի Forest Club բանակավայր: Ծամբան հանդիպեցանք թիւ 2 դպրոց, ուրկէ առինք սկաուտական գաւազաններն ու պարանները:

Բանակավայր հասնելէ ետք, բանակողները առաւելաբար սկաուտները, զբաղեցան վրանները լարելով, իսկ արենոյճները՝ խոհանոցի դասաւորումով: Բանակումի ամբողջ տեւողութեան մեզի հետ մնաց խոհարար մը, որ օրը-օրին ճշդապահութեամբ եւ սիրով կատարեց իր պարտականութիւնները:

Կէսօրին, ճաշելէ ետք, մասնակիցները բաժնուեցան երեք խմբակի (Բագէ, Առիւծ եւ Արծիւ), ապա տեղի ունեցաւ վրաններու բաժանումը, ուր տեղաւորուելէ ետք, բոլորը զբաղեցան բանակավայրի մաքրութեամբ:

Քիչ մը հանգիստէ ետք յստակացան գիշերուան հերթապահներու եւ պահակներու ցուցակներն ու իրենց պահակութեան ժամերը: Կատարուեցաւ այնպիսի դասաւորում, որ բոլոր բանակողներն ալ ամէն գիշեր պահակութիւն կատարեն, տարբեր ժամերու:

Ապա, մասնակիցներուն բացատրուեցաւ դրօշակի իմաստը, դրօշակի արարողութեան կարեւորութիւնը, իմաստը եւ զայն գործածելու ձեւերը:

Նոյն օրուան երկրորդ դասախօսութիւնը խարոյկ պատրաստելու եւ վառելու, ինչպէս նաեւ խարուկահանդէս կազմակերպելու ձեւերն ու զայն իրականացնելու կարեւորութեան մասին էր:

Երեկոյեան, ընթրիքէն ետք տեղի ունեցաւ բանակումին առաջին խարուկահանդէսը, որ մեծ ոգեւորութիւն ստեղծեց բանակողներուն մօտ: Բանակողները վայելեցին պատմական սամովարով պատրաստուած համադամ թէյը: Ժամը 11-ին քնանալու ժամն էր, սակայն բանակողները այնքան ոգեւորուած էին, որ ամբողջ գիշեր չքնացան:

Բանակումին երկրորդ օրը, Ուրբաթ, 12 Օգոստոսը եղաւ չափազանց հետաքրքրական. առաւօտեան զարթնում, լուսցւիլ, մարզանք, վրաններու մաքրութիւն, դրօշակի արարողութիւն, նախաճաշէն եւ վրաններու քննութեանէն ետք, բանակողները աշխուժութեամբ աշխատանքի անցան:





ՄԱՍՆԱԿԻՂԵ ՄԱՍՆԱԿԻՂ



Օրուան առաջին դասախօսութիւնը պահակութեան մասին էր (Կամատ, կարեւորութիւն, փոխանցման ձեւ, ապահովութիւն...), ապա փոքր հանգիստ, խաղ ու կանչէ ետք, ապագայ մեր խմբապետական կազմը վերաքաղ մը կատարեց հետախուզական նշաններու եւ այնուհետեւ երկու խումբի բաժնուած՝ կատարեց անոնց գործնականը, որուն անհամբեր կը սպասէին: Արշաւէն ետք, երկու խումբերը քով-քովի եկան, բաղդատական կատարեցին դրուած եւ բացայայտուած հետախուզական նշաններուն շուրջ եւ արդիւնքը գոհացուց բոլորը:

Կէսօրուան ճաշէն եւ հանգիստէն ետք, բանակողները գրուցեցին խմբապետի մը յատկութիւններուն եւ պարտականութիւններուն մասին եւ կենդանի օրինակներով ընդգծեցին իւրաքանչիւր կէտի կարեւորութիւնը:

Կէսօրէ ետք, խարոկահանդէսի ծրագիրին պատրաստուելէ եւ խարոկի համար փայտ հաւաքելէ ետք, օրուան վերջին դասախօսութիւնը Հ.Մ.-Ը.Մ-ի կառուցին մասին էր, որուն մեծ հետաքրքրութեամբ հետեւեցան մասնակիցները (Կեդրոնական, Շրջանային, մասնաճիւղի եւ մեկուսի մասնաճիւղի վարչութիւններու ընտրութիւն, աշխատանքային տարիներ, պարտականութիւններ եւ պարտաւորութիւններ):



ՄԱՐՁԻԿ, 42ԸԴ ՏԱՐԻ, ԹԻԻ 427

մասնակիցներն ալ գոհունակութեամբ արտայայտուեցան օրուան յայտագիրին մասին եւ ամբողջական նկատեցին զայն: Եզրափակիչ աշխատանքը բոլորին սիրելի խարոկահանդէսն էր, զոր հետաքրքրական նորութիւններով կատարեցին խմբակները:

Ժամը 11-ին հանգում: Օրուան հերթապահն ու պահակները անցան իրենց պարտականութիւններուն, իսկ մնացեալները՝ վրան: Բանակումի երկրորդ օրն ալ յաջողութեամբ ավարտեցաւ:

Բանակումին երրորդ օրը, միջնորդտին ամբողջովին ընտելացած՝ ապագայ խմբապետները աւելի ինքնավստահ ու համարձակ կատարեցին օրուան յայտագիրը:

Սովորական աշխատանքներէն ետք, Հ.Մ.-Ը.Մ-ի Արցախի Մեկուսի շրջանի վարչութեան հրաւերով, կէսօրին բանակավայր այցելեց Արցախի Ազգային Անվտանգութեան Ծառայութեան նախարարութենէն տղքթ. Տիգրան Ղազարեան եւ դասախօսեց նախնական բուժօգնութեան մասին:

Բժիշկը մեծ համբերութեամբ եւ մանրամասն բացատրութիւններ տուաւ մարդոց արտակարգ իրավիճակի եւ անկէ դուրս գալու միջոցներուն մասին, կեդրոնացաւ զանազան տեսակի թունաւորումներու եւ անոնց բուժման միջոցներուն մասին, խստօրէն թելադրելով ինքնաբուժում չկատարել: Ան նաեւ ներկայացուց մարդու մարմնի համակարգին զանազան բաժինները, ինչպէս նաեւ գործնական աշխատանքներ կատարեց շտապ օգնութիւն կանչելու, պատգարակ պատրաստելու եւ հիւանդը հիւանդանոց փոխադրելու միջոցներու մասին: Ան յատկապէս շեշտեց առանց բժիշկի խորհուրդին դեղորայք չտալ ոեւէ հիւանդի: Բժիշկը թուարկեց նաեւ այն բոլոր անհրաժեշտ դեղերն ու նախնական օգնութեան օգտակար իրերը, որոնք տեղ պէտք է գտնեն բուժօգնութեան պայտուսակին մէջ:





Հ.Մ.Ը.Մ. ԱՐՑԱԽ



վայրին ապահովությունը ըստանձնեցին օրուան հերթապահներն ու պահակները:

Կիրակի, 14 Օգոստոսը բանակումին վերջնական օրն էր: Յալեկալ աշխուժութիւնը մեծապէս զգալի էր բանակավայրին մէջ: Բանակողները առաւել պատրաստակամ, առաւել օրէնքին գիտակից աշխատանք ցուցաբերեցին: Թէեւ եղանակը շատ տաք էր, սակայն քիչ մը ազատ ժամերը երկարաձգելով, օրուան աշխատանքները ընթացան կանոնաւոր: Այսպէս, առաւօտեան զարթնումէն եւ անոր յաջորդող սովորական աշխատանքներէն ետք, զրոյց-դասախօսութիւն տեղի ունեցաւ սկաուտական բարեւի մասին (իմաստն ու տեսակները), անդրադարձ կատարուեցաւ նաեւ բանակումներու մասին, յիշեցուցան անոնց տեսակները, ընդգծելով անոնց կարեւորութիւնը:

Կէսօրին ճաշէէ եւ հանգստանալէ ետք, խմբակները շարունակեցին իրենց ձեռնարկ աշխատանքները:

Յետմիջօրէին, ընդհանուր վերաքաղ մը կատարուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի մասին ցարդ փոխանցուած գիտելիքներու մասին, որուն ոգեւորութեամբ մասնակցեցան ներկաները: Ապա, դասախօսութիւն մը ներկայացուեցաւ սկաուտական բանակումներու կարեւորութեան, տեսակներուն, գործադրութեան եւ անոնց իրագործելի յայտագիրներուն մասին: Այնուհետեւ շարունակուեցաւ օրուան յայտագիրը, խարուկահանդէսի ծրագրի պատրաստութիւն եւ խարուկի համար փայտ հաւաքել:

Շաբաթ առաւօտեան բանակավայր այցելեց եւ բանակումի աշխատանքներով հետաքրքրուեցաւ Հ.Յ.Դ. Արցախի Կեդրոնական Կոմիտէի անդամ եղբ. Արա Պուլուզեան, իսկ կէսօրէ ետք՝ Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Դաւիթ Իշխանեան, որ հետեւեցաւ նաեւ սկաուտական գիտելիքներու վերաքաղին:

Դրօշակի արարողութենէն եւ ընթրիքէն ետք, տեղի ունեցաւ օրուան աշխատանքի արժեւորում: Բոլոր մասնակցներն ալ գոհունակութեամբ արտայայտուեցան օրուան յայտագիրին մասին եւ շնորհակալութիւն յայտնեցին բանակումի կազմակերպման եւ անոր ընթացքին ներկայացուած օգտակար նիւթերուն համար:

Օրուան աշխատանքը եզրափակուեցաւ բոլորին սիրելի խարուկահանդէսով, որ աւելի հարուստ էր իր յայտագիրով՝ քան նախորդ օրերունը: Այնուհետեւ, բանակավայրին ապահովութիւնը ըստանձնեցին օրուան հերթապահներն ու պահակները:

Յայտնենք, թէ բանակողներուն զբաւոյր տրամադրուած էին իրենց ցարդ սորված սկաուտական գիտելիքները: Օղի տաքութեան պատճառով, կէսօրուան ճաշէն ետք հանգիստի ժամը երկարաձգուեցաւ, որպէսզի ապագայ մեր խմբակները առիթը ունենան գէթ ընթերցելու իրենց տրամադրուած սկաուտական գիտելիքները:

Կէսօրէ ետք տեղի ունեցաւ սկաուտական գիտելիքներու զարգացման մրցում: Բանակողները բաժնուեցան չորս խմբակի: Արդար ըլլալու համար, խմբակներու բաժանումը կատարուեցաւ վիճակաձգութեամբ: Հարցումներուն ընդհանուր արժէքը 50 նիշ էր: Թիւ 1 եւ 2 խմբակները ապահովեցին

տանքներէն ետք, զրոյց-դասախօսութիւն տեղի ունեցաւ սկաուտական բարեւի մասին (իմաստն ու տեսակները), անդրադարձ կատարուեցաւ նաեւ բանակումներու մասին, յիշեցուցան անոնց տեսակները, ընդգծելով անոնց կարեւորութիւնը:



ՄԱՍՆԱԾԻՂԷ ՄԱՍՆԱԾԻՂ

49/50-ի վրայ, իսկ թիվ 3 եւ 4 խմբակները՝ 48/50:

Խարուկահանդէսին համար փայտ հաւաքելէ եւ խարուկահանդէսին յայտագիրին պատրաստուելէ ետք, տեղի ունեցաւ բանակումին պաշտօնական փակումը: Երեկոյեան, դրօշակի փակման արարողութիւնը եղաւ բաւական տպաւորիչ: Բանակողները բանակումի շապիկով, իսկ անցեալի սկաուտները սկաուտական տարագով մասնակցեցան արարողութեան: Մեծ լրջութեամբ տեղի ունեցաւ դրօշակի արարողութիւնը, որմէ ետք ընկերական



ուրախ մթնոլորտի մէջ, սկաուտական գիտելիքներու մրցումի մասնակիցներուն յանձնուեցան Հ.Մ.Ը.Մ.ի Լոս Անճելըսի մասնաճիւղի հանգուցեալ ատենապետ եղբ. Օննիկ Պէրպէրեանի կողմէ տրամադրուած սկաուտական նուէրները:

Դրօշակի տպաւորիչ արարողութենէն եւ ընթրիքէն ետք, երեկոյեան տեղի ունեցաւ բանակումին վերջին խարուկահանդէսը, որուն ներկայ գտնուեցան Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Դաւիթ Իշխանեան, Հ.Յ.Դ. Արցախի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Արթիւր Մոսիսեան, Կեդրոնական Կոմիտէի անդամներ Ժիրայր Շահիճանեան եւ Արա Պուլուզեան, Հ.Մ.Ը.Մ.ի Արցախի մեկուսի շրջանի ատենապետ եղբ. Դաւիթ Գրիգորեան, Երեւանէն հիւրաբար Պորիս Յովհաննիսեան եւ Սարմէն Սաֆարեան:

Բանակումին սկիզբը խօսելու համարձակութիւն չունեցող շատ մը քոյր-եղբայրներ բաւական համարձակութիւն ձեռք բերած էին: Խարուկին հանդիսավարութիւնը կատարեցին քոյրեր Աննա Խալատովա եւ Վիկա (Վիթթորիա) Մկրտչեան:

Հրամցուեցան մեներգներ, թատերական պատկեր եւ խմբերգներ: Խրախուսական ելոյթներ ունեցան եղբ. Արա Պուլուզեանն ու եղբ. Դաւիթ Գրիգորեանը:

Ժամը 11-ին վերջ գտաւ խարուկահանդէսը: Բանակումին վերջին գիշերը ըլլալով, բանակողներուն առիթ տրուեցաւ մնալու խարուկին շուրջ, մանաւանդ կէս գիշերէն ետք: 15 Օգոստոսը կը նշէր քոյր Վիկա Մկրտչեանի տարեդարձը, քոյրը 13-ը աւարտելով կը դառնար 14 տարեկան: Մտողները, նախապէս առնուած արտօնութեամբ, կէս գիշերը հագիւ անց, կարկանդակով եւ զովացուցիչով այցելեցին բանակավայր: Ուրախ մթնոլորտի մէջ տօնեցինք քոյր Վիկային տարեդարձը, մաղթելով անոր ուրախ, երկար ու առողջ տարիները:

Այնուհետեւ, բանակողները անցան իրենց պարտականութեանց: Տարեդարձի ուրախ մթնոլորտով եւ կարգապահօրէն անցաւ նաեւ բանակումին չորրորդ օրը:

Երկուշաբթի, 15 Օգոստոսը դժուարին եւ յուզումնալից օր էր: Չորս օրեր բնութեան ծոցին մէջ, վրաններու տակ ապրելէ ետք, իրենց երկրորդ տունը դարձած գեղեցիկ բանակավայրը պիտի քանդուէր: Առաւօտեան մարգանքէն, նախաճաշէն եւ անձնական իրերու հաւաքումէն ետք, վրանները քանդուեցան, բանակավայրը մաքրուեցաւ: Դրօշակի ձողէն վար առնուած Հ.Մ.Ը.Մ.ի դրօշը ծալելու ձեւը սորվեցանք, միասնաբար ընդհանուր ակնարկ մը նետեցինք բանակումի անցուղիներուն վրայ, ապա բանակողներուն առիթ տրուեցաւ իրենց տպաւորութիւնները արձանագրելու թուղթի վրայ եւ յանձնելու պատասխանատուին: Կէսօրին, ուրախ տրամադրութեամբ վերադարձանք տուն:





ՔՈՅՐ ՄԱՐՕ ՔԷՇԻՇԵԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ ԱՐՑԱԽ՝ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

Կազմակերպչական վեցամսեայ առաքելութեամբ Արցախ գործողութեամբ քոյր Մարո Քէշիշեան Յունիս 2022-ի կէսերէն լծուեցաւ Ստեփանակերտի մէջ սկսուողական աշխատանքներու կազմակերպման: Հ.Մ.Ը.Մ-ի Արցախի Մեկուսի վարչութեան հետ գործակցաբար, քոյրը Ստեփանակերտի թիւ 2 դպրոցին մէջ վարեց սկսուողական աշխատանքներու ծանօթացման աշխատանք: Արցախցի պատանիներուն ան ծանօթացուց Հ.Մ.Ը.Մ-ը եւ սկսուողութեան գլխաւոր սկզբունքները:

Նախքան կազմակերպական իր առաքելութեան լծուիլը, քոյր Մարո

Քէշիշեան Հ.Մ.Ը.Մ-ի Արցախի Մեկուսի վարչութեան ատենապետ եղբ. Դաւիթ Գրիգորեանի եւ Հ.Յ.Դ. Արցախի Կեդրոնական Կոմիտէի անդամ եղբ. Արա Պուրլոզեանի հետ, 15 Յունիսին, այցելեց Արցախի Հանրապետութեան կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարմնակրթութեան նախարար Անահիտ Յակոբեանին: Այցելութիւնը աւելի մը եղաւ նախարարին ներկայացնելու Հ.Մ.Ը.Մ-ի ծրագիրները եւ սկսուողական գործունէութեան կարեւորութիւնը Արցախի ներկայ պայմաններուն մէջ: Երկու օր ետք, 17 Յունիսին, քոյր Մարո Քէշիշեան Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոցի անուան հանրապետա-



կան գրադարանին մէջ իր առաջին հանդիպումը ունեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի Արցախի սկսուողներուն հետ: Հանդիպումին ներկայ գտնուեցան Արցախի Հանրապետութեան կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարմնակրթութեան նախարարութեան ներկայացուցիչները եւ Հ.Մ.Ը.Մ-ի Արցախի Մեկուսի վարչութեան անդամները:

Յայտնենք, որ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ղեկավարութեամբ եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի վարչութեան ջանքերով ատենէ մը ի վեր լուրջ ճիգեր ի գործ կը դրուին Արցախի մասնաճիւղին վերականգնման եւ աշխատանքներու ծաւալման համար:





ՄԱՍՆԱԿՑԻՂԷ ՄԱՍՆԱԿՑԻՂ

ԵՐԷՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԻ ՄԵՄԻՆԱՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Թղթակից ԵՐԵՒԱՆ

11 -13 Նոյեմբերին, Վրաստանի Ռուստավելի քաղաքում գտնուող սկաուտական

կենտրոնում Համաշխարհային Սկաուտական Շարժման կողմից Եւրասիա տարածաշրջանի համար կազմակերպուել էր երէցական ծրագրի սեմինար, որին մասնակցելու նաեւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի խմբապետական խորհրդի խմբապետներ՝ քոյր Թամարա Սարգսեանը եւ եղբայր Գրիգոր Տուկարեանը, ինչպէս նաեւ Արմաւիրի «Վարդան Բախչեան» մասնաճիւղի Աքելյա՝ քոյր Տիանա Առաքելեանը:



Հիմնական նպատակն էր մասնակից երկրների ներկայացուցիչների կողմից փորձի փոխանակման եւ տարաբնույթ գործունէութիւնների միջոցով երէցական խմբերի հետ աշխատանքի առանձնապատկութիւնների բացայայտումը եւ երիտասարդական ծրագրի ամբողջացումը՝ երէցական մասով:

Հիմնական նպատակն էր մասնակից երկրների ներկայացուցիչների կողմից փորձի փոխանակման եւ տարաբնույթ գործունէութիւնների միջոցով երէցական խմբերի հետ աշխատանքի առանձնապատկութիւնների բացայայտումը եւ երիտասարդական ծրագրի ամբողջացումը՝ երէցական մասով:



ՉՈՐՍ ՓԱՅՏԻԿ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՍԸՆԹԱՑՔԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ



21 -28 Օգոստոսին, Հայաստանի Ազգային Սկաուտական կազմակերպութեան՝ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի անդամ Նարեկ Հաննէեանը մասնակցել է «Scout et Guides de France»-ի կողմից Սկաուտական Շարժման համաշխարհային կազմակերպութեան հետ համատեղ կազմակերպուած մարզիչների միջազգային դասընթացին (չորս փաշտիկ) Ֆրանսիայի «Jambville Palace»-ի մարզումի ազգային կենտրոնում:



Դասընթացին նպատակն է եղել պատրաստել ղեկավարներ, ովքեր կ'աշխատեն մշակել մեծահասակների կրթութեան ազգային ռազմավարութիւններ եւ ամբողջական մեծահասակների պատրաստակամութիւնը աջակցելու ազգային սկաուտական կազմակերպութեանը:





Հ.Մ.Ը.Մ. - ՖՐԱՆՍ



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի Մեկուսի վարչությունը և մարզական համալիրի կառուցման «Իմաստուններու յանձնախումբ»ը կու գան տեղեկացնելու, թէ Ուրբաթ, 28 Հոկտեմբեր 2022-ի առաւօտեան ժամը 10.30-ին, Փարիզի արուարձաններէն Իսի Լէ Մուլինոյի մէջ ստորագրուեցաւ պայմանագիր մը, որ տեղւոյն քաղաքապետութեան կողմէ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսին կը շնորհէ նորակերտ մարզական համալիր՝ բաղկացած պասքէթպոլի դաշտէ, ժողովարաններէ, ճաշարանէ, 400 հոգինոց սրահէ և տարբեր խաղավայրերէ:

Պայմանագիրը քաղաքապետ Պրն. Անտրէ Սանթինիի և Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի վարչութեան միջև ստորագրուեցաւ 99 տարուան համար և վերանորոգուելու պայմանով:

Տարիներու երազով և աշխատանքով, համբերութեամբ և Հ.Մ.Ը.Մ.ականի հաւատքով Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի

յաջորդական վարչութիւնները և անդամները կարողացան յաջողցնել այս մեծ ծրագիրը, որ պիտի ծառայէ ոչ միայն Ֆրանսայի, այլև ամբողջ Եւրոպայի հայ պատանիներու և երիտասարդներու ֆիզիքական առողջ դաստիարակման և հայեցի մթնոլորտով կազմաւորման աշխատանքին: Մարզահամալիրին շնորհիւ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանս առիթն ու կարելիութիւնը պիտի ունենայ թիով ու որակով յաւելեալ զարգացման ու բարգաւաճման, հաւատարիմ միշտ բարձրանալու և իր հետ համակիր լայն շրջանակները եւս բարձրացնելու միութեան նշանաբանին:

Կեցցեն «նահատակ ցեղի անմահները»:

Կեցցէ Հ.Մ.Ը.Մ.ը:

Փարիզ, 28 Հոկտեմբեր 2022

Հ.Մ.Ը.Մ. - ՖՐԱՆՍԻ
ՄԵԿՈՒՍԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ





Հ.Մ.Ը.Մ.Ի ՆՈՐ ՄԱՍՆԱԾԻՂԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՇՈՒՄՏԻ ՕՐԵՊՐՈՒ ՔԱՂԱՔԻՆ ՄԷՁ

Շաբաթ, 15 Հոկտեմբեր 2022-ին, Շուշուի վեցերորդ մեծագոյն քաղաքին՝ Օրէպրուի մէջ հիմնադիր ժողովը կատարուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի նորաստեղծ մասնաճիւղին, որ գործունէութեան ըսկած է վեց ամիսէ ի վեր: Հիմնադիր ժողովին ներկայ գտնուեցան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեան, Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Ֆէտի Խաժակ Գազանճեան, 18 տարիքը ամբողջացուցած 29 անդամներ եւ նորագիր 18 սկաուտներ: Ժողովին հիւրաբար մասնակցեցան Հ.Մ.Ը.Մ.ի Շուշուի երեք մասնաճիւղերու՝ Սթոքհոլմի, Վեսթերոսի եւ Սոտերթելոյ Մեկուսի վարչութիւններու ներկայացուցիչները, Սոտերթելոյ մասնաճիւղի սկաուտական խմբապետական կազմը եւ Հ.Յ.Դ. «Հիւսիսեան» կոմիտէութեան ներկայացուցիչ Մանօ Խորոզեան:

Օրէպրու Մեկուսի շրջանը ունի 84 անդամագրուած անդամ:

Հիմնադիր ժողովին բացումը կատար-

ւեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով: Ապա, մասնաճիւղի կազմակերպչական յանձնախումբը կարգաց Օրէպրուի Հ.Մ.Ը.Մ.ի վեց ամսուան գործունէութեան նիւթաբարոյական տեղեկագիրը: Այնուհետեւ, ժողովականները կատարեցին մասնաճիւղին գործունէութեան կապուած առաջարկներ եւ ընտրեցին Օրէպրուի անդրանիկ վարչական կազմը՝ բաղկացած հետեւեալ քոյր-եղբայրներէ.- եղբ. Շանթ Սահակեան, քոյր Սիր-

վի Թանաշեան, եղբայրներ Բաֆֆի Մընճեան, Յակոբ Մելքոնեան, Թովմաս Սահակեան, Նուպար Սահակեան եւ Տիգրան Մաթոսեան:

Ընտրութենէն ետք, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեան վարչութեան փոխանցեց Հ.Մ.Ը.Մ.ի Ծրագիր-Կանոնագիրը եւ դրօշը, իսկ եղբ. Ֆէտի Խաժակ Գազանճեան՝ միութեան սկաուտական դրօշը:





Հ.Մ.Ը.Մ. ՀՈՒՄՏ



ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԽՈՍՏՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ

Հիմնադիր ժողովին յաջորդեց սկաուտական անդրանիկ խոստման արարողությունը, որուն՝ Կեդրոնական Վարչութեան անդամներու կողքին ներկայ գտնուեցան շրջանի հոգեւոր հովիւ Վարդ

ղարչ Քհնյ. Իսախանեան, Օրէպրուի թաղական խորհուրդի ատենապետ Ֆորտ Նալպանտեան, շուէտական սկաուտութեան Օրէպրու նահանգի Շրջանային ընդհանուր խմբապետ Ալպին Էտլունտ, ՊԻԼՏԱ կազմակերպութեան ներկայացուցիչը, միութիւններու ներկայացուցիչներ եւ ծնողներ:

Բացման խօսքով հանդէս եկաւ եղբ. Շանթ Սահակեան եւ հրաւիրեց եղբ. Յարութ Տէր Ներսէսեանը՝ ստանձնելու հերթապահութիւնը եւ վարելու սկաուտական արարողութիւնը:

Կատարուեցաւ 14 սկաուտ նորագիրներու խոստման արարողութիւն: Նո-

ՕՐԷՊՐՈՒԻ ՄԷՋ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԿՈՐԻՉԻ ՄԸ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Թղթակից ՍՈՏԵՐԹԵԼԻԱ

ՀՄԸՄ-ի Օրէպրուի մասնաճիւղի հիմնադրութեան նախօրեակին (հիմնադրութեան մասին տեսնել առանձին, էջ 43) եւ շրջանին մէջ սկաուտական աշխատանքներու կազմակերպման նպատակով, Շուէտի Սոտերթելիա մասնաճիւղի խմբապետ եղբ. Յարութ Տէր Ներսէսեան հանդէս եկաւ ողջունելի նախաձեռնութեամբ մը:

Եղբ. Յարութ Տէր Ներսէսեան «Արարատեան» կարգի գործնական աշխատանքի իր ծրագրի ծիրին մէջ, 28 Մայիսի 2022-ին, Սոտերթելիոյ «Սարդարապատ» սկաուտներին մէջ հանդիպում մը տեղի ունեցաւ Օրէպրու քաղաքի տասը երիտասարդներու հետ, որոնք նախատեսուած էին կազմելու ՀՄԸՄ-ի Օրէպրուի մեկուսի շրջանի աստիճանաւորական առաջին կազմը:

Արդարեւ, եղբ. Տէր Ներսէսեան ստանձնեց կազմակերպել ՀՄԸՄ-ի սկաուտական շարքերը շրջանին մէջ եւ այս

նպատակով ան թուեցաւ որոշ աշխատանքի- անդամական ցանկերու պատրաստութիւն, պետական արձանագրութիւն, երիտասարդ ուժերու ուսումնասիրութիւն եւ այլն:

Հանդիպումին եղբայրը ներկայացուց ՀՄԸՄ-ի սկաուտական խմբաւորումները եւ ներկաներէն խնդրեց, որ ընտրեն իրենց նախասիրած խմբաւորումներէն մէկը եւ մինչեւ յաջորդ հանդիպում սերտորոշութիւն մը պատրաստեն անոր մասին:





ՄԱՍՆԱԾԻՂԷ ՄԱՍՆԱԾԻՂ



րագիրները օրհնեց Վաղարշ Քհնյ. Իսախանեան:

Ողջոյնի եւ յաջողութեան խօսքեր արտասանեցին Օրէպրուի Շրջանային ընդհանուր խմբապետ Ալպին Էտրուտ, թաղական խորհուրդի ատենապետ Ֆորտ Նալպանտեան, Վաղարշ Քհնյ. Իսախանեան եւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնա-

կան Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեան: Եղբայր Նաճարեան իր խօսքին մէջ շեշտեց եկեղեցի-դպրոց-ակումբ երրորդութեան կարեւորութիւնը, իբրեւ հայապահպանման կրուական: Ան ըսաւ, որ Հ.Մ.Ը.Մ. եղած է ու կը մնայ այն ապահով միջավայրը, որուն ծնողներ կրնան վստահիլ անվա-

րան: Հ.Մ.Ը.Մ. մարդակերտումի եւ հայակերտումի հնոց է նորահաս սերունդներուն համար: Հ.Մ.Ը.Մ-ի մէջ, սկառտութեան եւ մարզախաղերու ճամբով նկարագիր եւ դիմագիծ կը կերտուի: Օտար ափերուն Հ.Մ.Ը.Մ. պատուար է ձուլումի եւ այլասերումի դէմ:

Եղբ. Տէր Ներսէսեանի հետ հանդիպումէն ետք, յիշեալ տասը երիտասարդները առիթը ունեցան հանդիպելու Հ.Մ.Ը.Մ-ի Սոսերթելիոյ խմբապետական կազմին հետ եւ կէսօրուան ճաշը վայելեցին միասնաբար:



Հանդիպումին, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Ֆէտի Խաթակ Գազանճեան զրոյց մը վարեց երիտասարդներու պատրաստութեան ծրագիրներուն շուրջ:

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Երեք շաբաթ ետք, 18 Յունիս 2022-ին, եղբ. Յարութ Տէր Ներսէսեան իր երկրորդ հանդիպումը ունեցաւ Օրէպրու շրջանի տասը երիտասարդներու հետ եւ ծանօթացաւ նախորդ հանդիպումին անոնցմէ պահանջած ուսումնասիրական աշխատանքներուն, որոնք կատարուած էին մեծ բժախնդրութեամբ:

Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Ֆէտի Խաթակ Գազանճեանի կողքին, հանդիպումին ներկայ գտնուեցան Շուէտի սկառտական կազմակերպութե-

անէն Ֆրէտրիք Գատեսիտն եւ Մեկուսի շրջանի կազմակերպչական յանձնախումբի անդամները: Գատեսիտն իր բարձր գնահատանքը յայտնեց կատարուած աշխատանքին եւ Հ.Մ.Ը.Մ-ի կազմակերպութեան համար: Ան իր հետ տարաւ երիտասարդներու պատրաստած ուսումնասիրական աշխատանքները, որովհետեւ անոնք մեծապէս պիտի օգնեն Շուէտի սկառտական կազմակերպութեան մէջ Հ.Մ.Ը.Մ-ի Օրէպրուի Մեկուսի շրջանին արձանագրութեան համար:

Յայտնենք, որ Օրէպրու շրջանի երիտասարդ-երիտասարդուհիները իրենց մասնակցութիւնը բերին Հ.Մ.Ը.Մ-ի Սոսերթելիոյ Մեկուսի շրջանի տարեկան չորրորդ բանակումին:





Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ՎԱԶԷ ՆԱԾԱՐԵԱՆԻ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ՇՈՒԷՏԻ ՄԱՍՆԱԾԻՂԵՐ



14-16 Հոկտեմբեր 2022-ը յիշատակելի օրեր եղան Շուկտ բնակող Հ.Մ.Ը.Մ.ականներուն համար, որոնք առիթն ու պատեհութիւնը ունեցան հիւրընկալելու Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեանը: Եղբայր Նաճարեան Պէյրութէն շրջան ժամանեց յատկապէս ներկայ գտնուելու համար Օրէպրուի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի նոր մասնաճիւղի մը հիմնադիր ժողովին: Շուկտի մէջ իրեն կ'ընկերակցէր Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան

անդամ եղբ. Ֆէտի Խաժակ Գազանճեան:

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՀՐԱՋ ՄԱՐՈՒԹԵԱՆԻ

Եղբայր Նաճարեան Շուկտ իր այցելութիւններուն շարքը սկսաւ Սթոքհոլմէն, ուր ան հանդիպում մը ունեցաւ միութեան սերտ բարեկամ եւ բարերար Հրաչ Մարութեանի հետ: Մարութեան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետին ծանօթացուց Շուկտի հայ համայնքը իր իրագործումներով եւ



ՄԱՍՆԱԾԻՂԷ ՄԱՍՆԱԾԻՂ

գլխավորապես մարտահրավերներով: Իր կարգին, եղբ. Նաճարեան գնահատանքով արտայայտուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի հանդէպ Հրաչ Մարութեանի ցուցաբերած մնայուն հոգածութեան եւ աջակցութեան համար: Այս առիթով եւ առ ի գնահատանք իր մնայուն նեցուկին, եղբ. Նաճարեան Հրաչ Մարութեանը պատուեց յուշանուէրով մը:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ Հ.Մ.Ը.Մ.Ի ՍՈՍԵՐԹԵԼԻՈՅ ՄԱՄՆԱՃԻՂ

Նոյն օրը, երեկոյեան, եղբ. Վաչէ Նաճարեան ներկայ գտնուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Սոսերթելիոյ մասնաճիւղի սկաուտական հաւաքին: Մուտքին, եղբայրը դիմաւորուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի շեփորախումբով: Ներկայ էին մասնաճիւղին վարչութիւնը, յանձնախումբերու եւ խմբապետական կազմի անդամներ եւ շաբաթական իրենց գործունէութիւնը կատարող 84 սկաուտներ, բաժնուած՝ կարգապահ խմբաւորումներու մէջ: Ի պատիւ իրենց հիւրին, սկաուտներ կատարեցին խանդավառ կանչեր եւ ներկայացուցին տեսերիկ մը, որ կը ծանօթացնէր ընթացիկ տարեշրջանի իրենց աշխատանքները:

Այս առիթով բարի գալուստի խօսք արտասանեց օրուան հերթապահ քոյր Նենսի Խաչատուրեան: Վարչութեան խօսքը փոխանցեց քոյր Սօսէ Երէցեան: Քոյրը շնորհակալութիւն յայտնեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, որ միշտ թեւ ու թիկունք կանգնած է մասնաճիւղին:

Խօսք առաւ եղբ. Վաչէ Նաճարեան եւ իր գնահատանքը յայտնեց սկաուտական շարքերու կազմակերպուածութեան,



յայտագիրին եւ պատրաստուած տեսերիկին համար: Ան քաջալերեց ներկաները շարունակելու իրենց միութենական աշխատանքները եւ մասնակից դառնալու նաեւ սկաուտական տեղական կազմակերպութեան ծրագիրներուն:

ԾԱՆՕԹԱՅՄԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Հաւաքէն ետք, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետը ծանօթացման հանդիպումներ ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Սոսերթելիոյ մեկուսի վարչութեան անդամներուն, Հ.Յ.Դ. «Հիւսիսեան» կոմիտէութեան ներկայացուցիչներուն եւ շրջանի հոգեւոր հովիւ՝ Վաղարշ Քհնյ. Իսախանեանի հետ:

Երեկոյն շարունակուեցաւ տեղւոյն ակումբին մէջ կազմակերպուած ընթրիքով, ուր տիրեց հայեցի ջերմ մթնոլորտ եւ Հ.Մ.Ը.Մ.ական բարձր խանդավառութիւն:

Յաջորդ օր, եղբ. Նաճարեան եղբ. Ֆէտի Խաժակ Գազանճեանի հետ մեկնեցաւ Սթոքհոլմէն 200 քմ. արեւմուտք գտնուող Օրէպրու քաղաքը, ուր տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի նոր մասնաճիւղի հիմնադրութիւն (այս մասին տեսնել էջ 43):





Հ.Մ.Ը.Մ. ՀՈՒԷՏ



Հ.Մ.Ը.Մ.Ի ՀՈՒԷՏԻ ՄԵԿՈՒՄԻ ՉՈՐՄ ՇՐՋԱՆՆԵՐՈՒ ՄԻՕՐԵԱՅ ՄԵՄԻՆԱՐ

Կազմակերպված է Հ.Մ.Ը.Մ.Ի Սթոքհոլմի, Սոտերթելիոյ, Վեսթերոսի եւ Օրէպորոկի Մեկուսի վարչութիւններուն, ներկայացուցած Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան Եւրոպայի ներկայացուցիչ՝ եղբ. Ֆէտի Խաթակ Գազանճեանի, միօրեայ սեմինար մը տեղի ունեցաւ Շաբաթ, 10 Դեկտեմբեր 2022-ին, Հիւրընկալուած Հ.Մ.Ը.Մ.Ի Վեսթերոսի Մեկուսի վարչութեան:

Արդարեւ, Հ.Մ.Ը.Մ.Ի կազմակերպչական աշխատեւածեւի միօրինակութիւնը պահելու անհրաժեշտութենէն թելադրուած, Շուէտի գործօն չորս Մեկուսի վարչութիւններու կազմակերպուած ծրագրուեցաւ միօրեայ սեմինար մը՝ բաժնուած երեք մասի: Սեմինարին ներկայ գտնուեցան Մեկուսի

վարչութիւնները, անոնց կողքին գործող յանձնախումբերը եւ սկաուտական խմբապետական կազմերը: Սեմինարը վարեց Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Ֆէտի-Խաթակ Գազանճեան:

Սեմինարին յայտագիրը սկսաւ Հիւրասիրութեամբ, պատրաստուած՝ Վեսթերոսի մասնաճիւղի ընկերային յանձնախումբին կողմէ: Ապա, ներկաները ծանօթացուցին իրենց վարած միութեանական պաշտօնները:

Այնուհետեւ, սեմինարին նիւթեր ներկայացուցին Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան գործավար քոյր Վե-



րա Բարսեղեան-Տէր Պօղոսեան («Վարչագիտական-դիւանակալական ծանօթութիւններ եւ արխիւլային աշխատանքներ»), եղբ. Ֆէտի-Խաթակ Գազանճե-

ան («Վարչական եւ յանձնախմբային աշխատանքներու ընթացքը եւ փոխադարձ յարաբերութիւնները») եւ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեան («Դիւանի մը պարտականութիւնը եւ յարաբերութիւնը վարչական կազմի անդամներուն հետ»):

Սեմինարի աւարտին, խմբակներու բաժնուած, մասնակիցները յառաջիկայ տարեշրջանին համար մշակեցին միացեալ եւ իրենց շրջաններուն յատուկ ծրագիրներ: Ապա, Հ.Մ.Ը.Մ.Ի Վեսթերոսի Մեկուսի շրջանի վարչութեան ատենապետ եղբ. Տիգրան Կէօվչէնեան եւ ատենադպրուհի քոյր Լիւսի Առոյեան յուշանուէրներով պատուեցին օրուան վարիչ-բանախօս եղբ. Ֆէտի Գազանճեանը եւ մնացեալ շրջաններու վարչութիւններու ատենապետները: Այս առիթով տեղի ունեցաւ անուշեղէններու հիւրասիրութիւն՝ պատրաստութեամբ Վեսթերոսի Մեկուսի շրջանի ընկերային յանձնախումբին:





Հ.Մ.Ը.Մ Ալմելոյի մասնաճիւղի վարչութիւնը ԱԼՍԵԼՕ

ՀՄԸՄ-ի Կեղրոնական վարչութեան հովանաւորութեամբ, Ալմելո քաղաքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Մաշտոց Քհնյ. Պաղտասարեանի նախագահութեամբ եւ ՀՄԸՄ-ի Ալմելոյի մեկուսի մասնաճիւղի վարչութեան կազմակերպութեամբ, Շաբաթ, 26 Նոյեմբեր 2022-ին, «Sporthal Schelfhorst» մարզադաշտին վրայ տեղի ունեցաւ շրջանի 24-րդ մարզահանդէսը, ներկայութեամբ «Արամ Մանուկեան կոմիտէութեան, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ վարչութեան, ՀՕՄ-ի, ՀՅԴ-ի «Գարեգին Նժդեհ» երիտասարդական միութեան, Հոլանտայի Հ.Բ.Ը.Մ-ի, «Կրիկիա» եւ «Երեւան» միութիւններու ներկայացուցիչներու, մասնակցութեամբ ՀՄԸՄ-ի Սթոքհոլմի, Միւնիխի, Ալբարի, Առնհեմի եւ Ալմելոյի Մեկուսի շրջաններու մարզիկներու, ինչպէս նաեւ սկաուտներու:

Մարզահանդէսին օր մը առաջ, Ուրբաթ 25 Նոյեմբերին, առաջին անգամ ըլլալով Ալմելոյի շրջանի 25 տարուան պատմութեան մէջ, միութեան սրահին մէջ տեղի ունեցան մարզահանդէսին մասնակից խումբերու փինկ-փոնկի եւ պատմիւթընի մրցաշարքները:

Փինկ-փոնկի մրցաշարքին մասնակցեցան 6 մարզիկներ: Եզրափակիչ մրցումը իրարու դէմ հանեց ՀՄԸՄ Առնհեմին եղբ. Արթիւր Տիֆոնեանը եւ ՀՄԸՄ Ալմելոյին եղբ. Արարատ Յովհաննէսեանը:

Մրցումը աւարտեցաւ եղբ. Արարատ Յովհաննէսեանի յաղթանակով: Պատմիւթընի մրցաշարքին մասնակցեցան 5 մարզիկներ: Եզրափակիչ մրցումը կատարուեցաւ ՀՄԸՄ Ալմելոյին եղբ. Շիրակ Տատուրեանի եւ քոյր Մարիամ Մխիթարեանի միջեւ: Մրցումը աւարտեցաւ եղբ. Տատուրեանի յաղթանակով:

Շաբաթ, 26 Նոյեմբերին, մարզահանդէսը սկսաւ մէկ վայրկեան յտընկայս լուծութեամբ՝ յարգելու համար յիշատակը հայկական բանակի եւ ՀՄԸՄ-ի բոլոր նահատակներուն:

Այլա, աւանդական սովորութեան համաձայն, դաշտ հրաւիրուեցաւ Ալմելոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Մաշտոց Քհնյ. Պաղտասարեան, որ ներկաներու մասնակցութեամբ կատարուած «Տէրունական աղօթք»ով եւ օրհնութեան խօսքով կատարեց շրջանի մարզական եւ սկաուտական 24-րդ մարզահանդէսին բացումը:

Օրուան յայտագիրին համաձայն, սկաուտական ընտրեալ խմբակ մը տողանցքով դաշտ մուտք գործելով գրաւեց իրեն համար ճշդուած տեղը: Տեղի ունեցաւ դրօշակի արարողութիւն: Նետրրէյնտներու, Հայաստանի, Արցախի եւ ՀՄԸՄ-ի քայլերգներով բարձրացան չորս դրօշներ:

Օրուան յայտագիրին համաձայն, սկաուտական ընտրեալ խմբակ մը տողանցքով դաշտ մուտք գործելով գրաւեց իրեն համար ճշդուած տեղը: Տեղի ունեցաւ դրօշակի արարողութիւն: Նետրրէյնտներու, Հայաստանի, Արցախի եւ ՀՄԸՄ-ի քայլերգներով բարձրացան չորս դրօշներ:





Հ.Մ.Ը.Մ. ԱԼՄԵԼՈ



Դրօշակի արարողութենէն ետք բեմ հրաւիրուեցաւ մեկուսի մասնաճիւղի ատենապետ եղբ. Մինաս Արսէնեան՝

փոխանցելու վարչութեան խօսքը: Եղբ. Արսէնեան ներկաները ողջունելէ ետք իր ելոյթը սկսաւ Հրայր Մարուխեանի

խօսքով, յայտնելով, թէ «Հ.Մ.Ը.Մ-ի գաղափարականը միայն մարզական չէ, սկստական չէ, այլ ԱՄՖՆ ԻՆՉ է, հայութեան ամբողջութիւնը, հայութեան իտէալները, հայութեան ազատութեան հետ կապուած ամբողջ յոյսեր, հայութեան պայքարի ամբողջ իմաստը: Արտասահմանի մէջ այն բոլոր պատանիներն ու երիտասարդները, որոնք հետագային քաղաքական յանձնառութիւններու տակ կը մտնեն, Հ.Մ.Ը.Մ-ի շարքերուն մէջ է որ կը ստանան իրենց ազգային հիմնական դաստիարակութիւնը»: Շարունակելով, եղբ. Արսէնեան ըսաւ. «Այսօրուան մարզահանդէսին մասնակից երիտասարդներ, դուք առիթը ունիք իրարու քով գալով իրարու ծանօթանալու, մարզական խաղերու մասնակցելու եւ ապա խանդավառուելով՝ Սփիւռքի մէջ փոքրիկ Հայաստան մը ստեղծելու: Այդ փոքրիկ Հայաստանով ալ դուք պիտի կարողանաք մեր մայր Հայաստանը եւ Արցախը սիրել, պահպանել եւ պաշտպանել»:



Եղբ. Արսէնեան իր խօսքին մէջ նշեց Հ.Մ.Ը.Մ-ի արժանիքները, յայտնելով, որ «Այսօր մեր հայրենիքի եւ հայութեան համար ճակատագրական ու դժուարին ներկայ ժամանակներուն մէջ, Հ.Մ.Ը.Մ. հայ մարզիկին եւ սկստտին կը շնորհէ հայրենիքին եւ իր հարազատ ժողովուրդին ծառայութեան ազգային դաստիարակութիւն, «Բարձրացի՛ր-բարձրացու՛ր» նշանաբանով եւ հայ լեզուին ու մշակոյթին միշտ հաւատարիմ մնալու ոգիով»:





ՄԱՍՆԱԾԻՂԷ ՄԱՍՆԱԾԻՂ



Եղբւրքերս՝ Արսէնեան իր խօսքին մէջ անդրադարձաւ նաեւ միութեան անցնող ժամանակաշրջանի դժուարութիւններուն, յատկապէս շեշտելով, որ «Անցնող տարիները դժուար տարիներ էին ընդհանրապէս բոլորին համար եւ մասնաւորապէս մեր մարզիկներուն եւ սկաուտներուն համար, բայց յաղթահարելով բոլոր դժուար պայմանները մենք կարողացանք շարունակել մեր հաւաքները եւ մարզական հանդիպումները եւ, աւելին, ունեցանք մեր սեփական տեղը, սրահը, շէնքը, աւելի ճիշդ է ըսել մեր հայկական օճախը: Եկէ՛ք ձեռք-ձեռքի տալով ոչ մէկ ճիգ խնայենք եւ ամէն ջանք թափենք մեր զաւակներուն այս օճախը վառ պահելու համար»:

Եղբւրքերս՝ ատենապետը իր խօսքը փակեց շնորհակարարական խօսքերով: Ան շնոր-

հակալութիւն բոլոր հիւրերուն եւ մասնակից խումբերուն, մասնաւորապէս անոնց, որոնք շատ հեռուէն եկած են մասնաճիւղին տարեկան մարզահանդէսին մասնակցելու համար, ի մասնաւորի՝ Հ.Մ.Ը.Մ. Սթոքհոլմի եւ Միւնիխի: Եղբայրը շնորհակալութեան խօսքեր ուղղեց նաեւ Հ.Մ.Ը.Մ-ի Ալքմարի եւ Առնհեմի մասնաճիւղերուն, «Երեւան» եւ «Կիլիկիա» միութիւններուն, Հ.Բ.Ը.Մ-ին, ՀՕՄ-ին, Հ.Յ.Դ-ի «Գարեգին Նժդեհ» երիտասարդական միութեան եւ բոլոր ներկաներուն:

Եղբւրքերս՝ Արսէնեանի խօսքին ետք, տողանցքով մարզադաշտ մուտք գործեցին մարզահանդէսին մասնակից Հ.Մ.Ը.Մ. Առնհեմի սկաուտները եւ մարզախաղերուն մասնակիցները: Խումբերը մարզադաշտին մէջ կեդրոնանալէ ետք տեղի

ունեցաւ սկաուտական աստիճաններու եւ պաշտօններու տուչութիւն:

Տողանցքի աւարտին սկսաւ Փութսալի մրցաշարքը: Այս տարի մասնակից խումբերուն մակարդակը տարբեր էր նախորդ տարիներէն: Բոլորը շատ լաւ պատրաստուած էին մարզահանդէսի մրցաշարքին:

Յայտնենք, որ Փութսալի մրցաշարքին մասնակցեցան «Կիլիկիա», «Երեւան», Հ.Մ.Ը.Մ. Սթոքհոլմի, Միւնիխի, Առնհեմի, Ալքմարի եւ Ալմելոյի երկու խումբերը: Բոլոր մրցումները բարձր մակարդակի էին: Եզրափակիչ մրցումը տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ. Ալմելոյի առաջին եւ «Երեւան» միութեան խումբերուն միջեւ եւ աւարտեցաւ Հ.Մ.Ը.Մ. Ալմելոյի առաջին խումբին յաղթանակով:

Փութսալի մրցաշարքին աւարտով մարզահանդէսը հասաւ աւարտին:

Մետալներու եւ բաժակներու բաշխումը տեղի ունեցաւ Ալմելոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ «Գալուստ Կիւլպէնկեան» սրահին մէջ, ուր պարգեւատրուեցան մարզահանդէսին մասնակցող բոլոր մարզիկները: յուշանշաններ տրուեցան մասնակցող միութիւններու ներկայացուցիչներուն:

Խրախճանքով վերջ գտաւ երկօրեայ մարզահանդէսը, որուն յաջողութեան համար շնորհակալ գործ կատարեցին մասնաճիւղին տիկնանց, ընկերային, մարզական եւ սկաուտական յանձնախումբերը:

Յետեութիւն մինչ յաջորդ հանդիպում:





Հ.Մ.Ը.Մ. ՊՈԼԿԱՐԻՍ



Հ.Մ.Ը.Մ.Ի ՓԼՈՎՏԻՎԻ ՄԵԿՈՒՄԻ ՄԱՄՆԱԾԻՂԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Թղթակից ՓԼՈՎՏԻՎ

25 Յունիս 2022-ին, Փլովտիվի «Ճրիկոպան» գրասաչըղան համալիրը կ'եռար Հ.Մ.Ը.Մ.ական կեանքով սկառտոներ, սկառտական փոքր նոռադախոմբ, դրոշակի կայմ եւ մեծ վրաններ յատոռկ տեսք մը տոռած էին պոռկարական այս հանգստավայրին: Այդ օր ամէն ինչ

Հ.Մ.Ը.Մ.ական էր հոն, որովհետեւ միոռթեան երիցագոյն մասնաճիւղերէն Փլովտիվի Մեկոռսի մասնաճիւղը հիմնադրոռթեան հանդիսառոր 100-ամեակը կը տօնէր պատշաճ շոռքով: Հոն էին Ս.Գէորգ եկեղեցոյ հոգեռոր հովիւ Հրաչ Քհնյ. Մոռատեան, Հայաստանի Հանրապետոռթեան հիւպատոս Թամարա Ղուչեան, յատկապէս Պէյրոռթէն ժամանած՝ Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական Վարչոռթեան առեանապետ եղբ. Վաչէ Նաճարեան,

Հ.Մ.Ը.Մ.ի Պոռկարիոյ մնացեալ մասնաճիւղերոռ՝ Վառնայի, Պոռկասի, Սոֆիայի եւ Ռոռսէի մասնաճիւղերոռ առեանապետները, ինչպէս նաեւ յոքեղեար մասնաճիւղի՝ Փլովտիվի վարչոռթեան լման կազմը, սկառտոներ, ծնողներ եւ բարեկամներ:

Տօնակատարոռթիւնը կազմակերպըռած էր բացօթեայ: Ներկաներոռ համար ապահոռվոռած էին մեծ վրաններ՝ ի հարկին անակնկալ անճրեւէ պաշտպանըռեռլոռ համար:

Բացոռմը կատարոռեցաւ Պոռկարիոյ եւ Հայաստանի քայլերգներոռն ոռնկնդրոռթեամբ: Ապա, մասնաճիւղին սկառտական նորակազմ նոռադախոմբին առաջնորդոռթեամբ, մասնաճիւղին դրօշին առաջնորդոռթեամբ, հանդիսավայր մոռտք գործեցին սկառտական խոռմբերը, որոնք դրառեցին իրենց յատոռկ տեղերը:

Կատարոռեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգի խմբերգոռմ, որոռն յաջորդեցին սկառտներոռ երգման եւ խոստման արարողոռթիւններ, ինչպէս նաեւ՝ մասնաճիւղի վարչոռթեան կողմէ յոռչանըռ





ՄԱՍՆԱԾԻՂԷ ՄԱՍՆԱԾԻՂ

ւէրներու բաշխում ներկայ պաշտօնական անձնաւորութիւններուն եւ Հ.Մ.Ը.Մ.ի քոյր մասնաճիւղերու ներկայացուցիչներուն:

Խօսքերու բաժինով, նախ արտայայտուեցաւ Ս. Գէորգ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Հրաչ Քհնյ. Մուրատեան: Ան ըսաւ, որ ուրախութիւն եւ պատիւ է մասնակցիլ տօնակատարութեանը միութեան մը, որ ունի 104 տարուան պատմութիւն: 104 տարի թուղթի վրայ գրելը դիւրին է, բայց 104 տարի ապրիլ եւ 104 տարի գաղափար ապրեցնելը շատ դժուար է: Քրտնաջան ու անընդհատ աշխատանք պէտք է 104 տարի յարատեւելու համար:

Մուրատեան Քհնյ. նաեւ նշեց, որ Սփիւռքի մէջ գոյատեւելը հեռզհեռէ աւելի դժուար կը դառնայ, սակայն տեսնելով այստեղ ներկայ երիտասարդները, տեսնելով անոնց եռանդն ու աւելը, վստահ եմ, որ այս միութիւնը 104 տարի եւս պիտի գործէ եւ պիտի մարմնակրթէ մեր երեխաները:

Այս առիթով, Մուրատեան Քհնյ. շնորհաւորեց Հ.Մ.Ը.Մ.ի Փլովատիլի մասնաճիւղին 100-ամեակը, օրհնեց մասնաճիւղին անդամները եւ մաղթեց, որ Աստուած անսպառ ուժ եւ կորով տայ պատասխանատուներուն: «Այն գաղափարը, զոր դուք ունիք, հայպահպանում կոչուող այդ գաղափարը թող վառած ջահի նման փոխանցուի սերունդէ սերունդ», շեշտեց ան:

Խօսք առաւ նաեւ Հայաստանի Հանրապետութեան հիւպատոս Թամարա Ղուչեան եւ յայտնեց, որ իսկապէս պա-

ՃԱՆՉՆԱՔ

ՊԱՐԳԵՒԱՏՐԵԱԼ ՔՈՅՐ ՏԻՐՈՒՀԻ ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆ-ԳՐԻԳՈՐԵԱՆ



Քոյր Տիրուհի Պարտիզպանեան-Գրիգորեան ծնած է 23 Օգոստոս 1944-ին: Ան դուստրն է Պուլկարիոյ վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. Տիգրան Պարտիզպանեանին, որ համայնավար իշխանութեան օրերուն, իր եւ իր ընտանիքին ապահովութիւնը վտանգելով՝ Հ.Մ.Ը.Մ.ի Պուլկարիոյ դրօշակը, արխիւները եւ գոյքերը պահած է տանը մէջ՝ մինչեւ այն օրը, երբ ստիպուած եղած է զանոնք այրել. համայնավար իշխանութեան չյանձնելու համար:

Քոյր Տիրուհի Գրիգորեան Հ.Մ.Ը.Մ.ին կ'անդամակցի 1992 թուականին՝ համայնավար իշխանութեան դադրեցումէն ետք, թէւ իր իսկ վկայութեամբ, ան մանուկ տարիքէն ինքզինքն նկատած է Հ.Մ.Ը.Մ.ական: Քոյր Գրիգորեան միութենական դաստիարակութիւնը կը ստանայ Պուլկարիոյ վաստակաշատ երկու եղբայրներէն՝ Տիգրան Պարտիզպանեանէն եւ Խորէն Քիրազեանէն, որոնք երկար տարիներ, մինչեւ իրենց մահը եղած են գործօն միութենականներ:

Քոյր Գրիգորեան 2006 թուականէն ի վեր Պուլկարիոյ կայան է Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան հետ: Ան նաեւ Պուլկարիոյ ատենապետներու խորհուրդին ատենապետն է նոյն թուականէն ի վեր: Քոյրը 1992 թուականէն ի վեր վարչական պաշտօններ վարած է Սոֆիայի Մեկուսի շրջանէն ներս: 2006 թուականէն ի վեր, իբրեւ ատենապետներու խորհուրդի ատենապետ, ինքն է Պուլկարիոյ միութենական աշխատանքները վարողն ու համադրողը: Իր ջանքերուն շնորհիւ Հ.Մ.Ը.Մ.ի Պուլկարիոյ շրջանը տարեկան դրութեամբ կը կազմակերպէ ընդհանուր բանակումներ, որոնց Կեդրոնական Վարչութիւնը խմբապետ-խմբապետուհիներ կը գործուղէ, օժանդակելու աշխատանքներուն եւ խմբապետական վերաորակաւորման ծրագիրներուն:

Քոյր Տիրուհի Պարտիզպանեան-Գրիգորեան մասնակցած է Հ.Մ.Ը.Մ.ի Թ. եւ Ժ. Պատգամաւորական ժողովներուն, միջ-դիւանական Է. եւ Ը. ժողովներուն: Ան գլխաւորած է համա-Հ.Մ.Ը.Մ.ական Է. եւ Թ. մարզախաղերուն մասնակցից Պուլկարիոյ պատուիրակութիւնները:

տիւ է այստեղ ներկայ գտնուելը, որովհետեւ հոն ուր Հ.Մ.Ը.Մ. կայ, հոն կայ պատմութեան մէկ մասնիկը: Տարիներ առաջ, երբ ես ծանօթացայ Հ.Մ.Ը.Մ.ի կարգախօսին՝ «Բարձրացի՛ր-բարձրացուր»ին, ես հասկցայ, որ այս կարգախօսին մէջ կայ կամք, ուժ եւ ոգի: Սովորական կարգախօս մը չէ ան, այլ՝ պատմութեան թելադրանքով եւ ժամանակով ապացուցուած իրականութիւն

է: Կարելի է երկար խօսիլ այն մեծ առաքելութեան եւ այն ազնիւ գործին մասին, զոր Հ.Մ.Ը.Մ.ը կատարած է եւ կը կատարէ մեր իրականութեան մէջ:

Շարունակելով, հիւպատոս Թամարա Ղուչեան հաստատեց, որ այն ժամանակաշրջանին, երբ մեր ժողովուրդը առաւել քան երբեք կանգնած էր բնաջրնջումի եզրին, Հ.Մ.Ը.Մ.ը բարձրացաւ եւ օգնեց, որ իր ժողովուրդը եւս բարձրա-





Հ.Մ.Ը.Մ. ՊՈՒԼԿԱՐԻԱ

նայ: Հ.Մ.Ը.Մ-ի մէջ կը դաստիարակ-
ւին սերունդներ, որոնք քաջ կը գիտակ-
ցին, որ երբ մարդ ընդունակ է բարձ-
րացնելու, ընդունակ է նաեւ բարձրա-
նարու:

Խօսքը եզրափակելով, հիւպատոսը
ըսաւ. «Ձեր գործը արդար է, ձեր առա-
քելութիւնը ազնիւ է, իսկ ձեր գնահա-
տանքը տարիներու, տասնամեակներու
ընթացքին ձեր վաստակած յարգանքն
ու հեղինակութիւնն են»:

Տօնակատարութեան եզրափակիչ
պատգամը փոխանցեց Հ.Մ.Ը.Մ-ի Կեդ-
րոնական Վարչութեան ատենապետ
եղբ. Վաչէ Նաճարեան:

Եղբ. Նաճարեան առաջին հերթին
շնորհակտորեց յոբելեար մասնաճիւղին
100-ամեակը եւ ընդգծեց, որ ազգերու
պատմութեան մէջ հազուադէպ են այն
կազմակերպութիւնները եւ միութիւն-
ները, որոնք ունին 100 տարուան ժա-
ռանգ եւ աշխատանք կը տանին ներշնչ-
ուելով իրենց հիմնադիրներու պատ-
գամէն, ինչպէս որ է Հ.Մ.Ը.Մ-ը: Հ.Մ.-
Ը.Մ-ի Փլովտիվի յաջորդական սերունդ-
ները իրենց ներշնչումը առին միութեան
նշանաբանէն՝ «Բարձրացի՛ր-բարձրա-
ցու՛ր»էն: Հոս սերունդներ ուխտեցին,
որ պիտի նուիրուին հայ ժողովուրդի
ծառայութեան, բարձր պահելով Եռա-
գոյն դրօշը եւ Հ.Մ.Ը.Մ-ի ճամբով պիտի
ծառայեն Հայաստանին եւ Արցախին:

Իր խօսքը յոբելեար մասնաճիւղին
ուղղելով, եղբ. Նաճարեան յայտնեց, թէ
Հ.Մ.Ը.Մ. Փլովտիվ այսօր իր 100-ամեա-
կը տօնելով կը հաստատէ, որ ժամանա-
կի քննութեան յաջողած է եւ պատմու-



թեան մոռցուած էջերուն անցնելու տեղ
ջարդարար թուրքին կը փաստէ, որ ին-
քը միշտ ներկայ է ու պիտի մնայ տէրը
իր նահատակներու կտակին եւ պիտի
շարունակէ Հայ Դատի պայքարը եւ ար-
դար պահանջատիրութիւնը:

Մասնաճիւղին 100-ամեակը շնոր-
հակտորելով, եղբ. Նաճարեան նշեց, թէ
պահն է յիշելու եւ խոնարհելու յիշատա-
կին դիմաց այն բոլոր Հ.Մ.Ը.Մ-ական-
ներուն, որոնք անցնող 100 տարիներուն
իրենց ժամանակը տուին Հ.Մ.Ը.Մ-ի
սուրբ գաղափարները բարձր պահելու,
իրենց կեանքը տուին պահպանելու հայ-
րենիքի Սուրբ հողը եւ Արցախը եւ մեկնե-
ցան ազատ հայ մարդու եւ անկախ հայ-
րենիքի երազը իրենց սիրտին մէջ (խօս-
քին ամբողջութիւնը տեսնել էջ 55):

Խօսքը չփակած, եղբ. Նաճարեան
անակնկալ մը մատուցեց ներկաներուն,

երբ յայտարարեց, որ Փլովտիվի մասնա-
ճիւղին 100-ամեակին առիթով եւ իր
բազմավաստակ ծառայութեան համար,
Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութիւնը
որոշած է «Արտակարգ» ծառայութեան
չքանչանով պարգևատրել քոյր Տիրուհի
Պարտիզպանեան-Գրիգորեանը: Հետե-
ւաբար, ան քոյրը հրաւիրեց ամպիոն եւ
անոր յանձնեց Հ.Մ.Ը.Մ-ի «Արտակարգ»
չքանչան ու հաստատագիրը:

Հոսակ, տօնակատարութիւնը փա-
կուեցաւ մասնաճիւղի խմբապետուհի
քոյր Սրբուհի Գաբրիէլեանի շնորհակա-
լութեան եւ երախտիքի խօսքով:

Պաշտօնական տօնակատարութեան
յաջորդեց խրախճանքի բաժինը, Հ.Մ.-
Ը.Մ-ական ուրախութեամբ եւ ազգային
ոգեւորութեամբ դիմաւորելով մասնա-
ճիւղին երկրորդ 100-ամեակը:





Հ.Մ.Ը.Մ. ՍՈՎՈՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ ՄԸ ՉԷ ԵՒ ՍՈՎՈՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒ ՄԷՋ ՉԻ ԳՈՐԾԵՐ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ՎԱԶԷՆԱՃԱՐԵԱՆԻ ՊԱՏԳԱՄԸ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ՓԼՈՎՏԻՎԻ ՄԵԿՈՒՍԻ ՇՐՋԱՆԻ 100-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ)

Գեղեցիկ ականդրութեամբ մը, հաւաքուած ենք մեծ հպարտանքով տօնելու Հ.Մ.Ը.Մ.Ի Փրովտիվի Մեկուսի շրջանին 100-ամեակը եւ պաշտօնապէս նշելու մեր սիրելի միութեան՝ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան 100-ամեայ պատմութիւնը կերտող շրջան մը եւս, փաստը տալով որ 1918-ին Պոլիս հիմնուած այս միութիւնը դարձած է աշխարհասփիւռ կազմակերպութիւն, հարիւրաւոր մասնաճիւղերով, հազարաւոր սկաուտներով եւ մարզիկներով, որոնք ազգանուէր աշխատանք կը տանին ու հայ ժողովուրդին կը ծառայեն, ուր որ ալ կը գտնուին, ինչպէս հոս Փրովտիվի մէջ եւ Պուլկարիոյ հայաշատ այլ շրջաններուն մէջ:

Ազգերու պատմութեան մէջ հազուադիւտ են այն կազմակերպութիւնները եւ միութիւնները, որոնք ունին 100 տարուան ժառանգ եւ աշխատանք կը տանին ներշնչուելով իրենց հիմնադիրներու պատգամէն, ինչպէս որ է Հ.Մ.Ը.Մ.ը:

Հ.Մ.Ը.Մ.Ի Փրովտիվի յաջորդական սերունդները իրենց ներշնչումը առին միութեան նշանաբանէն՝ «Բարձրացի՛ր-բարձրացու՛ր»էն:

Հոս սերունդներ ուխտեցին, որ պիտի նուիրուին հայ ժողովուրդի ծառայութեան, բարձր պահելով Եռագոյն դրօշը եւ Հ.Մ.Ը.Մ.Ի ճամբով պիտի ծառայեն Հայաստանին եւ Արցախին:

100 տարին երկար ժամանակ է մարդու մը կեանքին համար, սակայն շատ կարճ ժամանակ է ազգային հաւաքականութեան մը համար, սովահար, գաղթական եւ որբացած սերունդներէ միտքով ու մարմնով առողջ, ազգային իրենց ինքնութեամբ հպարտ եւ արժանապատիւ սերունդներ կերտելու համար:

Հ.Մ.Ը.Մ. Փրովտիվ այսօր իր 100-ամեակը տօնելով կը հաստատէ, որ ժամանակի քննութեան յաջողած է եւ պատմութեան մոռցուած



էջերուն անցնելու տեղ ջարդարար թուրքին կը փաստէ, որ ինքը միշտ ներկայ է ու պիտի մնայ տէրը իր նահատակներու կտակին եւ պիտի շարունակէ Հայ Դատի պայքարը եւ արդար պահանջատիրութիւնը: Հ.Մ.Ը.Մ. պիտի փաստէ, որ այս միութիւնը իր գաղափարներով եւ գործով բարձր պիտի պահէ իր հաւատքը ու հաստատակամութիւնը բոլոր անոնց դէմ, որոնք պիտի փորձեն քանդել ամբողջական Հայաստանի տեսլականը, Հայաստանի մէջ, Արցախի մէջ եւ այլուր:

Ու զարմանալի չէ այս մէկը, որովհետեւ սովորական միութիւն մը չէ եւ սովորական պայմաններու մէջ չի գործեր Հ.Մ.Ը.Մ.:

Հ.Մ.Ը.Մ. ծնաւ Հայոց Յեղասպանութենէն եւ իր գլխաւոր աշխատանքը նկատեց հայ սերունդը հայրէն դաստիարակել՝ տէր կանգնելու համար իր ազգին, իր հայրենիքին եւ անոր Եռագոյն դրօշին:

Սփիւռքի մէջ, ինչպէս ամէն տեղ, հոս եւս ան աշխատեցաւ եւ ստեղծեց փոքր հայրենիք մը, հայրենիքէն հեռու: Նոյն թափով, հաւատքով եւ վճռակամութեամբ շարունակեց միութեան գաղափարախօսութիւնը, դաստիարակելով եւ ստեղծելով հոգեկան հայրենիք, առիթը ընծայելով մեր հայրենակիցներուն ապրելու իբրեւ հայ, հայրենիքէն հեռու, բայց հայրենիքը պահելով իրենց սրտին մէջ:

Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութիւնը կը շնորհաւորէ Հ.Մ.Ը.Մ.Ի Փրովտիվի Մեկուսի շրջանին 100-ամեակը, միութեան նշանաբանով առաջնորդուելու եւ Եւրոպայի ափերուն





Հ.Մ.Ը.Մ. - Հ.Մ.Ը.Մ.

Հա՛յը Հայ պահպանող իր առաքելութիւնը կատարելու համար: Հ.Մ.Ը.Մ.ը մեր ուժին աղբիւրն է: Մեր յաջողութեան գրաւականներէն մէկն է, որուն պէտք է գուրգուրալ ազգովին:

Հ.Մ.Ը.Մ.ը գործեց հայրենիքէն դուրս, բայց երբեք՝ առանց հայրենիքի:

Պահն է յիշելու եւ խոնարհելու յիշատակին դիմաց այն բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականներուն, որոնք անցնող 100 տարիներուն իրենց ժամանակը տուին Հ.Մ.Ը.Մ.ի սուրբ գաղափարները բարձր պահելու, իրենց կեանքը տուին պահպանելու հայրենիքի Սուրբ հողը եւ Արցախը եւ մեկնեցան ազատ Հայ մարդու եւ անկախ հայրենիքի երազը իրենց սիրտին մէջ:

Ապրի՛ք եւ ձեզմո՛վ ապրի Հ.Մ.Ը.Մ.ի Փրովտիվի շրջանը,

100-ամեայ իր վաստակով, բայց միշտ երիտասարդ ու կայտառ կազմակերպութեամբ, միշտ աշխոյժ եւ նորարար իր շարքերով:

Ձեզմով, ձեր կամաւոր աշխատանքով եւ զոհողութեամբ է որ կ'արժեւորուի Հ.Մ.Ը.Մ.ի Փրովտիվի շրջանը իր 100-ամեակին:

Կեդրոնական Վարչութիւնը անգամ մը եւս կը շնորհաւորէ Հ.Մ.Ը.Մ.ի Փրովտիվի մասնաճիւղը մասնաւորապէս եւ Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքը ընդհանրապէս, Հ.Մ.Ը.Մ.ի Փրովտիվի 100-ամեակին առիթով եւ վարձքը կատար բոլոր կամաւոր աշխատողներուն, որոնք նպաստեցին այս ձեռնարկին յաջողութեան:

Վարձքը կատար բոլորին եւ բարի վայելում ներկաներուն:



ԹԻՖԼԻՍԻ ՄԱՄՆԱՃԻՒՂԻ ՆՈՐ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՂԵՒՈՆԴ ԵՐԷՅ ԿՐՕՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՅՔԻ ՄԱՄՆԱԿՅՈՒԹԻՒՆ

Թղթակից ՄՈՆԹԵԱԼ

Շաբաթ, 26 Նոյեմբեր 2022-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Քէպէք նահանգի Մոնթրէալի Հ.Մ.Ը.Մ.-«Կամք» եւ Հ.Մ.Ը.Մ.ի Լաւալի մասնաճիւղերու սկստուները իրենց մասնակցութիւնը բերին Ազգ. Առաջնորդարանի Ղեկունգ Երէց կրօնական դասընթացին, որ տեղի ունեցաւ Ս. Գէորգ եկեղեցւոյ եւ Լաւալի Հայ կեդրոնի «Պարոնեան» սրահին մէջ, մասնակցութեամբ 24 անդամներու:

Դաստիարակչական ծրագիրը փոխանցուեցաւ Յակոբ Վրդ. Եագուպեանի կողմէ:

Մասնակիցները մեծ հետաքրքրութեամբ հետեւեցան եւ ներդրում ունեցան դաստիարակչական նիւթին:

Այս առիթով Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային Վարչութիւնը իր շնորհակալութիւնը կը յայտնէ Ազգ. Առաջնորդարանին եւ հոգեւոր հօր, ինչպէս նաեւ կանխայայտ շնորհաւորութիւններ կը փոխանցէ մասնակցողներուն՝ իրենց ստանալիք շքանշաններուն համար:



Վերջերս տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Թիֆլիսի մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը, որուն աւարտին ընտրուեցաւ իննամսանոց նոր վարչութիւն՝ հետեւեալ կազմով.-

Արթիւր Միրզոյեան- ատենապետ

Վրէժ Յարութիւնեան- քարտուղար

Ալլա Սուբիասեան- գանձապահ

Անժելինա Նազարեան, Էվելինա Մալխասեան, Լարիսա Խաչատրեան, Մարիա Երանոսեան, Իա Կախելաշվիլի եւ Յակոբ Լամազեան խորհրդականներ:



Հ.Մ.Ը.Մ. Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐ



ՆԱԲԱՍԱՐԴԵԱՆ 45-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ ՆՈՐԱՆՈՐ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐՈՎ ՈԳԵԲՈՐԵՑԻՆ ԵՒ ՅՈՒՄԱԴՐԵՑԻՆ Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՒՄՏԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԾՐՋԱՆԸ

Թղթակից ԼՈՍ ԱՆՃԵԼՍ

44 տարիներ շարունակ իրագործող Նաևասարդեան մարզախաղերը, որոնք քորոնայի համաճարակին պատճառով երկու տարի ակամայ դադարած էին, 2022-ին վերստին մեծ շուքով կազմակերպվեցան՝ շնորհիվ Նաևասարդեան 45-րդ մարզախաղերը հովանավորող պատույնախազահներ՝ տէր եւ տիկին Արա եւ Ալին Չաղլասեաններուն, անգամ մը եւս ոգեւորելով շրջանի մարզիկները,

սկսուածները, երիտասարդներն ու անդամները:

Հ.Մ.Ը.Մ.ի Նաևասարդեան 45-րդ մարզախաղերը սկիզբ առին Շաբաթ, 21 Մայիս 2022-ին, Կլենտէյլ Հայ Սքուլի մարզադաշտին վրայ: Այնուհետեւ մարզական մրցումները շարունակուեցան ամէն շաբաթավերջ, շրջանի զանազան մարզադաշտերուն վրայ:

Հ.Մ.Ը.Մ.ի Նաևասարդեան 45-րդ մարզախաղերուն մեծագոյն ձեռնարկներէն՝ Յաղթանակի պարահանդէսը տեղի ունեցաւ 26 Յունիս 2022-ին, «Beverly Hilton» պանդոկի սրահը, աւե-

լի քան 700 Հ.Մ.Ը.Մ.ասէր ներկայներու մասնակցութեամբ: Շրջանային Վարչութեան կողմէ «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական 2022» տիտղոսին արժանացաւ եւ յատուկ յուշանուէրով զնահատուեցաւ տարիներու վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. Վարանդ Մելքոնեան:

Աւանդութիւն դարձած Նաևասարդեան փառատօնը տեղի ունեցաւ 1-3 Յունիս 2022-ին, Los Angeles City College-ի շրջափակին մէջ, մասնակցութեամբ շրջանի հայ արուեստագէտներուն: Մասնաճիւղերը ունեցան իրենց ճաշի կրթականները:


Կազմակերպչական աշխատանքները բաւական դժուար էին, սակայն Նաևասարդեան մարզախաղերու յանձնախումբը բացառիկ կերպով աշխատանք տարաւ եւ ժողովուրդին անգամ մը եւս անմոռանալի եւ յիշատակելի օրեր հրամցուց :

3 Յունիս 2022-ի երեկոյեան, հանգամանօրէն իրենց աւարտին հասան Նաևասարդեան 45-րդ մարզախաղերը: Փակման հանդիսութիւնը տեղի ունեցաւ երեկոյեան ժամը 6-ին, Los Angeles City College-ի ֆութպոլի մարզադաշտին վրայ, բազմահազար Հ.Մ.Ը.Մ.ասէրներու ներկայութեամբ, մարզիկ-մարզիկուհիներու, սկսուածներու, անդամներու մասնակցութեամբ: Օրուան





Հ.Մ.Ը.Մ. Մ. ՆԱՅԱՆՉՆԵՐ



խօսանակներն էին քոյրեր Ալիք Մարտչե-
կան եւ Սիւզի Օճանեան, որոնք ձեռնհա-
սօրէն վարեցին օրուան յայտագիրը:

Արեւմտեան Միացեալ Նահանգնե-
րու Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերու խմբա-

պետներու առաջնորդութեամբ, մար-
զադաշտ ներկայացան եւ պատուոյ
հարթակին վրայ իրենց տեղերը գրաւե-
ցին Սմբատ Վրդ. Սապունճեան, Հ.Մ.-
Ը.Մ.ի Նաւասարդեան 45-րդ մարզախա-

ղերու պատուոյ նախագահ տէր եւ տիկ-
Արա եւ Ալին Չաղլասեաններ, «Տիպար
Հ.Մ.Ը.Մ.ական» եղբ. Վարանդ Մելքոն-
եան եւ Շրջանային Վարչութեան ատե-
նապետ եղբ. Յակոբ Թիւֆէնքճեան:

Շքերթը առաջնորդեց Հ.Մ.Ը.Մ.ի շե-
փորախումբը. յաջորդաբար մարզա-
դաշտ ներկայացան «Հրաչք» բաժան-
մունքի հրաչքները, որոնց հետեւեցան
շրջանի նորագոյն՝ Հ.Մ.Ը.Մ.ի «Կիլիկի-
խ» միաւորէն մինչեւ շրջանի հիմնա-
դիր Լոս Անճելըս մասնաճիւղի սկաու-
տական եւ մարզական խումբերը, յանձ-
նախումբերն ու անդամները, իրենց
վարչութիւններուն գլխաւորութեամբ
եւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական 11-րդ մարզա-
խաղերու մասնակից մարզիկներով: Տո-
ղանցքի ընթացքին յանձնուեցան յաղ-
թանակի բաժանները:





ԱՐԱ ԵՒ ԱՐԻՆ ԶԱՂՂԱՍԵԱՆՆԵՐ Հ.Մ.Ը.Մ.Ի ՆԱԲԱՍԱՐԴԵԱՆ 45-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ԴԱՏՈՒՈՅ ՆԱԽԱԳԱՀ

Արա եւ Արին Զաղղասեան ամուսնու ծանօթ եւ ճանչցուած անուն մըն է Հ.Մ.Ը.Մ.Ի Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանակին մէջ:

Արա Զաղղասեան ծնած է Հալէպ, Սուրիա, հայրենասէր ընտանեկան յարկի մը տակ, ուր վայելած է մեծ քրոջ՝ Նորային գուրգուրանքը եւ կրտսեր եղբոր՝ Շահէին սէրը: Հայրը եղած է Հ.Մ.Ը.Մ.ական: Մէկ տարեկանին ընտանեօք փոխադրուած են Սին Էլ Ֆիլ, Լիբանան, ուր իր նախնական կրթութիւնը ստացած է շրջանի Նազարեան նախակրթարանին, ապա՝ Յովակիմեան-Մանուկեան երկրորդական վարժարանին մէջ: Լիբանանի քաղաքացիական պատերազմի անապահով պայմանները թող չեն տար յաճախելու Պէյրութի Ամերիկեան Համալսարանը: 1986-ին ան կը փոխադրուի Միացեալ Նահանգներ՝ շարունակելու իր բարձրագոյն ուսումը եւ Cal State Long Beach համալսարանէն կը վկայուի իբրեւ երկրաչափ:

Ան կը նետուի կեանքի ասպարէզ եւ շնորհիւ իր աշխատասիրութեան ու պարտաճանաչութեան՝ իր անձնական առաջին American Tire Depot խանութը կը բանայ Օրէնճ Քաունթիի մէջ:

Արին Զոպեան-Զաղղասեան ծնած է Հալէպ, Սուրիա, միութենասէր ընտանիքի մը մէջ: Դուստրն է բժիշկ Վահէ Զոպեանի, որ երկար տարիներ եղած է Ազգային Հայկազեան Վարժարանի հոգաբարձութեան եւ Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան անդամ: Արինը նախնական ուսումը ստացած է Ազգային Հայկազեան Վարժարանին, իսկ երկրորդականը՝ Ազգային Քարէն Եփփէ Ճեմարանին մէջ, ապա վկայուած է Հալէպի Hotel Management համալսարանէն: Անդամակցած է Հ.Յ.Դ. Պատանեկան Միութեան: 1992-ին՝ հօրը վաղաժամ մահէն ետք, մօր՝ Սեդային եւ եղբոր՝ Բարսեղին հետ տեղափոխուած է Միացեալ Նահանգներ: Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան ծառայելու ժամանակաշրջանին ծանօթացած է իր ապագայ կողակիցին՝ Արային եւ 1995-ին կազմած են իրենց ընտանեկան բոյնը՝ Օրէնճ Քաունթիի մէջ:

Արան եւ Արինը մեծ հաւատքով եւ համբերութեամբ յաղթահարած են ամէն դժուարութիւն եւ յաջողութեամբ կեր-



տած են իրենց ապագան: Զաղղասեան ամուսնու բախտաւորուած է երեք մանչ զաւակով՝ Արսէն, Վահէ եւ Արմէն: Իբրեւ տիպար ծնողք, քրիստոնէական հաւատքով, ընտանեկան վեհ արժէքներով ու հայեցի կենցաղով դաստիարակած են իրենց զաւակները՝ զանոնք ուղարկելով հայկական ազգային վարժարաններ եւ միշտ քաջալերելով մաս կազմելու Հ.Մ.Ը.Մ.Ի մարզական խումբերուն եւ Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան շարքերուն (ՀԵԴ): Արսէնը եւ Վահէն անդամակցած են Հ.Մ.Ը.Մ.Ի Քրեեսենթալ Հովիտի «Շանթ» մասնաճիւղին՝ իբրեւ պասքեթպոլի մարզիկներ, իսկ Արմէնը՝ Փասատինայի «Ազատամարտ» մասնաճիւղի պասքեթպոլի խումբին:

Արինը անսակարկ գոհողութեամբ յանձն առած է օրինակելի հայ մօր պարտականութիւնները, ըլլա՛ն անոնք դպրոցական, մարզական կամ միութենական, իր զաւակներու հօգիներուն մէջ արմատացնելով հայրենասիրութիւնը:

Զաղղասեան ընտանիքը ամէն տարի իր աշխոյժ մասնակցութիւնը բերած է Նաւասարդեան մարզախաղերուն եւ փառատօնին:

Ազգանուէր Զաղղասեան գոյգը իրենց յաջողութիւններուն միշտ բաժնեկից դարձուցած են հայ եկեղեցին, կազմակերպութիւնները եւ միութիւնները: Յատուկ յիշատակումի արժանի է անոնց բարերարութիւնը վայելող Պրոպէնքի Հայ կեդրոնի ՀԵԴ-ի ժողովասենեակը, որ կը կրէ «Արսէն Զաղղասեան» անունը՝ ի յիշատակ Արայի հանգուցեալ հօր:

Արան իր անխոնջ ծառայութիւններուն համար պարգևատրուած է Հայ Ողնածուծի նուիրատուներու հիմնարկու-





Հ.Մ.Ը.Մ. Մ. ՆԱՅԱՆՉՆԵՐ



Թեան SBA's State of California Entrepreneurial Success-ի եւ բազմաթիւ այլ կազմակերպութիւններու մրցանակներով:

Արային հաստատումով Հ.Մ.Ը.Մ.ը ամէնէն հօգոր ամրոցն է, որ կը համախմբէ ամերիկահայ երիտասարդութիւնը՝ ջամբելով մարմնակրթական եւ ընկերային առողջ դաստիարակութիւն, որ կ'ամրապնդէ նոր սերունդի հայկական ինքնութեան եւ մշակոյթի կապերը:

«Սկիզբը, Նաւասարդեան մարզախաղերու պատուոյ նախագահի տիտղոսը եւ լուսարձակի տակ ըլլալու գաղափարը զիս կը մտահոգէր, սակայն, փորձառութեամբս՝ իբրեւ մայր, երբ մտածեցի, թէ Նաւասարդեան մարզախաղերը որքան խանդավառութիւն պիտի ստեղծեն մարզիկներու եւ ըսկառուներու մօտ, ու հազարաւոր պատանիներու դէմքին փայտ պիտի սփռեն, մեծ ոգեւորութեամբ եւ գոհունակութեամբ փափաք յայտնեցինք ստանձնելու պատուոյ նախագահութիւնը», համեստութեամբ յայտնեց Ալինը:

Չաղլասեան ամուլին համար Հ.Մ.Ը.Մ.ը հայկական մարզական եւ սկառուտական մեծագոյն կազմակերպութիւնն է, որուն անդամները կը սորվին հայրենասիրութիւն, ընկերասիրութիւն, կարգապահութիւն եւ մարզական ոգի ու ձեռք կը բերեն կեանքի լայն փորձառութիւններ՝ գիտակցելով «Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանին: Անոնք իրենց երախտագիտութիւնը կը յայտնեն Հ.Մ.Ը.Մ.ի կամաւոր բանակին, որուն շնորհիւ կ'իրագործուին Նաւասարդեան մարզախաղերը եւ բոլոր նախաձեռնութիւնները:



Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին անունով կը շնորհաւորենք Չաղլասեան գոյգը եւ բարձր կը գնահատենք անոնց հայրենասիրութեան եւ նուիրումի ոգին, իբրեւ բարի օրինակ Հ.Մ.Ը.Մ.ասէր հայերուն, ըստանձնելու Հ.Մ.Ը.Մ.ի ապագայ սերունդներու ազգային դիմագիծի կերտման եւ բարգաւաճման յանձնառութիւնը:

Թղթակից ԼՈՍ ԱՆՃԵԼՍ

Հ.Մ.Ը.Մ.ի Նաւասարդեան 45-րդ մարզախաղերու «Յաղթանակի պարահանդէս»ը կարողացաւ իրականացնել իր վրայ դրուած յոյսերը, հանդիսանալով Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան մէջ դրամահաւաքի ամէնէն յաջող ձեռնարկը:

«Պեկըրլի Հիլթըն»ի «Միջազգային պարասրահ»ին մէջ տեղի ունեցած ձեռնարկին իրենց մասնակցութիւնը բերին մօտաւորապէս 700 անձեր, միասնաբար տօնելու համար Նաւասարդեան մարզախաղերու յաջողութիւնները:

Հ.Մ.Ը.Մ.ի սկառուներուն կողմէ կատարուած դրօշակի արարողութեանէն ետք, Մ. Նահանգներու, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի քայլերդները կատարուեցան Հ.Մ.Ը.Մ.ական Եւանա Գրիգորեանի կողմէ:

Հանդիսավարն էր Չարլի Կալեան, իսկ բացման խօսքը արտասանեց «Յաղթանակի պարահանդէս»ի յանձնախումբի անդամ քոյր Քէթի Սիմոնեան: Օրուան զիսաւոր մրցանակները բաշխուեցան Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Թիւֆէնքձեանի կողմէ:

Այնուհետեւ ներկաները հաճոյքով դիտեցին Հ.Մ.Ը.Մ.ի գանազան նախաձեռնութիւններուն մասին կարճ տեսանկյունով, որոնց շարքին էին՝ մարզական եւ սկառուտական աշխատանքներու, «Հրաշք»ի եւ Թեքուիա բանակավայրին մասին նիւթեր:

Երեկոյնի իւրաքանչիւր մանրամասնութեան մէջ բացայայտ էր Հ.Մ.Ը.Մ.ի «Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանին, ինչպէս նաեւ կամաւոր եւ նուիրեալ աշխատանքին կենսական ազդեցութիւնը իր անդամներուն եւ ծրագիրներուն վրայ:

Ձեռնարկին ընթացքին, յայտնի բարերար եւ գործարար Վարանդ Մելքոնեան պաշտօնապէս ստացաւ «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»ի տիտղոսը, Հ.Մ.Ը.Մ.ին երկար տարիներու իր օրինակելի նուիրումին համար (Կենսագրական գիծերը տեսնել առանձին, էջ 62): Ան իր ելոյթին մէջ ան կարեւոր նկատեց Հ.Մ.Ը.Մ.ի մէջ գործող տարբեր սերունդներու ներ-





ՄԱՍՆԱԾԻՂԷ ՄԱՍՆԱԾԻՂ



ՆԱԲԱՍԱՐԴԵԱՆ 45-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ «ՅԱՂԹԱՆԱԿԻ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ»Ը ՓԱՅԼՈՒՄՆ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՄՆ ՄԸ ԵՂԱԲ Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱՄԱՐ

կայացուցիչներուն միջև գործակցութիւնը, զայն Հ.Մ.Ը.Մ.ը հայապահպանման եւ «առ յաւիտ» կազմակերպութեան վերածելու գլխաւոր ազդակը նկատելով:

Նաեւ, տէր եւ տիկին Արա եւ Ալին Զաղլասեաններ ձեռնարկին ընթացքին պաշտօնապէս դարձան Հ.Մ.Ը.Մ.ի Նաւասարդեան 45-րդ մարզախաղերու պատուոյ նախագահները (ամուլին ծանօթանալ առանձին, էջ 59): Այս պատիւը ստանալու ընթացքին, ամուլը յոյժ կարեւոր նկատեց Հ.Մ.Ը.Մ.ի մատուցած ընկերային սպասարկութիւնները, որոնցմէ գլխաւորը նկատեց հայ պատանիներուն եւ երիտասարդներուն՝ հայկական ինքնութեան հետ կապերուն ամրապնդումը, յոյս յայտնելով, որ «անցեալի սերունդներէն եկող լոյսը կը շարունակէ ճառագայթել, փայլուն ապագայ մը ապահովելու համար»:

Մրցանակաբաշխութենէն ետք, ներկաները վայելցին «էլիզ» նուագախումբին կատարումները:

Այսպէսով, Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութիւնը կարողացաւ յաջողութեամբ պսակել Նաւասարդեան 45-րդ մարզախաղերը, շարունակելով տասնամեակներ առաջ իր սկսած առաքելութիւնը:

«Հ.Մ.Ը.Մ.ը հպարտ հայերու ընտանիք մըն է, որուն նպատակն է լաւապէս դաստիարակել ապագայ սերունդը, մարզական, սկստական եւ ընկերային այլ նախաձեռնութիւններու միջոցով», յայտնեց Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Թիւֆէնքճեան՝ աւելցնելով, որ համաճարակին պատճառով երկու տարուան պարտադիր



դադարէ ետք, այս յաջող ձեռնարկը Հ.Մ.Ը.Մ.ի աւադութիւններով հարստացած փայլուն ապագայի մը յոյսերով կը լեցնէ շրջանի հայութիւնը:

Իր կարգին, «Յաղթանակի պարահանդէս»ի յանձնախումբի ատենապետ եղբ. Սթիւ Արթիւնեան աւելցուց, թէ «Յաղթանակի պարահանդէս»ը հոյակապ աւիթ մըն էր տօնելու Հ.Մ.Ը.Մ.ի արձանագրած յաջողութիւնները եւ անոր ներդրումները՝ շրջանի հայութեան բարգաւաճման ջանքերուն մէջ, որոնք պիտի նպաստեն հայկական ժառանգութեան եւ մշակոյթի երկարակեցութեան:





Հ.Մ.Ը.Մ. Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐ

ՃԱՆՉՆԱՆՔ

2022-Ի «ՏԻՊԱՐ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ»Ը՝ ԵՂԲ. ՎԱՐԱՆԴ ՄԵԼՔՈՆՆԵԱՆ

Եղբ. Վարանդ Մելքոնեան ծնած է Իրաք եւ պատանեկան տարիքին անդամակցած է իր ծննդավայրի Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղին, իր ազատ ժամերուն մեծ մասը անցրելով անոր շարքերուն մէջ: Նախնական կրթութիւնը ստացած է ծննդավայրի կաթողիկէ վարժարանին, իսկ երկրորդականը՝ տեղւոյն պետական վարժարանին մէջ: 12-րդ դասարանին, պետական Պաքալուրէայի քննութիւններուն մասնակցելով՝ իր վարժարանին առաջինը հանդիսացած է, իսկ ամբողջ Իրաքի՝ երկրորդը: Պաղտատի Արհեստագիտութեան Համալսարանին մէջ մեքենայական ճարտարագիտութեան մարզին մէջ ուսումը սկսած է, սակայն մէկուկէս տարի ուսանելէ ետք, 1977-ին փոխադրուած է Միացեալ Նահանգներ: Ան հպարտ գաւակն է Մելքոն եւ Անժէլ Մելքոնեաններուն. եղած է անոնց եօթը գաւակներէն մէկը եւ վայելած է անոնց սէրն ու գուրգուրանքը:

1979-ին անդամակցած է Հ.Մ.Ը.Մ-ի

Լոս Անճելըսի մասնաճիւղին՝ նախ մաս կազմելով անոր ընկերային յանձնախումբին, ապա՝ վարչութեան: Այնուհետեւ, եղբ. Մելքոնեան միշտ զօրակցած է ո՛չ միայն իր անդամակցած մասնաճիւղին, այլ նաեւ մնացուն ներկայութիւն եղած է շրջանի Հ.Մ.Ը.Մ-ի կեանքին մէջ՝ մեծապէս օգտակար հանդիսանալով շրջանային մակարդակի բոլոր աշխատանքներուն, եւ մաս կազմած է շրջանային այլ յանձնախումբերու: Ըստ անոր՝ հայ ժողովուրդին օգտակար ըլլալը հրամայական է, իսկ հայրենական բարօրութեան նպաստելը պէտք է ըլլայ իւրաքանչիւր հայու կեանքին նպատակը:

Եղբ. Մելքոնեան յաջողակ գործարար մըն է եւ ներկայիս տնօրէնն է (chairman & CEO) Home Organizers Inc. հաստատութեան, որ կը ներառէ ինը տարբեր ընկերակցութիւններ, ներառեալ՝ Closet World, Close By Design, Closet Dimensions, Garage Envy, Blinds World, Organize.com եւ Brio Water Technologies, որոնք գործունէութիւն կը մշակեն Միացեալ Նահանգներու եւ Գանատայի մէջ 65 գործատուներով:

1989-ին ան ծանօթացած է ամուսնացած է Հոլրի ձիվէլէկեանի հետ, բախտաւորութեամբ երեք գաւակներով՝ Արման, Արիլն եւ Արէն:

Մելքոնեան ամուրը նեցուկ կանգնած է հազարաւոր ծրագիրներու եւ նախաձեռնութիւններու եւ գործօն մասնակցութիւն բերած է շարք մը կազմակերպութիւններու աշխատանքներուն: Անոնք իրենց յաջողութիւններուն բաժնեկից դարձուցած են հայ ազգը, նպաստելով հայրենիքին, Արցախին, Լիբանան-



նի եւ Իրաքի հայութեան: Ամէն տարի անոնք նիւթական եւ բարոյական զօրակցութիւնը կը յայտնեն համայնքի զանազան կառույցներուն:

Մելքոնեաններու բարեգործութիւնները, մարդասիրական ծառայութիւնները եւ հայրենասիրութիւնը ծանօթ են բոլորին: Ահա բարերար գոյգ մը, որ իր կեանքի յաջողութիւններուն բաժնեկից կը դարձնէ ազգօգուտ կազմակերպութիւնները եւ խոստումնայից անհատները՝ այն հաւատքով, որ անոնք իրենց հետապնդած նպատակներով կամ անհատական նուաճումներով մեծապէս պիտի նպաստեն հայ ժողովուրդի բարելաւման, հայրենիքի հզօրացման եւ իրենց բնական շրջապատի վերելքին:

Եղբ. Վարանդ Մելքոնեան արժանացած է առաւել քան 50 մրցանակներու, ներառեալ՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսի ձեռամբ՝ «Կիլիկիոյ Ասպետ» շքանշանին (2005), Հայկական





ՄԱՍՆԱԾԻՂԷ ՄԱՍՆԱԾԻՂ

ոսկրածուծի նուիրատուներու հիմնարկութեան «Տարուան անձնաւորութիւնը» մրցանակին (2006), Արեւմտեան Մ. Նահանգներու Հայ Մշակութային հիմնարկութեան մրցանակին (2010), Արեւմտեան Մ. Նահանգներու Հայ Դատի «Ժառանգութիւն» մրցանակին (2012), ինչպէս նաեւ մրցանակներ ստացած է Քալիֆորնիոյ նահանգապետարանէն, Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու Տունէն, Ծերակոյտէն, Քալիֆորնիոյ խորհրդարանէն եւ շարք մը քաղաքներու կառավարութիւններէն:

Եղբ. Վարանդ Մելքոնեանի համար յատկանշական են՝ 2015-ին տիկնոջ հետ Հ.Մ.Ը.Մ.ի Նաւասարդեան 40-րդ մարզախաղերու պատուոյ նախագահութեան ստանձնումը, 2016-ին Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին ձեռամբ՝ «Կիլիկեան Իշխան»ի շքանշանով պարգևատրուումը, եւ 2017-ին «էլիս Այլընտ» պատուոյ շքանշանին շնորհումը, որ տեղի ունեցաւ Նիւ Եորքի գեղեցիկ, խորհրդանշական եւ պատմական էլիս կղզիին վրայ:

Հակառակ իր գերզբաղուածութեան, եղբ. Վարանդ Մելքոնեան ժամանակ ստեղծած է անդամակցելու կամ գորակցելու այն կամակերպութիւններուն, որոնք մարդկութեան եւ յատկապէս Հայ ժողովուրդի հզօրացման ու անոր արդար դատի լուծման աշխատանքներուն կը նպաստեն՝ Հայ Դատ, USC-ի Հայկական ամպիոն, Հայ ոսկրածուծի նուիրատուներու հիմնարկութեան եւ այլն: Մելքոնեան աշխոյժ գործունէութիւն կը տանի ամերիկեան քաղաքական կեանքին մէջ, ինչպէս նաեւ անդամ է ամերիկեան մարդասիրական բազմաթիւ կազմակերպութիւններու:

Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան որոշումով, եղբ. Վարանդ Մելքոնեանին շնորհուած է 2022-ի «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»ի տիտղոսը, որովհետեւ ան իր խոնարհ եւ ազնիւ նկարագիրով լաւապէս կը մարմնաւորէ Հ.Մ.Ը.Մ.ի «Բարձրացի՛ր-բարձրացուր» խորհրդանիշը: Համայնքին իր նուիրումը եւ բարեսիրական ջանքերը զինք դարձուցած են օրինակելի Հ.Մ.Ը.Մ.ական մը:

Հ.Մ.Ը.Մ.ի ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ ԽԱՂԵՐՈՒ 45-ԱՄԵԱԿԻՆ՝

Մ. Ն. ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԹՈՐԳՈՄ ԵՊՍ. ՏՕՆՈՅԵԱՆԻ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԽՕՍՔԸ

Միտոնօրհնէի մասնակցելու պարտաւորութեամբ Լիբանան մեկնած Անթիլիասի Մայրավանքէն քրիստոնէական ջերմ սիրով կ'ողջունենք Հ.Մ.Ը.Մ.ի Նաւասարդեան խաղերու 45-րդ տարեդարձը եւ այս առիթով մեր սրտագին օրհնութիւնները կը բաշխենք Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու մեծ ընտանիքի իրաքանչիւր անդամին՝ Շրջանային եւ տեղական մարմիններու վարչական պատասխանատուներէն մինչեւ սկաուտներն ու «կակուղ թաթիկ»ները, անցեալ եւ ներկայ մարզիկներէն մինչեւ մեր սիրելի ժողովուրդին բոլոր գաւակները, որոնք ըլլալով հանդերձ տարբեր սերունդներու ներկայացուցիչներ, իբրեւ գլխաւոր յենարան եւ անգերազանցելի նեցուկ, ահա՛ 45 տարիներէ ի վեր գօրավիզ կը կանգնին Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան հայակեղորն ու հայանպաստ ծրագիրներուն եւ հայրենական ու ազգանուէր աշխատանքներուն:



Բարձր ոգեւորութեամբ ու գնահատանքով կ'ողջունենք նաեւ մեր շրջանէն ներս եւ Հ.Մ.Ը.Մ.ի կառոյցին ջանքերով 2018 թուականէն ի վեր իրականացուող «Հրաշք» ծրագիրը, որ իրօք հրաշալի ներկայութիւն է դարձած մեր ազգի գաւակաց կեանքին մէջ: Տարբեր կարողութիւններով օժտուած մանուկներու եւ պատանիներու համար «Հրաշք»ը տարուէ տարի աւելի եւս կը հրաշագործուի՝ յաւելեալ ուշադրութեան արժանի այս տղաքը ընդգրկելով մարզական շարքեր՝ առիթ տալով անոնց, որ մասնակցին Նաւասարդեան խաղերու համահայկական ընդհանուր տողանցքին եւ մրցոյթներուն:

Յուրախութիւն բոլորիս, համաճարակի պատճառով երկու տարուան ստիպողական դադարէ մը ետք, Նաւասարդեան խաղերը նորոգ թափով ու նորոգելի շնչառութեամբ մեր ժողովուրդի կեանքէն ներս դարձեալ կը դառնան փնտռելի ներկայութիւն, շնորհիւ այն բարձր կազմակերպութեան եւ մագնիսացնող մթնոլորտին, որուն ետին ամբողջ աւանդ մը կը կանգնի՝ հիմնադիր Քրիստեաններէն մինչեւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի անմահ հերոսները: Միաժամանակ, ողջունելի այս միութիւնը՝ միջին արեւելեան բնօրրանէն մինչեւ ամերիկեան աշխարհի այս ափերը, ծաղկուն շարունակականութիւն մը կ'ապահովէ Հ.Մ.Ը.Մ.ական քոյր-եղբայրներու եւ իրերայաջորդ հայ գիտակից սերունդներու:

Կանաչ երթ՝ միշտ երիտասարդ Հ.Մ.Ը.Մ.ին:

Աղօթարար
ԹՈՐԳՈՄ ԵՊՍ. ՏՕՆՈՅԵԱՆ
Առաջնորդ Մ. Նահանգներու Արեւմտեան Թեմի





Հ.Մ.Ը.Մ. Մ. ՆԱՅԱՆՉՆԵՐ



«Հ.Մ.Ը.Մ.Ի ՕՐ»ՈՒՄՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹՒԻՆ ԵՒ ԱՐԺԱՆԱՒՈՐ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆՆԵՐՈՒ ԴԱՐԳԵՒԱՏՐՈՒՄ

Թղթակից ԼՈՍ ԱՆՃԵԼՍԸ

Շաբաթ, 19 Նոյեմբեր 2022-ի երեկոյան ժամը 7-ին, Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան կեդրոնի «Գէորգ Անտոնեան» սրահին մէջ կը տիրէր խանդավառ եւ Հ.Մ.Ը.Մ.ի իւրայատուկ մթնոլորտ, տրուած ըլլալով որ Հ.Մ.Ը.Մ.ականներ հաւաքուած էին «Հ.Մ.Ը.Մ.ի Օր»ուան եօթներորդ տարեկան ստանձնաթեան առիթով:

Ներկայ էին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Արմանտ Քիլիճեան, Նաւասարդեան խաղերու անցեալի «Պատուոյ նախագահ»ներ, «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»ներ, Հ.Մ.Ը.Մ.ի ներկայ եւ նախկին Շրջանային Վարչութիւններու անդամներ, մասնաճիւղերու վարչականներ, Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետ-խմբապետուհիներ, հիւրեր եւ բազմաթիւ անդամներ:

Տօնակատարութեան բացումը կատարուեցաւ դրօշակակիրներու մուտքով: Յաջորդեցին Մ. Նահանգներու, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի քայերգները: Օրուան հանդիսավարութիւնը կատարեց Շրջանային Վարչութեան անդամ քոյր Սիրան Մարսէլեան:

Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Թիւֆէնքեան փոխանցեց օրուան պատգամը: Ան ողջունեց ներկաները եւ շնորհաւորեց պարգեւատրեալները: Ապա, եղբ. Թիւֆէնքեան ներկայացուց այս առիթով Հ.Մ.Ը.Մ.ի «Արտակարգ» շքանշանով պարգեւատրեալ եղբ. Վիգէն Աբէլեանը եւ բեմ հրաւիրեց Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Արմանտ Քիլիճեանը: Եղբայրները կատարեցին Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան առաջարկով եւ Կեդրոնական Վարչութեան որոշումով՝ միութեան «Արտակարգ» պատուանշանի տուչութիւնը երկար տարիներու վաստակաշատ եղբոր:

Եղբ. Վիգէն Աբէլեան ծաւալուն աշխատանք տարած է շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի զանազան մակարդակներուն վրայ: Իբրեւ պարտականութեան գիտակից միութենական, ան պատասխանատու պաշտօնակցի յանձնախումբերու: 2015-ին, Եղբ. Վիգէն Աբէլեան իր անսահման նուիրումին շնորհիւ արժանացած է Հ.Մ.Ը.Մ.ի «Ծառայութեան» շքանշանին: 2017-ին, տէր եւ տիկին Վիգէն եւ Նոնօ Աբէլեաններ մեծ յանձնառութեամբ ստանձնած են Նաւասարդեան 42-րդ մարզախաղերուն պատուոյ նախագահութիւնը: Եղբ. Վիգէն Աբէլեան իր ընտանիքին հետ միշտ նեցուկ կանգնած է Հ.Մ.Ը.Մ.ին եւ իր նիւթական ու բարոյական աջակցութեամբ նպաստած է անոր վերելքին:



Կենսագրական այս ծանօթութիւններու ներկայացումէն ետք, երկարաշունչ ծափողջոյններով բեմ բարձրացաւ եղբ. Աբէլեան եւ համեստութեամբ

Կենսագրական այս ծանօթութիւններու ներկայացումէն ետք, երկարաշունչ ծափողջոյններով բեմ բարձրացաւ եղբ. Աբէլեան եւ համեստութեամբ

Կենսագրական այս ծանօթութիւններու ներկայացումէն ետք, երկարաշունչ ծափողջոյններով բեմ բարձրացաւ եղբ. Աբէլեան եւ համեստութեամբ





ՄԱՍՆԱԾԻՂԷ ՄԱՍՆԱԾԻՂ



ընդունեց տարիներու իր վաստակին գնահատանքը հանդիսացող «Արտակարգ» պատուանշանը: Եղբայրը շնորհակալութիւն յայտնեց Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային եւ Կեդրոնական Վարչութիւններուն՝ այս հպարտ առիթին համար:

Ընթրիքի դադարին ելոյթ ունեցաւ տաղանդաւոր երաժիշտ Արա Տապանճեան, որ հայկական երաժշտութեամբ ջերմեռանդ միջնորդ ստեղծեց ներկաներուն մօտ: Ապա ցուցադրուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանին իրագործումները ներկայացնող տեսերիզ մը: Այնուհետեւ ներկայացուցան 2021-2022 տարեշրջանին մեզմէ յաւատ քաջութեամբ Հ.Մ.Ը.Մ.ականներու նկարները՝ մեծ յուզում յառաջացնելով ներկաներուն մօտ:

Հուսկ, կատարուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի «Ծառայութեան» շքանշաններու տուրութիւն: Արժանաւորներուն անունները

ընդունեց տաղանդաւոր երաժիշտ Արա Տապանճեան, որ հայկական երաժշտութեամբ ջերմեռանդ միջնորդ ստեղծեց ներկաներուն մօտ: Ապա ցուցադրուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանին իրագործումները ներկայացնող տեսերիզ մը: Այնուհետեւ ներկայացուցան 2021-2022 տարեշրջանին մեզմէ յաւատ քաջութեամբ Հ.Մ.Ը.Մ.ականներու նկարները՝ մեծ յուզում յառաջացնելով ներկաներուն մօտ:

- Լոս Անճելըսի մասնաճիւղ՝ եղբ. Արա Ճէճէեան:
- Ֆրեզնոյի «Սասուն» մասնաճիւղ՝ քոյր Արփի Աբգարեան:
- Փասատինայի «Ազատամարտ» մասնաճիւղ՝ եղբ. Արա Խաչիկեան:
- Կլէնտէյլի «Արարատ» մասնաճիւղ՝ եղբ. Բարսեղ Գարամանեան:
- Օրէնճ Քաունթիի «Սարդարապատ» մասնաճիւղ՝ քոյր Քրիստէլ Սպուլնճեան:

- Սան Ֆրանսիսկո Հովիտի «Մասիս» մասնաճիւղ՝ եղբ. Էլի Պալէոգեան:

- Սան Տիէկոյի «Սեւան» մասնաճիւղ՝ եղբ. Էմիլ Մաղաքեան:

- Ինընտ Էմփայրի «Արագ» մասնաճիւղ՝ քոյր Թալին Ֆեղալի:

- Քրեսենթա Հովիտի «Շանթ» մասնաճիւղ՝ եղբ. Գրիգոր Գարամանուկեան:

- Պրայմքի «Սիփան» մասնաճիւղ՝ եղբ. Անդրանիկ (Յովիկ) Նրեմեան:

Հ.Մ.Ը.Մ.ի «Ծառայութեան» շքանշանին արժանացած էին նաեւ Սանթա Գլարա Հովիտի «Անի» մասնաճիւղէն եղբ. Մինաս Կարապետեան եւ Ուոլթաթ Քրիքի «Կարս» մասնաճիւղէն քոյր Յասմիկ Գրիգորեան, որոնք սակայն կամքէ անկախ պատճառներով կը բացակայէին այդ օր: Արժանաւոր պարգեւատրեալները երկար ծափերով գնահատուեցան ներկաներուն կողմէ:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան խօսքը արտասանեց եղբ. Արմանտ Քրիլճեան: Ան շնորհաւորանքի եւ գնահատանքի խօսք ուղղեց մասնաճիւղերու պարգեւատրեալներուն եւ տօնակատարութեան կազմակերպիչ Շրջանային Վարչութեան: Ան նաեւ զօհունակութիւն յայտնեց, որ կը գտնուի վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ականներու մէջ եւ յատուկ հպարտանքով արտայայտուեցաւ անոնց աշխատանքներուն մասին:

Տօնակատարութիւնը վերջ գտաւ ուշ երեկոյեան՝ անգամ մը եւս Հ.Մ.Ը.Մ.ի անխախտ գոյութիւնը պահպանելու կամքը դրոշմելով մասնակիցներուն մօտ:





Հ.Մ.Ը.Մ. Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐ



Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՎԵԼԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԾՐՁԱՆԻ ՆԱԲԱՍԱՐԴԵԱՆ 30-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ ՊՈՍԹՈՆԻ ՄԷՁ

Թղթակից ՊՈՍԹՈՆ

Երկու տարուան ընդմիջումէ ետք, Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Միացեալ Նահանգներու շրջանի Նաւասարդեան 30-րդ խաղերը տեղի ունեցան Պոսթընի մէջ, 1-3 Յուլիս 2022-ին, նախաձեռնութեամբ՝ Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան, հովանաւորութեամբ Արեւելեան Մ. Նահանգներու թեմի Առաջնորդ Անուշաւան Արք. Դանիէլեանի, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եւ Արեւելեան Մ. Նահանգներու շրջանի կապ եղբ. Վահէ Թանաշեանի եւ հիւրընկալութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Պոսթընի մասնաճիւղին:

Բացման հանդիսութեան ներկայ էին նաեւ Ուայթընզվիլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Միքայէլ Քհնյ. Տէր Խորոզման, Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Խաթակ Մկրտիչեան, Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի անդամ Փօլ Հարոյեան, Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Արպի Ղազարեան, ՀՕՄ-ի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ Նարդուհի Ապրիմեան եւ Հ.Յ.Դ. Կեդրոնական Վարչութեան ատենապետ Նարեկ Մկրտիչեան:

Խաղերուն բացման արարողութիւնը տեղի ունեցաւ «Woburn High School»-ի

վազքի եւ ֆութպոլի դաշտին վրայ, Շաբաթ, 2 Յուլիսի առաւօտեան ժամը 10-ին: Տողանցքը առաջնորդեցին դրօշակակիր սկաուտներ, Պոսթընի մասնաճիւղէն թմբկահար սկաուտներ, Շրջանային խմբապետն ու խմբապետուհին եւ շրջանի բոլոր մասնաճիւղերէն տարագաւոր սկաուտներ, արեւոյշներ, դայիկներ, արծուիկներ եւ մոկլիներ:

Սկաուտներուն հետեւեցան շրջանի մասնաճիւղերու մարզիկները, Շրջանային մարզական յանձնախումբի անդամները, եւ վերջապէս Հ.Մ.Ը.Մ.ական 11-րդ մարզախաղերուն շրջանը ներկայացնող մարզական բազմանդամ պատկերակոթիւնը:

Օրուան հանդիսավար եղբ. Աւօ Պարմաքեանի բարի գալուստի խօսքէն ետք, յաջորդաբար խօսքեր արտասանեցին Հ.Մ.Ը.Մ.ի Պոսթընի մասնաճիւղի ատենապետ եղբ. Սեւակ Խաչատուրեան, Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Վիգէն Խաչատուրեան եւ Առաջնորդ Հօր ներկայացուցիչ՝ Միքայէլ Քհնյ. Տէր Խորոզման:

Երեք օրուան վրայ երկարող խաղերուն ընթացքին՝ դաշտերու վրայ թէ ամէնտուրեք Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկը հանդիպեցաւ իր հարազատներուն, որոնք ժամանած էին Արեւելեան Մ. Նահանգներու զանազան մասնաճիւղերէն՝ Ալպընի, Պոսթըն, Շիքսօ, Տիթթոյթ,

Ֆլորիտա, Մէրիմաք Հովիտ, Նիւ ձըրզի, Նիւ Եորք, Ֆիլադելֆիա, Փրովիտընս եւ Ուաշինկթըն, ինչպէս նաեւ Գանատայի Մոնթրէալի եւ Թորոնթօյի մասնաճիւղերէն: Մարզախաղերուն մասնակցեցան 70 խումբեր եւ 500 մարզիկներ, որոնք կիրարկեցին 6 մարզաձեւեր՝ ֆութպոլ, պասքեթպոլ, վոլիպոլ, վազք, լող եւ ճատրակ:

Բոլոր մարզիկները, սկաուտները եւ համակիրները, խումբ առ խումբ ժամանեցին Պոսթըն, ուր տեղի ունեցաւ մասնաճիւղերուն պատասխանատուներու կարճ ժողով մը, բացատրելու եռօրեայ մարզախաղերուն դասաւորումը, օրէնքները եւ կարգապահական խստապահանջ պայմանները:

Հ.Մ.Ը.Մ.ի տարեկան այս մարզախաղերը առիթ մըն են սատարելու Հ.Մ.Ը.Մ.ի վսեմ նպատակին, երբ շրջանի մասնաճիւղերէն ժամանած Հ.Մ.Ը.Մ.ականներ եւ համակիրներ, դատեպնդուած Հ.Մ.Ը.Մ.ի շունչով եւ ոգիով, կը հաւաքուին Նաւասարդեան խաղերու դրօշին տակ՝ մրցելու հայկական ազնիւ ոգիով, ստեղծելու խանդավառ մթնոլորտ, ծառայելու՝ «Բարձրացիր՝ բարձրացուր» նշանաբանին, միշտ ի մտի ունենալով որ այս խաղերէն յաղթական դուրս պիտի գայ միայն Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքը:

Ծնողներ ու բարեկամներ ոգեւորիչ



ՄԱՍՆԱԾԻՂԷ ՄԱՍՆԱԾԻՂ



խանդավառութեամբ կ'այցելելին դաշտէ դաշտ, քաջալերելով իրենց մարզիկները, որպէսզի նորանոր յաղթանակներ արձանագրեն իրենց մասնաճիւղերուն համար, առանց անդրադառնալու թէ իրենց անդամակցութիւնը Հ.Մ.Ը.Մ.ին ինքնին ամենամեծ յաղթանակն է հայեցի ազգային դիմագիծի պահպանման ճիգերուն մէջ:

Այսպէս, Ուրբաթ, 1 Յուլիսին, հիւրընկալ մասնաճիւղը կազմակերպեց «Mediterranean Night» խնճոյքի հաւաք՝ Ուոթերթաունի Հայ Կեդրոնին բակը:

Շաբաթ, 2 Յուլիսի երեկոյեան տեղի ունեցաւ յաղթանակի ճաշկերոյթ-պարահանդէսը՝ «Westin Waltham» պանդոկին սրահը: Բարի գալուստի խօսք արտասանեց հանդիսավար եղբ. Աւօ Պարմաքեան, ապա ան հրաւիրեց Նաւասարդեան խաղերու կազմակերպիչ յանձնախումբի ատենապետ Սարգիս Ուրֆալեանը, որ յայտնեց իր խորին երախտագիտութիւնը յանձնախումբի եւ ենթախանութիւնի բոլոր անդամներուն:

Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Վիգէն Խաչատուրեան խօսք առնելով նշեց մարզախաղերուն յաջող ընթացքը եւ շեշտեց պատասխանատուներու դերը յաջողութեան կերտման մէջ: Ան յարատեւ յաջողութիւն յաւաքդիմութիւն մաղթեց բոլորին, որպէսզի Հ.Մ.Ը.Մ. շարունակէ արձանագրել նորանոր յաջողութիւններ:

Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի անդամ Փօլ Հարոյեան շեշտեց Հ.Մ.Ը.Մ.ի անհրաժեշտ դերը հայ գաղութէն ներս:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վահէ Թանաշեան փոխանցեց Կեդրոնական Վարչութեան պատգամը (տեսնել առանձին): Առաջնորդ Հօր ներկայացուցիչ Միքայէլ Քհնյ. Տէր Խոսրովեան ներկայացուց Արեւելեան Մ. Նահանգներու թեմի Առաջնորդ Անուշաւան Արք. Դանիէլեանին հայրական պատգամը եւ օրհնութիւնը: Երեկոն խանդավառեց երգիչ Յարութ Պետրոսեան, որ այս առիթով Գանատայէն ժամանած էր յատուկ հրաւերով:

Կիրակի, 3 Յուլիսի երեկոյեան տեղի ունեցաւ պարահանդէս՝ կրկին «Westin Waltham»-ի սրահը: Պարահանդէսը խանդավառեց երգիչ Սուրօ, որուն միացաւ DJ Jilber: Նոյն երեկոյեան տեղի ունեցաւ արտոյան խումբերու բաժակներու եւ յուշատախտակներու բաշխում: Ամէնէն աւելի բարելաւուած մասնա-



ճիւղի բաժակը ստացաւ Փրովիտընսի մասնաճիւղը, իսկ «Տիպար մասնաճիւղ»ի «Շղբայր Արամ Կաւուր» բաժակը ստացաւ Մէրիմաք Հովիտի մասնաճիւղը: Երէջ տղոց վոլիպոլի «Շղբայր Համօ Սարտարապէկեանց» բաժակը ստացաւ Մէրիմաք Հովիտի մասնաճիւղը, իսկ երէջ տղոց պասքեթպոլի «Շղբայր Մարք Ալաշայեան» բաժակին տիրացաւ Նիւ Ճըրզիի մասնաճիւղը:

Խումբերու ընդհանուր դասաւորումը պարզեց հետեւեալ պատկերը-

1. Պոսթըն 86 կէտ
2. Նիւ Եորք 70 կէտ
3. Շիքակօ 22 կէտ
4. Փրովիտընս 15 կէտ
5. Նիւ Ճըրզի 14 կէտ
6. Ուաշինկթըն 12 կէտ
7. Մոնթրէալ 9 կէտ
8. Մէրիմաք Հովիտ 7 կէտ
9. Ալպընի 4 կէտ
10. Ֆիլատելֆիա, Թորոնթօ, Ֆլորիտա 0 կէտ

Յետադարձ ակնարկ մը նետելով եռօրեայ մարզախաղերուն վրայ, առանց վարանելու կարելի է հաստատել, որ շրջանը հարուստ է ազգային բարձր գիտակցութեան տէր կամաւորներով, ըլլան անոնք ծնողք թէ պատասխանատու:

Անգամ մը եւս Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքը յաղթական դուրս եկաւ:

Յատուկ զնահատանքի արժանի է հիւրընկալ Պոսթընի մասնաճիւղը եւ Շրջանային մարզական յանձնախումբը:

Բոլորին վարձքը կատար:



ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՏՕՆԸ

(ԱՐԵՒԵԼԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՇՐՋԱՆԻ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ
30-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒՆ Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՊԱՏԳԱՄԸ,
ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ ԵՂԲ. ՎԱՀԷ ԹԱՆԱՇԵԱՆԻ ԿՈՂՄԷ)

Այսօր Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին համար մեծ տօն է, հետեւաբար Կեդրոնական Վարչութեան համար՝ ուրախութիւն է Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Միացեալ Նահանգներու շրջանը ողջունել Նաւասարդեան 30-րդ մարզախաղերու կազմակերպման առիթով:


Աշխարհը հարուստած քորոնայի համաճարակի սահմանափակումներէն ետք, միութեանական կեանքի աստիճանական վերադարձով եւ Նաւասարդեան մարզախաղերու կազմակերպումով Հ.Մ.Ը.Մ.ական կեանքը վերստին կը ծաղկի շրջանին մէջ:

Հ.Մ.Ը.Մ.ը սոսկ մարզական կամ սկստական կազմակերպութիւն մը չէ: Հ.Մ.Ը.Մ.ը գոլտ ազգային կազմակերպութիւն է, որ կը ձգտի պատրաստել Ֆիզիքսայէս տոկոն, իմացական եւ հոգեկան բարձր արժանիքի տէր հայեր եւ տիպար քաղաքացիներ: Աւելին, Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկը կը դաւանի «Առողջ միտքը, առողջ մարմին մէջ» մարզական միջազգային կարգախօսը, միաժամանակ ան ոչ-Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկէն կը զատորոշուի իր ազգային յատուկ նկարագրով եւ Հայաստանին ու հայրենիքին հանդէպ իր նուիրական պարտաւորութեամբ: Ան կը հաւատայ Հայաստանին եւ Հայ Դատին ու միշտ պարտաստ է գինուորագրուելու եւ ծառայելու Հայաստանին եւ հայ ժողովուրդին:

Ուրեմն, Նաւասարդեան այս մարզախաղերն ալ սոսկ մարզական հանդիպումներ չեն, ոչ ալ յաղթել-պարտուելու համար կազմակերպուած խաղեր են: Նաւասարդեան մարզախաղերը հայ երիտասարդութեան համախմբման գեղեցիկ առիթներ են, ուր Հ.Մ.Ը.Մ.ական ոգին, ազգային շունչն ու միջնորդը տիրապետող են: Նաւասարդեան մարզախաղերու շնորհիւ մեր նորահաս մարզիկ-մարզիկուհիները քով-քովի գալով կը ծանօթանան իրարու, կը ճանչնան իրենց միութիւնը եւ կը կերտեն հաւաքական նկարագիր եւ ինքնութիւն, միշտ հաւատարիմ մնալով Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկի տասնաբանեանին:

Նաւասարդեան խաղերը միաժամանակ մարզական ոգիի եւ արդար խաղի ներկայացման առիթներ են, ուր Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկն ու մարզիկուհին ձեռք կը բերեն մարզկային ազնիւ արժանիքներ եւ բարոյական վեհ սկզբունքներ:

Անկասկած, Նաւասարդեան 30-րդ մարզախաղերու



ետին կը կանգնին բանակ մը կամաւորներ՝ ծրագրողներ, կազմակերպողներ, մարզիչներ, իրաւարարներ, մարզիկներ, պատասխանատուներ եւ ծնողներ: Եւ տակաւին, առանց մոռնալու մարզախաղերու յաջողութեան նպաստած մեր բարեբարները, բարեկամները եւ համակիրներու ստուար հատուածը:

Վարձքը կատար բոլորին:

Քանի մը շաբաթ վերջ Հայաստանի մէջ տեղի պիտի ունենան Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 11-րդ մարզախաղերը, ուր աշխարհասփիւռ Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկներ քով-քովի գալով պիտի մրցին նոյն դրօշին տակ: Խաղերու բացման թուականը՝ 22 Յուլիսը կը գուգադիպի «Հայ մարզիկի օր»ուն: Անցեալ տարի Մայիսին տեղի ունեցած միութեան պատմութեան մարզական առաջին առցանց համագումարին որոշուեցաւ 22 Յուլիսը՝ միութեան հիմնադիր Շաւարշ Քրիսեանի ծննդեան օրը հռչակել «Հայ մարզիկի օր», այնպէս ինչպէս 1982-ին համա-Հ.Մ.Ը.Մ.ական իմբաստական առաջին համագումարը Վարդանանցը հռչակեց իբրեւ «Հայ սկստուոր»: «Հայ մարզիկի օր»ը այսուհետեւ ամէն տարի պատշաճ կերպով պիտի նշուի եւ այս տարուան նշումը 11-րդ մարզախաղերու բացման գուգադիպութիւնը լաւագոյնս կ'արժեւորէ Օրուան խորհրդանիշը:

Հ.Մ.Ը.Մ. 104-ամեայ իր երթը կը շարունակէ բոլորին մասնակցութեամբ, ամէնուն ներդրումով եւ աջակցութեամբ: Փոխադարձաբար, Հ.Մ.Ը.Մ. անխտիր կը ծառայէ բոլորին, միշտ բարձրանալու եւ իր հետ իր հարազատ ժողովուրդի զաւակներն ալ դէպի ազգային բարձունքներ բարձրացնելու կամքով ու հաւատքով:

104-ամեայ այս երթին խթանող ուժը եղած է՝

- Հ.Մ.Ը.Մ.ի ազգային գաղափարաբանութիւնը,
- Միութեան ծառայելու կամաւոր փաղանգին ուխտը
- Եւ համակիրներու բարոյական եւ նիւթական նեցուկը: Խթանող այս ուժին պահպանութիւնը պիտի երաշխանորէ Հ.Մ.Ը.Մ.ի նորանոր ամեակներու եւ բարձունքներու նուաճումը:

Բարի երթ Նաւասարդեան խաղերուն, շնորհաւորութիւններ բոլոր մասնակիցներուն, որոնք այս խաղերը վերածեցին միութեանական մեծ տօնի, ազգային խանդավառութեան եւ միութեանական ոգեւորութեան եզակի առիթի:





ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ՝ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ՆՆՋԵՑԵԱԼՆԵՐՈՒ ԵՒ ԱՐՅԱԽԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Թղթակից ԸԱԼԷՊ

Հ.Մ.Ը.Մ. իր հիմնադրութեան տարեդարձին կը յիշէ եւ կը յարգէ միութեան ննջեցեալ հիմնադիրները, անդամները եւ անոնց յիշատակը վառ կը պահէ նոր սերունդին մօտ:

Հ.Մ.Ը.Մ.ի 104-ամեակին առիթով, հովանաւորութեամբ եւ նախագահութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Հայրապետական Նուիրակ Մակար Եպս. Ազգար-

եանի, նախաձեռնութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ Շրջանային Վարչութեան, Կիրակի, 27 Նոյեմբեր 2022-ի առաւօտուն, Հալէպի Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ, յաւարտ Ս. Պատարագի, ըստ աւանդութեան տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն՝ Հ.Մ.Ը.Մ.ի հին ու նոր ննջեցեալներու եւ Արցախի Հ.Մ.Ը.Մ.ական նահատակներու հոգիներուն խաղաղութեան համար: Արարողութեան ներկայ էին Հայրապետական Նուիրակը, Մանուկ Վրդ. Պրիխանեան, Ազգային Վարչութեան ան-

դամներ, պատկան մարմինի անդամներ եւ ներկայացուցիչ եղբ. Վրէժ Եագուպեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Մանուկ Քէօշկերեան, Հ.Մ.Ը.Մ.ի շքանշանակիր եղբայրներ, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ Շրջանային Վարչութիւնը, Շրջանային Սկսուտ-Խորհուրդն ու խմբապետութիւնը, Հալէպի մասնաճիւղին վարչութիւնը, ըՍկսուտ-Խորհուրդը, մասնաճիւղին խմբապետը, խմբապետական եւ աստիճանաւորական կազմեր, սկսուտներ եւ Արցախեան գոյապայքարին նահատակած հալէպահայ երեք Հ.Մ.Ը.Մ.ականներու ընտանեկան պարագաներ:

Հոգեհանգստեան պաշտօնէն ետք, Հալէպի մասնաճիւղի շեփորախումբին առաջնորդութեամբ ներկաները ուղղւեցան Ազգային Գերեզմանատան մէջ գտնուող Հ.Մ.Ը.Մ.ի դամբարան, ուր միութեան հոգեւոր հովիւ Մաշտոց Ա. Քհնյ. Արապաթեանի առաջնորդութեամբ աղօթք բարձրացուցին առ Աստուած, մոմավառութիւն կատարեցին եւ Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ ընտանիքին անունով ծաղկեպսակ զետեղեցին, ապա շեփորախումբին նուագակցութեամբ ներկաները երգեցին Հ.Մ.Ը.Մ.ի «Յառաջ նահատակ» քայլերգը: Այնուհետեւ





Հ.Մ.Ը.Մ. ՍՈՒՐԻԱ

տեւ, Արցախեան գոյապայքարի Հ.Մ.Ը.Մ.ական նահատակներու յուշակոթողին դիմաց ծաղիկ զետեղելով եւ մոմավառութիւն կատարելով ներկաները իրենց յարգանքի տուրքը մատուցեցին եղբայրներ Յարութ Բանոյեանի, Յակոբ Աստարճեանի եւ Մոսիկ Սեքլեմեանի յիշատակին:

Այս տխուր առիթով, ցաւակցութիւնները ընդունուեցան Հ.Մ.Ը.Մ.ի ընտանեկան պարտէզէն ներս, ներկայութեամբ՝ միութեան հոգեւոր հովիւին, պատկան մարմինի անդամներուն, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան եղբօր, Հ.Մ.Ը.Մ.ի շքանշանակիր եղբայրներուն, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան, Շրջանային Սկաուտ. Խորհուրդին եւ խմբապետութեան, Հայէպի մասնաճիւղի վարչութեան, Սկաուտ. Խորհուրդին, մասնաճիւղի խմբապետին, խմբապետական եւ աստիճանաւորական կազմերուն եւ սկաուտներուն:

Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան խօսքը փոխանցեց ատենապետ եղբ. Աւետիս Տէրվիչեան: Ան նշեց, թէ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 104-ամեակին կը յիշենք միութեան հիմնադիրները, միութեան շարքերէն ներս իրենց անսակարկ ծառայութիւնը մատուցած հին ու նոր ննջեցեալները եւ կը



խոնարհինք անոնց վաստակին առջեւ: Եղբ. Տէրվիչեան հպարտութեամբ յիշեց հայրենիքի ազատութեան համար նահատակուած Հ.Մ.Ը.Մ.ականները, յատկապէս Արցախեան հերոսամարտին իրենց արիւնը թափած հալէպահայ Հ.Մ.Ը.Մ.ական երեք նահատակները, որոնք ամէնէն թանկագինը՝ իրենց կեանքը նուիրաբերեցին հայրենիքի ազատութեան համար:

Եղբ. Աւետիս Տէրվիչեան Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան եւ Սուրիոյ շրջանին անունով ցաւակցական խօսք ուղղեց Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին, ինչպէս նաեւ Արցախեան գոյամարտի հալէպահայ Հ.Մ.Ը.Մ.ական նա-

հատակներու ընտանիքներուն:

Այնուհետեւ իր սրտի խօսքը փոխանցեց միութեան հոգեւոր հովիւ Մաշտոց Ա. Քհնյ. Արապաթլեան: Ան յայտնեց, թէ Հ.Մ.Ը.Մ.ը եղբայրական ոգիով կը շարունակէ սերունդէ սերունդ փոխանցել մեր ազգային արժէքները՝ պահպանելու համար միութեան առաքելութիւնը:

Քահանայ Հայրը աղօթք բարձրացընելով առ Աստուած, Ամենակալէն հայցեց, որ Հ.Մ.Ը.Մ.ի ննջեցեալներուն եւ նահատակներուն հոգիները խաղաղութեան մէջ պահէ եւ երկինքի արքայութեան արժանացնէ: Ապա, «Պահպանիչ»ով փակեց հաւաքը:

ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ

Նովանաւորութեամբ Սուրիոյ Շրջանային Սկաուտ. Խորհուրդին, Կիրակի, 24 Սեպտեմբեր 2022-ին, տեղի



ունեցաւ խմբապետական աստիճանի տուչութիւն: Շրջանային խմբապետ եղբ. Բաֆֆի Սիւլահեանի եւ Շրջանային խմբապետուհի քոյր Նաթալի Թաթոսեանի ձեռամբ խմբապետի աստիճան ստացան քոյրեր Ժպիտ Խաչերեան, Սարին Էմմանեան, Մարիա Չաղլասեան, եղբայրներ Յակոբ Սանճեան եւ Գէորգ Եագուպեան:

Տեղի ունեցաւ նաեւ միաւորներու փոխանցման արարողութիւն, ինչպէս նաեւ՝ Առաջնորդի եւ Փոխ Առաջնորդի աստիճաններու տուչութիւն:





ՄԱՍՆԱԾԻՂԷ ՄԱՍՆԱԾԻՂ



ՄԿԱՈՒՏԱԿԱՆ Ա. ԿԱՐԳԻ ԵՐԿՕՐԵԱՅ ԴՊՐՈՑ-ԲԱՆԱԿՈՒՄ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԷՋ...

**Թղթակիցներ
ՂԱՄԱՍԿՈՍ, ԳԱՄԻՇԼԻ**

Նովանաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ Շրջանային Սկաուտ. Խորհուրդին, 6 եւ 7 Հոկտեմբեր 2022-ին, Դամասկոսի մասնաճիւղի Սկաուտ. Խորհուրդը Սէյտնայայի Ս. Եղիա վանքին մէջ կազմակերպեց Ա. Կարգի դպրոց-բանակում, մասնակցութեամբ 16 քոյր-եղբայրներու:

Բանակումին յայտագիրը ընդգրկեց սկաուտական եւ դաստիարակչական ծրագիր, որուն դասախօսներն էին Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ Շրջանային Սկաուտ. Խորհուրդի ատենապետ քոյր Ալին Քիւրճիւմլեան, Սուրբոյ Շրջանային խմբապետ եղբ. Բաֆֆի Սիւլահեան եւ խորհրդական քոյր Փէկի Պալմանուկեան:

Աւարտին, քոյր Դալար Հարենցեան Ա.Կարգի քննութեան յաջողելէ ետք ստացաւ փոխ խմբապետի աստիճան:

**... ԵՒ ԵՌՕՐԵԱՅ ՍԵՄԻՆԱՐ
ԳԱՄԻՇԼԻԻ ՄԷՋ**

Իր կարգին, Հ.Մ.Ը.Մ.ի Գամիշլիի մասնաճիւղին Սկաուտ. Խորհուրդը կազմակերպեց Ա. կարգի եռօրեայ սեմինար մը, որ տեղի ունեցաւ 7-10 Հոկտեմբեր 2022-ին, Համազգայինի «Աւետիս Ահարոնեան» Մշակութային Կեդրոնին մէջ, մասնակցութեամբ 8 քոյր- եղբայրներու:

Սեմինարին բացումը կատարուեցաւ դրօշակի արարողութեամբ, ապա մասնաճիւղի Սկաուտ. Խորհուրդի ատենապետ եղբ. Մանուկ Դաւիթեան խօսք առնելով բարի գալուստ եւ յաջողութիւն մաղթեց մասնակիցներուն:

Սեմինարին եռօրեայ յայտագիրը ընդգրկեց դասախօսութիւններ եւ սկաուտական գիտելիքներու զործնական կիրարկում:

ՄԿԱՈՒՏԱԿԱՆ ՀԱՒԱՔՆԵՐՈՎ Հ.Մ.Ը.Մ.Ի 104-ԱՄԵԱԿԻ ՆՇՈՒՄ ԳԱՄԻՇԼԻԻ ԵՒ ՔԵՍԱՊԻ ՄԷՋ

**Թղթակիցներ
ՔԵՍԱՊ, ԳԱՄԻՇԼԻ**

Շաբաթ, 12 Նոյեմբեր 2022-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Գամիշլիի մասնաճիւղի սկաուտները եւ աստիճանաւորական կազմը Համազգայինի «Աւետիս Ահարոնեան» Մշա-





Հ.Մ.Ը.Մ. ՍՈՒՐԻԱ



կուլթային կեդրոնին մէջ հաւաքով մը նշեցին Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութեան 104-ամեակը:

...ՆԱԵՒ ՔԵՍԱՊԻ ՄԷՋ

Շաբաթ մը ետք, Շաբաթ, 19 Նոյեմբեր 2022-ին, այս անգամ Հ.Մ.Ը.Մ-ի Քեսապի մասնաճիւղի Սկաուտ-խորհուրդին եւ խմբապետական կազմին կազմակերպութեամբ, տեղի ունեցաւ սկաուտական յատուկ գործունէութիւն՝ նուիրուած Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութեան 104-ամեակին:

Գործունէութիւնը ընդգրկեց զարգացման մրցում՝ պատրաստուած Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Սկաուտ-խորհուրդի հրատարակչական յանձնախումբին կողմէ եւ խաղեր:



Հ.Մ.Ը.Մ-Ի ՍՈՒՐԻՈՅ ՃԵՋԻՐԷԻ ՇՐՋԱՆԻ «ԱՂԱԼՆՕ» ՏԱՐԵԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ

Թղթակից ՉԱՄՐՇԼԻ

Հ.Մ.Ը.Մ-ի Գամիշլիի մասնաճիւղի վարչութեան եւ Սկաուտական Խորհուրդին կազմակերպութեամբ, 15-19 Սեպտեմբեր 2022-ին, տեղի ունեցաւ մասնաճիւղին տարեկան բանակումը, Գամիշլիի մօտակայ Ս. Աստուածածին ուխտավայրին մէջ: Բանակումը կրեց «Աղաւնօ» անունը, իբրեւ խորհրդանիշ արդար պայքարի, ի խնդիր արդար հատուցման: Բանակումին մասնակցեցան Հ.Մ.Ը.Մ-ի Գամիշլիի եւ Տէրիքի սկաուտները:

Բանակումի աւարտին, Կիրակի, 18 Սեպտեմբեր 2022-ին, երեկոյեան ժամը 6-ին տեղի ունեցաւ խարուկահանդէս, հովանաւորութեամբ Ճեզիրէի Առաջնորդական Փոխանորդ Լեւոն Վրդ. Եղիայեանի, ներկայութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ միաբաններէն Եսայի Աբղ. Էօրտէքեանի, Պսակ Քհնյ.

Պէրպէրեանի, պատկան մարմինի, Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Միհրան Տիգրանեանի, ազգային եւ միութենական մարմիններու ներկայացուցիչներու եւ սկաուտներու ծնողներու:

Բացումը կատարուեցաւ մէկ վայրկեան յոտնկայ լուրթեամբ՝ յարգելով համար յիշատակը Հայաստանի, Արցախի եւ Սուրիոյ նահատակներուն: Ապա հնչեցին Սուրիոյ եւ Հայաստանի քայլերգները:

Բացման խօսքով հանդէս եկաւ բանակումի պատասխանատու խմբապետուհի քոյր Նանար Սարգիսեան, որ նախ բարի գալուստ մաղթեց ներկաներուն, ապա անդրադարձաւ սկաուտական կեանքին մէջ բանակումի անհրաժեշտութեան: Բանակումին «Աղաւնօ» անունը կը հաստատէ հայուն յարատեւ պայքարը Սփիւռքի տարածքին, ընդդէմ Թուրքիոյ եւ Ազրպէյճանի ապօրինի ոտնձգութիւններուն, նշեց քոյրը իր խօսքին մէջ:



ՄԱՍՆԱԾԻՂԷ ՄԱՍՆԱԾԻՂ



Գեղարուեստական յայտագիրով յաջորդաբար ելոյթ ունեցան սկաուտները, ներկայացնելով Արցախին եւ Հայաստանին նուիրուած երգեր, ասմունքներ եւ նշանախօսքներ: Սկաուտները կազմեցին նաեւ գեղեցիկ բուրգեր՝ խելով ներկաներուն ծափողոյնները:

Մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Անդրանիկ Սարգիսեան ընթերցեց Հ.Մ.Ը.Մ-ի Սուրբոյ Շրջանային Վարչութեան ուղերձը, որ բարձրօրէն կը գնահատէր բանակումին մասնակցողներուն եւ կազմակերպողներուն աշխատանքը, մաղթելով նորանոր վերելք եւ յաջողութիւն իրենց յառաջիկայ ծրագիրներուն:

Ապա, Սկաուտ. Խորհուրդի ատենապետ եղբ. Մանուկ Դաւիթեանի եւ բանակումի խմբապետուհիին ներկայութեամբ տեղի ունեցաւ գայլիկներու արի-արենուշական շարքեր փոխանցումի արարողութիւն եւ «Նորագիր» կարգի վկայականաց բաշխում:

Աւարտին, Լեւոն Վրդ. Եղիայեան իր խօսքին մէջ գնահատեց բանակումին ընդհանուր աշխատանքը, դրուատեց գաղութին մէջ Հ.Մ.Ը.Մ-ի գործունէութիւնը՝ ի խնդիր ազգային եւ հայեցի դաստիարակութեան: «Աղաւնօ» բանակումը համայն աշխարհին տրուած ապացոյցն է, որ մենք կա՛նք եւ պի՛տ

տի՛ մնանք հայրենիքի կողքին, Սփիւռք եւ Հայաստան իբրեւ մէկ ամբողջութիւն, մէկ բուռնցք, շարունակելու մեր պահանջատիրական արդար երթը, հաստատեց Լեւոն Վարդապետ:

Այնուհետեւ, «Պահպանիչ»ով յայտագիրը հասաւ աւարտին:





ՄԵՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ

ԽՄԲԱՊԵՏՍ՝ ԵՂԲ. ԺԻՐԱՅՐ ՍԱՐԳՍԻՍԵԱՆ

**Յարուք Չեքիճեան
ՊԵՅՐՈՒԹ**

Վաթսուն տարիներու մեր սերտ կապը սկսաւ 1962-ին, երբ Հ.Մ.Ը.Մ-ի երկրորդ սկաուտ խմբապետս եղաւ ան, մինչեւ իր վերջին երեկտրոնային նամակը, 21 Ապրիլ 2022-ին, Ս. Զատիկուան առիթով:

Պէյրութի էլքէֆիէ շրջանի «Ազատամարտ» ակումբն ու դիմացի Ազգային Գէորգ Զաթարպաչեան վարժարանին բակին էին սկաուտական մեր հաւաքավայրերը, իսկ եղբ. Ժիրայրենց առաջին բնակարանը՝ ակումբէն դէպի զառիվար, տակաւին կանգուն, երրորդ շէնքին մէջ:

Առաջին վայրկեանէն իսկ համակրելի ղեկավարի մը բոլոր յատկութիւնները կը մարմնաւորէր ան. խստապահանջ՝ առանց խստութեան, պարզ ու համեստ, սակաւախօս, միշտ ժպտուն եւ սրամիտ, սակայն բնականօրէն յարգանք պար-



Մեր վերջին նկարը միասին. ձախին՝ եղբ. Ժիրայր Սարգիսեան Յուլիս 2018-ին, Կիւրթի. Քըրք Գրիգորեանի արձանին մօտ, Հ.Մ.Ը.Մ-ի 100-ամեակի տօնակատարութիւններուն առիթով:

տաղրող: Խնդումներս եւ դրական, փոքր մանրամասնութիւններ նկատող, երբե՛ք հեզնական, ամէնէն բարդ ու կնճռոտ հարցի մը պարագային իսկ, կամ խիստ բարկացած մէկու մը պոռթկումին, բողոքին՝ ժպիտով, կատակով մը, կամ անցեալի զաւեշտալի դէպքէ մը, պատմուածքէ մը բոլորիս ծանօթ բառանշան մը կամ անուն մը տալով կը հանդարտեցնէր ներկաները՝ դրական մթնոլորտ ստեղծելով:

Իսկական ղեկավար մըն էր ան: Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտական դաւանանքը եղած էր իր կեանքի ուղին:



«Ազատամարտ» ակումբի տանիքի մեր հաւաքավայրը, Ս. Յակոբ եկեղեցւոյ դիմաց, դրօշակի արարողութիւն: Զախին առանձին եղբ. Լեւոն Տէր Սարգիսեան:

ԳՈՅԺ

Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութիւնը կը գուժէ Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ, բազմավաստակ Հ.Մ.Ը.Մ.ական եւ «Արժանեաց» շքանշանակիր՝

ԵՂԲ. ԺԻՐԱՅՐ ՍԱՐԳՍԻՍԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Կիրակի, 21 Օգոստոս 2022-ին, Սան Ֆրանսիսքօ, Արեւմտեան Միացեալ Նահանգներ:

ԳՈՅԺ

Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութիւնը եւ Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքը կը գուժեն մահը Շրջանային Վարչութեան նախկին անդամ, Նաւասարդեան 17-րդ Մարզախաղերու պատուոյ նախագահ եւ 2015-ի «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»՝

ԵՂԲ. ԺԻՐԱՅՐ ՍԱՐԳՍԻՍԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Կիրակի, 21 Օգոստոս 2022-ին, Սան Ֆրանսիսքօ:





Սկսած սկսած մեր հաւաքներուն անպայման նորութիւն մը կը բերէր եւ կը քաջալերէր, որ մենք ալ նորութիւններ բերէինք՝ սկսած սկսած նոր գիտելիքներ, նոր խաղեր, նոր կանչեր եւ այլն: Յատկապէս մեր խարուկահանգէսներուն գըլխաւոր խորհուրդը նաեւ, գլխաւոր գաւեշտալի ներկայացումին գաղափարը ինք կը յղանար եւ այդ նորութիւններուն շնորհիւ, մեր խարուկահանգէսները մեծ յաջողութիւն կը գըտնէին, այնքան, որ հակառակ մեր մասնաճիւղերուն միջեւ մնայուն մրցակցութեան՝ Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիւղին խնդրանքով, Պուրճ Համուտի մէջ ալ կրկնեցինք այդ յայտագիրներէն մէկը:

Հօրս նման ոսկերիչ էր ան: Պատանեկութեանս, արձակուրդներուն կամ Շաբաթ օրերը, երբ Պէյրուսի ոսկերիչներու շուկայի հին շէնքին մէջ հօրս գործատեղին կ'երթայի, անպայման կ'այցելէի նոյն շէնքին մէջ եղբ. Ժիրայրին գործատեղին, ուր սեղան մըն ալ ունէր նաեւ, այն ատեն երիտասարդ աթլէթ, գունդ նետելու Լիբանանի ախոյեան, հանգուցեալ եղբ. Վարուժան Գէորգեանը: Յիշատակելի են այդ այցելութիւնները, քանի որ այնտեղ Հ.Մ.Ը.Մ.ի կեանքէն հաճելի ու գուրաւար, նաեւ ուսանելի դրուագներ կը պատմէին անոնք:

1964-ին մասնակցեցանք արաբական վեցերորդ սկսած սկսած կանաչ գունդին, Եգիպտոսի Աղեքսանդրիա քաղաքին մօտակայ Ապուքրի ծովեզերեայ բանակավայրին մէջ: Լիբանանեան պատուիրակութեան մէջ 12 Հ.Մ.Ը.Մ.ական սկսած սկսած էինք, եւ եղբ. Ժիրայր Լիբանանի պատուիրակութեան խումբապետական կազմին մէջն էր: Իր կարգադրութեամբ, ազատ օրերուն, լիբանանեան խումբէն բաժնուերով, այցելեցինք Աղեքսանդրիոյ եւ Գահիրէի մեր ազգային կառույցները եւ սկսած սկսած, գիշերելով նաեւ «Յուսաբեր» օրաթերթի խումբազրատան մէջ:

Անմոռանալի էր 29 Օգոստոս 1965-ին Սաննին լեռան գագաթը մագլցելու մէջ գիշերուան բանակումը՝ ինք եւ երեք աստիճանաւորներս: Մէկը միւսէն հաճելի բանակումներ եւ արշաւներ կազմակերպած էր:

1970-ական տարիներու սկիզբը, երկուքս գործով ճամբոր-



Եգիպտոսի բանակումին հնավայր այցելութիւն մը Հ.Մ.Ը.Մ.ի Աղեքսանդրիոյ խմբապետին եւ 3 աստիճանաւորներու հետ: Չախէն երրորդը ինքս, չորրորդը՝ եղբ. Ժիրայր:



Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամներ, 1999, Երևան: Աջէն երրորդը՝ եղբ. Ժիրայր Սարգիսեան, չորրորդը՝ ինքս:

դեցինք, ինք Ափրիկէ, ես Մ. Նահանգներ, ապա՝ Յորդանան: Պէյրուս կարճ այցելութիւններէս մէկուն, կարծես ժամադրուած ըլլայինք, ինքն ալ կարճ այցելութեամբ Պէյրուս եկած էր եւ այլ այցելութիւններու կողքին, մեր տունն ալ եկաւ իմ մասին հարցնելու, երբ հագիւ ժամ մը առաջ հասած էի: Այդպէս միշտ կը հետաքրքրուէր իր սկսած սկսած:

Մեր յարաբերութիւնը կրկին կենդանացաւ, երբ միասնաբար պաշտօնավարեցինք Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան մէջ, 1999-2003: Տասնամեակներ Մ. Նահանգներ կեցութիւնը ոչ մէկ ձեւով ազդած էր իր ազգային-միութենական եւ մարդկային արժեքափերուն վրայ, ան կը մնար բոլորիս ճանչցած, սիրած ու յարգած նոյն օրինակելի տիպարը:

Միասնաբար ծրագրեցինք Յուլիս 2002-ի համա-Հ.Մ.Ը.Մ.ական Երդ բանակումը եւ ներկայ գտնուեցանք ու հետեւեցանք բանակումին, որ առաջին անգամ ըլլալով տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Բիւրականի սեփական բանակավայրին մէջ, որուն ապահովման, շինարարութեան եւ յարգարումին համար իր բարոյական եւ նիւթական կարեւոր ներդրումը ունեցաւ ան: Եղբ. Ժիրայր նաեւ Հայաստանի մեր կազմակերպութեան՝ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի հիմնադրութեան եւ զարգացումին մէջ իր նիւթական եւ բարոյական կարեւոր ներդրումը ունեցաւ:

Տարիներու ընթացքին համեստօրէն, լուռ եւ անաղմուկ, ան մեծագումար յատկացումներ կատարեց Հ.Մ.Ը.Մ.ի գանազան աշխատանքներուն, ինչպէս նաեւ ազգային այլեւայլ նպատակներու եւ հաստատութիւններու:

Յուլիս 2018-ին, Լիբանան իր վերջին այցելութեան վերջին օրը միասին անցուցինք: Նախ այցելեցինք իրենց ընտանեկան դամբարանը, որուն անհրաժեշտ նորոգութիւնները թելադրեց, ապա Հայաչնի մեր սիրած թաղերէն անցնելով՝ հասանք Էշրէֆիի իրենց առաջին բնակարանին շէնքը, եւ վերջապէս երկուքս սիրելի մեր երկրորդ տունը՝ Հ.Յ.Դ. «Ազատամարտ» սկսած սկսած: Գրեթէ ժամ մը ափսոսել մնացինք՝ իրարու բազմաթիւ յուշեր թարմացնելով եւ պատմելով: Օրը աւարտեցինք գիւղական ճաշարանի մը մէջ, ուր կարճ ժամանակ մը





ՄԵՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ



մեզի միացան մեր օրերու Կեղրոնական Վարչութեան երկու անդամներ: Երեկոյան, երբ պանդոկ հասցուցի, գոհունակութեամբ ըսաւ, որ Լիբանան իր այցելութեան ամէնէն ուրախ օրը անցուցած էր, նոյնը կրկնելով նաեւ օրեր ետք Հայաստանի մէջ:

Մեր վերջին հաւաք-հանդիպումը տեղի ունե-

Եղբ. Ժիրայր 1962-ին, «Ազատամարտ» ակումբին ստղել:

ցաւ Հայաստանի մէջ, Հ.Մ.Ը.Մ-ի 100-ամեակի տօնակատարութիւններուն առիթով: Շուրջ շաբաթ մը միասին անցուցինք: Յատուկ փափաք ունէր Կիւմրի այցելելու, որովհետեւ Հայաստանի երկրորդ քաղաքին եւ անոր տեսարժան վայրերուն մասին նախօրոք զրուցած էինք, եւ արդէն Կիւմրին յայտագիրին մէջ էր:

Իբրեւ սփիւռքահայ երկրորդ սերունդի անդամ, եղբ. Ժիրայր մեծ ներդրում ունեցաւ Լիբանանի, Մ. Նահանգներու եւ Հայաստանի Հ.Մ.Ը.Մ-ի կազմաւորման եւ զարգացման, ի մասնաւորի՝ սկառուական բնագաւառին մէջ: Եղբ. Ժիրայր Սարգիսեան եղաւ «Միշտ պատրաստ»-ի վաւերական, իսկական եւ օրինակելի Հ.Մ.Ը.Մ-ականը եւ յանձնառու, ազգանուէր հայու մարմնացումը:


Վա՛րձքդ կատար եղբ. Ժիրայր:

ՏԻՊԱՐ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆԻ ՄԸ ԿՈՐՈՒՍՏԸ

(ԵՂԲ. ԺԻՐԱՅՐ ՍԱՐԳԻՍԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ)

Մարտ Բեչիշեան ԵՐԵՒԱՆ

Եղբ. Ժիրայր Սարգիսեանի մահուան անհաւատալի գոյժը ստանալէ ետք, բազմիցս փորձեցի նստիլ համակարգիչիս առաջ, գրելու երախտանքի քանի մը խօսք մեր շատ սիրելի եղբոր մասին, սակայն յուզմունքս միշտ արգելք հանդիսացաւ ինձի: **Չէի** հաւատար, որ Հ.Մ.Ը.Մ-ի տիտաններէն մէկը ոչ եւս է: Այո՛, չէի հաւատար, որովհետեւ դեռ 22 Յուլիս 2022-ին, համա-Հ.Մ.Ը.Մ-ական 11-րդ մարզախաղերու բացման հանդիսութեան աւարտին գրկախառնուեցանք, իրարու որպիսութիւն հարցուցինք, քիչ մը զրուցեցինք եւ դարձաւ տեսնուելու խոստումով բաժնուեցանք: Այդ եղաւ մեր վերջին հանդիպումը եւ ահա լսեցինք անհաւատալին:



րուն, իսկ իր գիտելիքներով եւ լաւ դեկավարի յատկութիւններով, յաջորդաբար իրեն վստահուած էին սկառու խմբապետէն մինչեւ Կեղրոնական Վարչութեան փոխատենապետի դժուարին պարտականութիւնները, զորս կատարած էր ամենայն բժախնդրութեամբ եւ յաջողութեամբ: Դեռ չեմ խօսիր իր մարզական կարողութիւններուն մասին, յատկապէս պասքեթպոլի մարզաճիւղէն ներս:

Եղբ. Ժիրայր միութենականէն անկախ յաջողած էր նաեւ իր կեանքի ասպարէզին մէջ եւ իր յաջողութիւններուն բաժնեկից դարձուցած էր անձնական եւ միութենական լայն շրջապատը: Ան իր հայրենասիր-

Եղբ. Ժիրայր Սարգիսեանը Հ.Մ.Ը.Մ-ի միջոցով շատոնց ճանչցած եմ: Յարգանք բուրոյղ անձնաւորութիւն մը, որ իր համեստութեամբ, համբերատարութեամբ, ժպիտով ու մանաւանդ քաջալերական մօտեցումով յարգանքը վայելած է Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքին, յատկապէս Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանին եւ իր լայն շրջապատին: Ուրախ եմ, որ բազմաթիւ առիթներով արժանացած եմ եղբոր խրախուսական խօսքերուն, որոնք մեծապէս ոգեւորած եւ աշխուժացուցած են միութենական գործունէութիւնս:

Եղբ. Ժիրայրը իսկական տիպար Հ.Մ.Ը.Մ-ական մըն էր, որ իր ջանասիրութեամբ, արդար մօտեցումով եւ ժրաջան աշխատանքով արժանացած էր Հ.Մ.Ը.Մ-ի բոլոր շքանշաննե-

րութեամբ բարի օրինակ էր բոլորիս: Սիրող ամուսին եւ գուրգուրացող հայր էր իր ընտանիքին համար, իսկ իր մօտիկներուն՝ հարազատ բարեկամ: Ան նաեւ Դաշնակցականի օրինակելի տիպար էր:

Եղբ. Ժիրայրի մահով Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքը եւ յատկապէս Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանը կորսնցուց նուիրեալ Հ.Մ.Ը.Մ-ական մը, իսկական դեկավար մը եւ ազգանուէր հայրերի մը: Եղբ. Ժիրայրը հրաժեշտ տուաւ այս աշխարհին, ոչ միայն լիուրի կատարելով իր ազգային պարտականութիւնները, այլեւ՝ իր ետին ձգելով արժանավայել գործունէութեան հսկայ ժառանգ մը, որ լաւ օրինակ պիտի ծառայէ ապագայ սերունդներուն համար:

Հողը թեթեւ գայ յոգնած աճիւններուդ վրայ, սիրելի՛ եղբայր: Դուն բառին բուն իմաստով ազգային թաղումի արժանի էիր:





ՄԵՐ ԺԻՐԱՅՐՆ ԱՎ ԱՆԴԱՐՁ ԳՆԱՅ

Սերոբ Սահակեան ԵՐՈՒՍԱՂԵՄ

ՀՄԼՄ-ի նախկին կեդրոնական վարչութիւններու ամէնէն պատկառելի դէմքերէն մէկն ալ հեռացաւ մեզմէ:

ՀՄԼՄ-ի պատմութեան յիշարժան դէմքերէն մէկն ալ Ֆիզիքապէս շիջեցաւ:

Հաւանաբար ձեզմէ շատերը առիթը ունեցած են ճանչնալու եղբայր ժիրայրը:

Հաւանաբար ձեզմէ շատերը, յատկապէս Արեւմտեան Մ. Նահանգներ, անպայման տեղ մը, ՀՄԼՄ-ի վերաբերող ձեռնարկի մը, բարեսիրական ճաշկերոյթի մը, համագգային հաւաքի մը, անմիջական ձեր կողքին զգացած էք այս մեծ մարդուն ներկայութիւնը:

Իսկ եթէ ոչ իր, անպայման իր եղբայրներուն, որոնցմէ ամէն մէկը, եթէ ոչ ժիրայրէն տարբեր, ընտիր հայրդի մըն էր իր տեղին:

Ես եղբայր ժիրայրը ճանչնալու առիթը ունեցայ քանի մը առիթով, նոյնիսկ անգամ մըն ալ Երուսաղէմի մէջ, ուր չեմ գիտեր ի՞նչ առիթով եկած էր, բայց անպայման զիս փնտռած ու գտած էր, ըսելով թէ՛ «կարելին չէ Երուսաղէմ այցելել եւ առանց եղբայր Սերոբը տեսնելու վերադառնալ»:

Գեղեցիկ հանդիպում մըն էր, զոր ունեցանք Սուրբ հողի վրայ, իր երկու եղբայրներուն հետ միասին:

Այնուհետեւ, իմ հոգիս մէջ տեղ գտած եղբայր ժիրայրը ՀՄԼՄ-ի Պատգամաւորական Ժողովներու եղբայր ժիրայրն էր:

Այն ազնուական մարդը, որմէ աչքդ չէիր կրնար հեռացընել:

Այդ, ՀՄԼՄ-ականի եղբայր եղբոր եղբայրութեան մարմնացումը:

Այդ հպարտ, բայց տեղին խոհեմութեան տիպար հայրդին:

Մէկ խօսքով թէեւ քիչ մը յոգնած, այնուհետեւ ժիրայրը:

Ժիրայր, որ կարծես երիտասարդներու երիտասարդն էր, երբ ժողովի սեղանին վրայ էր ՀՄԼՄ-ի յառաջնութեամբ:

Ան բոլորէն աւելի կենսայորդ էր, երբ սեղանի վրայ էր ՀՄԼՄ-ի տագնապներու բալասանին

փնտռումը:

Ան այն ՀՄԼՄ-ականն էր, որ տառացի սեփականութիւնն էր ՀՄԼՄ-ին, Ֆիզիքապէս, բարոյապէս եւ բոլոր կարողականութեամբ:

Ու պատահական չէր, որ հանգուցեալ եղբայր Գառնիկին նայուածքները պահ մը կը կեդրոնանային եղբայր ժիրայրին վրայ, երբ հարցերը կը հասնէին ամէնէն թէժ օրակարգին՝ «ՄԻՇՏ ՆԵՂ ՏՆՏԵՍԱԿԱՆԻՆ»:

Ժիրայրին թէ մատի վրայ հաշուող ժիրայրներուն մօտ մերժում կամ տատամսում չկար նման հարցերու պարագային:

ՊԱՐԶԱՊԷՍ ԺՈՂՈՎԷՆ ՈՐՈՇՈՒՄ ՎԵՐՑՈՒՐ, ՊԱՏԱՍԽԱՆԸ ՏԵՂԻՆ:

Վերջապէս, եղբայր ժիրայրն էր, որ շատ տեղեր անաղմուկ ստանձնած էր պատուոյ նախագահութիւններ, մինչեւ Նաւասարդեանի, ուր իշխանավայել պարտքը կատարելով, բարձրացած ու բարձրացուցած էր ՀՄԼՄ-ը ըստ պատշաճի:

Շատ կայ խօսելիք, բայց շատ պիտի չխօսիմ եղբայր ժիրայրի մասին:

Հաւանաբար շատեր շատ ըսելիքներ պիտի ունենան ԺիրԱՅՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ անունով ՀՄԼՄ-ի այս մեծ կորուստին մասին:


Պարզապէս ըսեմ, որ ՀՄԼՄ-ը ժիրայրներով հարուստ է եւ առաւել հարստացած:

Ու եղբայր ժիրայրի նմաններուն ձգած աւանդին ոգեշնչւածով թէ ոգեկոչումով է, որ ՀՄԼՄ-ը պիտի նուաճէ նորանոր բարձունքներ:

Եղբայր ժիրայր, հողը թեթեւ գայ վրադ:

Բարեկներս չմոռնաս Գառնիկին, Միհրանին, Պատրիկին, Արմանտոյին, միւսին, միւսին:

ՅՏԵՍՈՒԹԻՒՆ:





ՄԵՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ

ԵՂԲԱՅՐ ԽԱԺԱԿ ՏԻՂՊԷՐԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

**Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ Շրջ. Վարչութիւն
ՅԱԼԷՊ**

Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ ընտանիքը 27 Հոկտեմբեր 2022-ին կորսնցուց իր վաստակաշատ եղբայրներէն, միութեան «Ծառայութեան» շքանշանակիր եւ երէց եղբայր **Խաժակ Տիղպէրեանը**:

Եղբ. **Խաժակ** ծնած էր Հալէպ, 1953-ին, միութենական ազգաշունչ ընտանիքի մը մէջ: Նախնական կրթութիւնը ստացած է Ազգ. Զաւարեան վարժարանը, որմէ ետք ուղղուած է

գործի ասպարէզ: Դպրոցէն հեռանալը զինք հեռու չէ պահած ինքնագարգացման աշխատանքէն, Հ.Մ.Ը.Մ.ը ունենալով իբրեւ երկրորդ դպրոց: 1961-ին, իբրեւ գայլիկ, ան մուտք գործած է Հ.Մ.Ը.Մ.ի շարքերը: 1963-ին փոխանցուած է սկստական շարքեր: 1968-էն սկսեալ եղբ. **Խաժակ** մասնակցած է սկստական բանակումներու: 1988-ին ան համարձակութիւնը ունեցած է Հալէպէն մինչեւ Հ.Մ.Ը.Մ.ի Քեսապի բանակավայրը երթալու հեծանիւով: 1990-էն սկսեալ, ան երկար տարիներ եղած է Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի մասնաճիւղի Սկստ. Խորհուրդի անդամ եւ վարած է ատենադպիրի, ապա՝ ատենապետի պաշտօններ:



1995-1996, եղբ. **Խաժակ** մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ Շրջանային Սկստ. Խորհուրդին եւ վարած է ատենապետի պաշտօն: Երկու շրջան եղած է Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ Շրջանային Վարչութեան անդամ:

Եղբ. **Խաժակ** երկար տարիներ եղած է միութեան «Մարզիկ» պաշտօնաթերթի Սուրբոյ թղթակից: 2018-ին ան նշանակուած է Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակի Սուրբոյ շրջանի յանձնախումբի անդամ:

Հ.Մ.Ը.Մ.ի 9-րդ Պատգամաւորական Ընդհանուր ժողովին, 2007-ին, Հայաստան, ան մասնակցած է իբրեւ Սուրբոյ շրջանէն ընտրուած պատգամաւոր: Իբրեւ ներկայացուցիչ ան մասնակցած է նաեւ ուղեկից միութիւններու Ա. խորհրդաժողովին, Լիբանանի մէջ, 2004-ին:

Եղբ. **Խաժակ** երկար տարիներ մասնակցած է Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ Շրջանային Ներկայացուցչական Ժողովներու, յաճախ ստանձնելով ատենադպիրի պաշտօն:

2013-ին, Հ.Մ.Ը.Մ.ի 95-ամեակի առիթով, եւ առ ի գնահատանք իր երկար տարիներու ծառայութեան եւ անխոնջ աշխատանքին, եղբ. **Խաժակ** Սուրբոյ Շրջանային Վարչութեան կողմէ կը պարգևատրուի «Ծառայութեան» շքանշանով:

2016-ին, «Մարզիկ» պաշտօնաթերթի 35-ամեակին առիթով, իբրեւ Սուրբոյ թղթակից, ան պարգևատրուած է թերթին խմբագրութեան որոշումով եւ Սուրբոյ Շրջանային Վարչութեան ձեռամբ:

Հ.Մ.Ը.Մ.ի ծառայութեան կողքին, եղբ. **Խաժակ** անդամակցած է Բերիոյ Թեմի ծառայութեան խորհուրդին, իբրեւ երիտասարդներու ներկայացուցիչ: 1999-էն ի վեր ան անդամ էր Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ թաղականութեան:

Բազմավաստակ եղբոր յիշատակը միշտ վառ պիտի մնայ Հ.Մ.Ը.Մ.ականներու սրտերուն մէջ:

ՏԻՊԱՐ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆԻ ՄԸ ԱՆԺԱՄԱՆԱԿ ԿՈՐՈՒՍՏԸ

**Արմէն Քէօշկերեան
ՀԱԼԷՊ**

Եղբ. **Խաժակ** Տիղպէրեան Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան շարքերէն ներս հաւատարմօրէն ծառայելով եղած է կատարեալ Հ.Մ.Ը.Մ.ական իր վարք ու բարքով եւ արդիւնաւէտ գործունէութեամբ: Ան յաջողեցաւ իր անունը ոսկի տառերով արձանագրել Միութեան պատմութեան մէջ:

Եղբ. **Խաժակ** եղած է խոհեմ, փափկանկատ, ներողամիտ, բարիք սփռող, ընկերասէր եւ տիպար Հ.Մ.Ը.Մ.ական մը: Ան իր յարգալի կեցուածքով հայր իսկական կերպարը կը մարմնաւորէր:

Իբրեւ թաղական, եղբ. **Խաժակ** նշանակալի ներդրում ունեցած է Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ աշխատանքներուն: Իբրեւ ատենադպիր, իր գործունէութեան ընթացքին ան ցուցաբերած է բժախնորհի մօտեցում որոշումները ճշգրտօրէն բանաձեւելով եւ փոխանցելով, ինչպէս նաեւ ժողովական կեանքի արդիւնաւէտ գործունէութեամբ:

Եղբ. **Խաժակ**ին մասը մեծ կորուստ է բոլորիս համար: Հ.Մ.Ը.Մ.ականներու մտքերուն մէջ դրոշմուած կը մնան անոր քաջալերական խօսքերը եւ Հ.Մ.Ը.Մ.ականի արի կեցուածքը:

Յարգանք վաստակիդ, եղբ. **Խաժակ**:
Լոյս շիրիմիդ, ննջէ՛ խաղաղութեամբ:





ԱՆՇԱՀԱԽՆԴԻՐ ՈՒ ՎԵՀԱՆՁՆ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆԸ (ԵՂԲ. ՆԵՐՍԷՍ ՃՈՒՊԱՆԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ)

Րաֆֆի Կեօզլյանեան ՊԵՅՐՈՒԹ

1 Յունիս 2022-ին, մեզմէ անակնկալօրէն Ֆիզիքապէս բաժնուեցաւ մեր բոլորին յարգանքը վայելող երէց Հ.Մ.Ը.Մ.ական եղբայր Ներսէս Ճուպանեան:

Բոլոր ալ տրամաբանականօրէն համոզուած ենք մահուան գաղափարին հետ եւ քաջ գիտենք, որ ուշ կամ կանուխ այդ իրականութեան դէմ յանդիման պիտի կանգնինք, որովհետեւ անկէ անկարելի է խուսափիլ:

Սակայն ոեւէ մէկը չէր կրնար պատկերացընել, որ Հայաստանի անկախութեան տօնին առիթով՝ 29 Մայիսին, Պուրճ Համուտի քաղաքապետարանի մարզադաշտի պատուոյ թրիպիւնին մէջ, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան կազմակերպած Մայիսեան շքեղ փառատօնին մեկնարկէն քանի մը վայրկեան առաջ, երբ բոլոր ներկաներուն սրտերը կը տրոփէին պարծանքի, հրճուանքի, յուզմունքի եւ հետաքրքրութեան խառն զգացումներով, մեզի հետ գրտնընդու ու երկու վայրկեան առաջ մեզի սիրալիր կերպով բարեւած, մեզի հետ համբուրուած եւ մեզ շնորհաւորած եղբայր Ներսէսին սիրտը յանկարծ պիտի դադրէր տրոփելէ:

Այո՛, մեզմէ միայն Ֆիզիքապէս բաժնուեցաւ ան: Արդարեւ, եղբայր Ներսէսին բաժանումը իր միութենական եղբայրներէն ու քոյրերէն, մահուան պատճառած սովորական բաժանում չէ եւ չի կրնար ըլլալ, քանի որ անոր ոգին ու շունչը միշտ ներկայ են մեզի հետ ու յաւերժ ներկայ պիտի մնան մեզի աւանդած իր յստակ պատգամին ու խորիմաստ կտակին ընդմէջէն:

Եղբայր Ներսէս օրինակելի Հ.Մ.Ը.Մ.ական մըն էր, որ օտարուած էր միութեան գաղափարախօսութիւնն ու տեսլականը իր շուրջիներուն յստակօրէն փոխանցելու կարողութեամբ: Այդ մէկը ան կը կատարէր ո՛չ քարոզներով, ո՛չ ալ լորձնաշուրթն դասախօսութիւններով (հակառակ որ այդ կարողութիւնն ալ ունէր), այլ՝ իր համեստ օրինակով, գործելաոճով ու մտերմիկ գրոյցներով:

Հաճելի գրողակից էր ան: Իրեն հետ ժողովական ըլլալը, աշխատիլն ու նոյնիսկ սեղանակից դառնալը անպայման դաստիարակիչ եւ տպաւորիչ բան մը ունէին իրենց մէջ: Կեանքի դէպքերն ու դրուագները սուր աչքով դիտելու եւ ապա զանոնք յարմար առիթներով հետաքրքրական ոճով պատմելու յատուկ շնորհքն ու ձիրքը ունէր ան: Իւրաքանչիւր պատ-



մըլածքի եւ գրոյցի ընդմէջէն կարելի էր կեանքի իմաստն ու բարձր արժէքները ամփոփող՝ դաստիարակիչ եզրակացութեան ու խրատի մը յանգէր ան:

Ծառայութեան ոգիի հոմանիչ եղած է եղբ. Ներսէս Ճուպանեան: Անտեսելով վարչականի կամ նոյնիսկ ատենապետի իր հանգամանքը՝ միշտ թեւերը սոթտած, համեստօրէն աշխատանքի կը լծուէր ու իր ազնիւ օրինակով իր շուրջիներն ալ կը խանդավառէր եւ զուարթօրէն գործի կը լծէր:

Վերոյիշեալ բոլոր յատկութիւններուն համար, 21 Յունուար 2012-ին, Հ.Մ.Ը.Մ.ի ձիւնիի

ակումբի «Ժան Ապաճեան» սրահի բացման հանդիսութեան ընթացքին, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը գինք արժանաւորապէս պատուեց միութեան «Ծառայութեան» շքանշանով:

Եղբայր Ներսէս գլխադիր ՄԱՐԴ էր: Տիրապար ամուսին մը, որ իր ակնյայտ կնամեծարութեամբ իր շուրջ գտնուող բոլոր ամուլներուն բարի օրինակ կը ծառայէր: Գուրգուրացող եւ հոգատար հայր մը, որուն շօշափելի փաստը անոր զաւակներուն քաղաքակիրթ եւ ազնիւ նկարագրի տէր ըլլալն է: Յարգալիր ու սիրող աներ մը, իր թոռնիկները պաշտող ու անոնց համար ամէնէն թանկագինն անգամ գոհող մեծ հայր մը: Իր շուրջիներուն հետ՝ մեծ թէ փոքր, յարգանքով վերաբերող ու բոլորին բարիք ցանկացող անձ մըն էր:

Այո՛, ՄԱՐԴ էր:

Սկզբունքային եւ հայրենասիրական հարցերու մէջ անզիջող, պահանջկոտ ու հաստատամիտ էր: Սրբագրութեան նպատակով իր կատարած նկատողութիւնները ան միշտ կ'արտայայտէր կառուցողական ու դրական ձեւով՝ հաճելի ու զուարթ ոճ գործածելով, հայրական գուրգուրանքն ու ջերմ զգացումները դարձնելով տիրական:

Սիրելի՛ եղբայր Ներսէս,

Դուն՝ Հ.Մ.Ը.Մ.ի համայնարանէն ու կեանքի փորձաքարէն յիշատակութեամբ շրջանաւարտ, քու օրինակելի ու վեհանձն միութենականի ու գլխադիր ՄԱՐԴու կեցուածքովդ, քու համեստ ու յարգալիր, մանաւանդ խանդավառ, յարատեւ եւ առոյգ գործունէութեամբդ միշտ պիտի մնաս քեզ ճանչցողներուն, հետդ աշխատածներուն, քու ներկայութիւնդ վայելածներուն եւ հետդ ժողովական եղածներուն, նաեւ անոնց ընդմէջէն՝ յաջորդող միութենականներուն կողմնացոյցը, որ զանոնք պիտի առաջնորդէ ու բարձրացնէ





ՄԵՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ

դէպի տիպար Հ.Մ.Ը.Մ.ականի անսակարկ ու անշահախնդիր կազմաւորում ու վեհագոյն տեսլական:

Եղբայր Ներսէս,
Ինչպէս կեանքդ, այդպէս ալ մահդ սովորական չեղաւ: Ասդեհական կեանքին վերջին հրաժեշտ տուիր քու սիրած ու պաշտած միութեանդ ամէնէն յատկանշական տօնակատարութեան խանդավառ մթնոլորտի մէջ՝ շրջապատուած քեզ իսկապէս սիրող ու յարգող Հ.Մ.Ը.Մ.ական երէց թէ երիտասարդ քոյր-եղբայրներով: Հայութեան տրոփող սիրտը հանդիսացող Պուրճ Համուտի մէջ սիրտդ դադրեցաւ տրոփելի, եւ մաքուր ու ջինջ հողիդ սաւառնեցաւ բարձրերը՝ մեկնելու դէպի անդեհական, ուրկէ պիտի հետեւիս մեզի թէ նոր սերունդի ներկայացուցիչներուն, որոնց տողանցքը դիտելու եւ անոնց խորիտ քայլերուն ի տես խանդավառուելու եւ միեւնոյն ատեն յուզուելու առիթը չունեցար այս տարի: Ամբողջ կեանք մը ճիգ չխնայեցիր հայութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի անունն ու կոչումը բարձր պահելու, Հայաստանի անկախութեան տօնակատարութեան ուրախ մթնոլորտի մէջ ալ բարձրացաւ հողիդ՝ երթալու դէպի յաւերժութիւն:

Քեզ ու քու օրինակելի տիպարդ անկարելի է մոռնալ: Յիշատակդ անթաւան պիտի մնայ:

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԵՐԿԱՍՏՂ, Ա. ԿԱՐԳ ԵՒ Բ. ԿԱՐԳ...

Ճարուակուած 23-րդ էջԵՆ



Այնուհետեւ, քանի մը տարւան փորձարկումէ ետք, անոնք քննարկման եւ բարեփոխման ենթարկուած են համա-Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետական յաջորդական համագումարներու ընթացքին եւ վերամշակման ենթարկուելով՝ արժանացած են Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան հաստատման եւ վաւերացման:

Սկառուական գիրքերու երկրորդ հրատարակութիւնները լոյս պիտի տեսնեն «Եղբ. Միհրան Շիմշիրեան սկառուական ֆոնտ»-ի նախաձեռնութեամբ: Մինչեւ հրատարակութիւնը, սակայն, գիրքերը կարելի պիտի ըլլայ օգտագործել էլեկտրոնային ձեւով, նոր ձեւաւորումով (էջադրող-ձեւաւորող՝ եղբ. Յովիկ Փամփալեան) եւ արդիական շունչով:

Տարի մը առաջ հրատարակուած էին սկառուական Կալուղ թաթիկ, Նորագիր եւ Նորընծայ գիրքերը: Պատրաստութեան մէջ է այս շարքին վերջինը՝ Միաստղի գիրքը:

Յայտնենք, որ «Եղբ. Միհրան Շիմշիրեան սկառուական ֆոնտ»-ը ստեղծուած է 2014-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ, բազմավաստակ Հ.Մ.Ը.Մ.ական եւ սկառուական աշխատանքներու մեծ երախտաւոր եղբ. Միհրան Շիմշիրեանի մահուն առիթով կատարուած նուիրատրութիւններով:

«ՄԱՐՁԻԿ»ԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

- Եղբ. Յակոբ Խաչատուրեան (Արեւելեան Մ.Ն.) 100 \$
- Քոյր Սեսիլիա Տաղլեան (Արժանօրին) 200 \$

Հ.Մ.Ը.Մ.Ի 26 ՇՐՋԱՆՆԵՐ, 111 ՄԱՄՆԱՃՈՒՂԵՐ ԵՒ ՄԻԱՒՈՐՆԵՐ

Հայաստան: «Գ. Յակոբեան» (Երեւան), «Յ. Հինգրիբեան» (Երեւան), «Վ. Զաքարեան» (Երեւան), Արմավեան (Արմավեան), «Հ. Առուսամեան» (Չարեմցաւան), «Վ. Չերազ» (Կիւմրի), «Շ. Քրիսեան» (Երեւան), «Վ. Չերազ» (Երեւան), «Վ. Բախտեան» (Արմաւիր), «Հրազդան» (Հրազդան), «Վ. Թոսովեան» (Էջմիածին), Մարտունի (Մարտունի), «Ա. Զոհրապեան» (Վեֆի), «Տ. Խոյեան» (Երեւան), «Դ. Վարդան» (Երեւան). Արցախ: Ստեփանակերտ. Վրաստան: Ախալքալաք, Ախալքալաք, Թիֆլիս. Ռուսիա: Մոսկուա. Լիբանան: Պէյրութ, Զահլէ, Թրիփոլի, Պ. Համուս, Այնմար, Զիւնի, Անթիլիաս, Ժրէճէ, Պաուսիէ, Ռաուսա. Սուրիա: Հալէպ, Իմամսկո, Լաթաքիա, Գամիշլի, Քեսապ. Յորդանան: Ամման. Պաղեստին: Երուսաղէմ, Հայֆա, Եսֆա. Ե իսպրոս: Գահիրէ, Ադեֆսանդրիա. Իրաք: Պաղատ. Քուէթ: Քուէթ. Կիպրոս: Նիկոսիա. Յունաստան: Աթէնք, Գոթիմիա, Սելանիկ. Ան լիա: Լոնտոն. Ասպրիա: Վիեննա. Ֆրանսա: Փարիզ, Վալանս, Մարսէյ. Հոլանդիա: Այմսթըր, Այմսթըր, Աննհեմ. Գերմանիա: Միւնիխ. Շուէդ: Սթոկհոլմ, Վեսթերոս, Ստերթելիա. Պուլկարիա: Սոֆիա, Թուսէ, Փրովսիվ, Վառնա, Շուտեն, Պուրկաս. Գանաստան: Մոնթրէալ, Համիլթըն, Թորոնթօ, Քեմպրիժ, Սենթ Գաթրինգ, Լաւալ, Վանկուվըր. Արեւմտեան Մ. Նահանգներ: Լոս Անճելըս, Սան Ֆրանսիսկօ, «Սասուն» (Ֆրեզնօ), Մոնթեպելլօ, «Ազատամարտ» (Փասսիմանա), «Արարատ» (Կլեմսկոյ), Օրէնն Գաուլթի, «Մասիս» (Սան Ֆրանսիսկօ), «Սեւան» (Սան Տիէկօ), «Արազ» (Ինլընս Էմփայր), «Անի» (Սանթա Գյարա), «Շանթ» (Քրեյքսթա Հոլիս), «Սիփան» (Պրայմեմ), «Արցախ» (Լաւալ Վեկաս), Ֆիլիպս, «Կարս» (Ուոլմաթ Քրիֆ) «Ջաւախք» (Նորթ Հոլիվուս), «Լոնի» (Մաքսամեթօ), «Կիլիկիա» (Սանթա Գյարիթա), «Հրազդ» (Արեւելեան Մ. Նահանգներ: Ուաշինգթոն, Պոսթըրն, Նիւ Եորք, Նիւ Չրքի, Շիֆալօ, Ֆիլադելֆիա, Տիքսոն, Փրովիքսըն, Ֆլորիսա, Ալպըրնի, Շարոթ, Մեքսիկո Հոլիս. Հարաւային Ամերիկա: Պուերթօ Այրէս, Գոնսոպա, Մոնթեվիսկօ. Ասպրալիա: «Անդրանիկ» (Սիսնի), «Արաքս» (Մեյլուոն), «Կամֆ» (Սիսնի), «Նաւասարդ» (Սիսնի), «Արարատ» (Սիսնի).



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ



Տեղի է ունեցել Համահայկական Խաղերի Համաշխարհային Կոմիտեի գործադիր մարմնի նիստը՝ նախագահությամբ Համաշխարհային Կոմիտեի նախագահ Իշխան Չաքարեանի, փոխ նախագահներ Ալպերթ Պոյաճեանի (Ա.Մ.Ն.), Ստեփան Տեր Պետրոսեանի (Լիբանան), Ռուանո Շառոյեանի (Հայաստան), գործկոմի անդամներ Հերմինե Տուզեանի (Ֆրանսա), Ասո Թոքաթեանի (Արգենտինա), Եփրեմ Պաղի (Թուրքիա), Վրեժ Շառոյեանի (Միքիա), Շահան Սեմերճեանի (Լիբանան): Նիստին ընթացքում քննարկվել են համահայկական ամառնային հերթական խաղերի կազմակերպման ու անցկացման հարցերը:

Որոշուել է.-

1. Համահայկական ամառնային 8-րդ խաղերն անցկացնել 2023 թ. Օգոստոսին Հայաստանի Հանրապետությունում:
2. Ամառնային 8-րդ խաղերի բացման հանդիսատար արարողությունը կազմակերպել Կիւմրիում:
3. Ամառնային խաղերն անցկացնել Շիրակի եւ Արագածոտնի մարզերի մի շարք քաղաքներում:
4. Ամառնային 8-րդ խաղերի եզրափակիչ հատուածն ու փակման հանդիսատար արարողությունն անցկացնել Երեւանում:

5. Առաջարկել Համահայկական Խաղերի Համաշխարհային Կոմիտեի քաղաքային մարմիններին՝ պատուիրակությունների կազմում ընդգրկել նաեւ հաշմանդամություն ունեցող հայագի մարզիկներին:

6. Համահայկական խաղերի գործադիր մարմնի յաջորդ նիստում քննարկել պարոլիմպիկ խաղերի կազմակերպման հարցը:

7. Լիազորել Համահայկական Խաղերի Համաշխարհային Կոմիտեի նախագահ Իշխան Չաքարեանին Հ.Հ. կառավարության հետ քննարկել ամառնային 8-րդ խաղերի անցկացման կազմակերպչական հարցերը:

8. Գործադիր մարմնի քննարկմանը եւ հաւանութեանը ներկայացնել նաեւ համահայկական ձմեռնային 2-րդ խաղերը 2024 թուականի Փետրուարին Ճազիրում անցկացնելու հնարավորությունը:

9. Վերոյիշեալ առաջարկներն ուղարկել գործադիր մարմնի անդամների հաստատմանը:

ՀԱՄԱՀԱՅԱԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՈՄԻՏԷ



ՀՈՒՆԳԱՐԻՈՅ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՀԱՅ ՊԱՏԳԱՄԱԲՈՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

ՀՄԸՄ-ի Ամմանի մասնաճիւղը, ի դէմս ատենապետուհի քոյր Ռաքել Մարգարեանի եւ եղբ. Սիմոն Պալեանի, Ուրբաթ, 25 Նոյեմբեր 2022-ի առաւօտեան, առիթը ունեցաւ հիւրընկալելու Հունգարիոյ խորհրդարանի հայ գաղութի ներկայացուցիչ՝ պատգամաւոր Նիկոլոս Յակոբեանը եւ իր աշխատակազմը:

Սրանք այցելեց Քրիստոսի մկրտավայր, ուր տեղի ունեցաւ ընդունելութիւն՝ վայրի գլխաւոր տնօրէն, ճարտարագէտ Ռուստոմ Մխճեանի կողմէ: Այցելութեան աւարտին խումբը ծանօթացաւ մկրտութեան վայրի այցելուներու նորակառոյց կեդրոնին:



**ԵՐԱԶԻ ՄԸ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ. ՁԵԻ ՈՒ ՄԱՐՄԻՆ ԱՏԱՑՈՂ
Հ.Մ.Ը.Մ.-ՑՐԱՆՍԻ ՄԱՐԶԱՀԱՄԱԼԻՐԻՆ ՄԱՆՐԱԿԵՐՏԸ**

